



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Youthpass

Զեռնարկ

ԱՐԺԵՎՈՐՎԱԾ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ,
ԱՐԺԵՎՈՐՎԱԾ ՈՒՐԻՇՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Youthpass-ում կարողությունների
տեսանելիության բարելավում



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
I. ԻՆՉՈՒՐ՝ ԱՅՍ ԶԵՆՆԱՐԿԸ: ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԿԱՐԻՔՆԵՐ	6
I.1 ՈՒՍՈՒՑՄԱՆ ՃԱՆԱՉՈՒՄ ԵՎ ՐՈՊՊԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ	6
I.2 ՆՇՈՒՄ ԱՇԽԱՏՈՒԽԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ «ԳՈՐԾԻՔԱՅՆԱՑՄԱՆ» ՄԱՍԻՆ	10
I.3 YOUTHPASS-Ն ՄԻՆՉ ԱՅԺՄ	10
II. ՈՒՍՈՒՑՄԱՆ, ՄՏՈՐՄԱՆ (ՌԵՖԼԵՔՍԻԱ) ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	12
II.1 ՄՏՈՐՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ	13
II.2 ՖԱՍԻԼԻՏԱՏՈՐԻ (ՎԱՐՈՂԻ) ԴԵՐԸ	26
II.3 ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	29
III. ԻՆՉՊԵՍ ԱՋԱԿՑԵԼ YOUTHPASS-Ի ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆԸ	30
III.1 «ԻՆՉ YOUTHPASS-Ը ՀԱՐԿԱՎՈՐ Է ԻՆՔՍ ԻՆՉ ՀԱՄԱՐ»	32
III.2 YOUTHPASS ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄ. ԱՆՁՆԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ ԱՅԼ ՆՊԱՏԱԿՆԵՐ	34
III.3 «ԴԻՄՈՒՄ ԵՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ»	36
III.4 «ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՄ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ»	41
III.5 «ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՄ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ»	44
IV. ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ	48
IV.1 ՄԵԹՈՂՆԵՐ	51
IV.2 ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԵՎ ՀՆԱՐՔՆԵՐ	108
IV.3 ԱՅԼ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ՝ ԱՅՍ ԹԵՄԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ	112
V. ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ	118
VI. ՍԱՆՏՈ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԵՎ YOUTHPASS-Ի ՄԱՍԻՆ	119



Ի ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ


ՀԱՐԳԵԼԻ ԸՆԹԵՐՑՈՂ,

Youthpass հավաստագրի վրա աշխատելն ինքնին կարևոր նշանակություն ունի. դա կրթական գործընթաց է, որը երիտասարդներին տալիս է ինքնագիտակցում, ավելի շատ վստահություն և կարողություն մտորելու այն մասին, թե ինչ կարող են նրանք սովորել հետագայում: Այնուամենայնիվ, Youthpass-ը կարող է նաև օգտակար լինել, երբ խոսքը վերաբերում է երիտասարդների կողմից ձեռք բերված կարողություններն ուրիշներին ներկայացնելուն:

ՍԱԼՏՈ վերապատրաստման և համագործակցության ռեսուրսային կենտրոնում (ՍԱԼՏՈ ՎԸ) մեզ հաճախ հարցնում են այն մասին, թե ինչպես կարելի է ապահովել Youthpass հավաստագրի արժեքն ու փոխանցելիությունն այն դեպքում, երբ երիտասարդը կարիք ունի ներկայացնելու իր կարողությունների և փորձի վերաբերյալ ապացույցներ: «Ինչպե՞ս կարող եմ ներկայացնել իմ ուսումնական արդյունքներն այնպես, որ դրանք վերածվեն վստահության միավորների կամ ճանաչվեն աշխատանքի դիմելիս», հարցնում են երիտասարդական աշխատողները:

Այս Ձեռնարկը կենտրոնանում է երկու հիմնական իրավիճակների վրա, որոնցում Youthpass-ի կրողները կարող են ցանկանալ ներկայացնել իրենց կարողությունները. առաջինը՝ աշխատանքի դիմելիս, և երկրորդը՝ ֆորմալ կրթության և վավերացման համատեքստում: Նախքան ուսուցման արդյունքների մասին հաղորդվելը, դրանք պետք է հավաքվեն ու բովանդակային կերպով գրանցվեն, ուստի մենք Ձեռնարկի մի մեծ բաժին հատկացրել ենք մտորմանը:

Մենք ձեզ առաջարկում ենք սկսել հետյալ կերպ՝ նստել մասնակցի (մասնակիցների) հետ և քննարկել այն իրավիճակները, որտեղ նրանք ցանկանում են օգտագործել Youthpass-ը՝ որպես իրենց կողմից ձեռք բերված կարողությունների ապացույց: Այս մտորման վարժությունը կարող է որոշել, թե Ձեռնարկի որ մասերն են առավել համապատասխան ձեզ համար: Ձեռնարկի կառուցվածքը ներկայացված է հաջորդիվ:



Ըուսանք, որ այս Ձեռնարկը և ճանապարհային քարտեզը կուղղորդեն ձեզ և այն մարդկանց (երիտասարդներին), ում հետ աշխատում եք, դեպի այնպիսի հավաստագիր, որը նրանք հպարտությամբ կներկայացնեն ուրիշներին:

Մաղթում են ձեզ հանելի ճանապարհորդություն:

Kristiina Pernits

ՍԱՆՏ Վերապատրաստման և համագործակցության ռեսուրսային կենտրոն



1 ԻՆՉՈՒ՞ ԱՅՍ ԶԵՌՆԱՐԿԸ: ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԿԱՐԻՔՆԵՐ

Darko Marković կոմից

1. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՃԱՆԱԶՈՒՄ ԵՎ ՌՈՂԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

¹ Declaration of the 2nd European Youth Work Convention: <https://pjp-eu.coe.int/en/web/youth-partnership/eywc-website-declaration>.

2015 թվականի Եվրոպական երիտասարդական աշխատանքի 2-րդ կոնվենցիայի եզրափակիչ հռչակագրում¹ նշվում է, որ «Երիտասարդական աշխատանքը ոչ թե շքեղություն է, այլ էկզիստենցիալ անհրաժեշտություն, եթե Եվրոպան ցանկանում է արդյունավետորեն վերացնել իր մտահոգությունները սոցիալական ներառման, համախմբվածության և հավասար հնարավորությունների, ինչպես նաև ժողովրդավարության ու մարդու իրավունքների արժեքներին նվիրվածության վերաբերյալ»: Ավելին, քանի որ ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցումը երիտասարդական աշխատանքի առանցքային սկզբունքներից մեկն է, զարմանալի չէ, որ Հռչակագիրը նաև կոչ է անում էլ ավելի զարգացնել. «այն ուսուցման ու նվաճումների ճանաչումը և վավերացումը, որոնք տեղի են ունենում երիտասարդական աշխատանքի միջոցով ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնական միջավայրերում»:

Երիտասարդական աշխատանքի և ոչ ֆորմալ ուսուցման արժեքն ավելի լավ ճանաչելու այս կոչը նորություն

չէ. ավելի շուտ, դա ևս մեկ կարևոր իրադարձություն է երկարատև գործընթացում, որը սկսվել է դեռևս 1998 թվականին: 1998 թվականի ապրիլին Բուխարեստում Եվրոպայի խորհրդի երիտասարդության հարցերով պատասխանատու Եվրոպացի նախարարների 5-րդ համաժողովի եզրափակիչ հռչակագիրը նույնպես անդամ պետություններին կոչ արեց ճանաչել երիտասարդների կողմից ոչ ֆորմալ կրթության միջոցով ստացված կարողությունները²: Թեև առաջընթացն ընդհանուր առմամբ դանդաղ է թվում, բայց ոչ ֆորմալ ուսուցման վավերացման հարցում բազմաթիվ բարելավումներ են տեղի ունեցել ինչպես կրթության, այնպես էլ երիտասարդության ոլորտներում³: 2012 թվականի դեկտեմբերին Եվրոպական խորհուրդը հրապարակեց Հանձնարարական⁴, որում անդամ պետություններին խնդրում էր ստեղծել ռազմավարություններ մինչև 2018 թվականը ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման վավերացման վերաբերյալ: Երիտասարդական ոլորտում, 2007 թվականին Youthpass սխեմայի գործարկման շնորհիվ, Եվրոպական երիտասարդական աշխատանքի կրթական արժեքն ու կենտրոնացումն ավելի մեծ տեսանելիություն ձեռք բերեցին, և դրա ազդեցությունն ամբողջ մայրցամաքում երիտասարդների ուսումնական նվաճումների վրա այժմ շատ ավելի շոշափելի է:

«Երիտասարդները գործելիս» ծրագրի հետազոտական վերլուծություն և մշտադիտարկում» (RAY) նախագիծն ընդգծեց, որ մասնակցությունը ԵՄ «Երիտասարդները գործելիս (YIA)» ծրագրերին նպաստում է ցկյանս ուսուցման համար բոլոր առանցքային/բանային կարողությունների զարգացմանը⁵: Այն նշում է. «Թեև առավել հստակ զարգացում գրանցվել է միջանձնային, սոցիալական և միջնաշակութային կարողությունների, ինչպես նաև օտար լեզվով հաղորդակցվելու ոլորտներում, զգալի զարգացում է գրանցվել նաև ձեռնարկատիրական ցիդի, քաղաքացիական կարողության, մշակութային իրազեկման և արտահայտման, ինչպես նաև ուսուցման կարողությունների («սովորել՝ ինչպես սովորել») ոլորտներում⁶: RAY-ի տվյալների հատուկ «ներառման վերլուծությունը» ցույց է տալիս, որ միջազգային երիտասարդական աշխատանքի ազդեցությունը կարողությունների զարգացման վրա ավելի ուժեղ է հատուկ կարիքներ ունեցող երիտասարդների համար⁷: Ընարավորություններ և պատշաճ աջակցություն տրամադրվելու դեպքում այս թիրախային խումբը, ըստ երևույթին, ավելի շատ օգուտ է քաղում մասնակցությունից, քան իրենց «ավելի լավ կարգավիճակով» հասակակիցները: 2015 թվականի հոկտեմբերից մինչև 2016 թվականի ապրիլ ընկած ժամանակահատվածն ընդգրկող RAY-ի մեկ այլ ուսումնասիրություն նույնպես ընդգծեց, որ մասնակցությունը Էրազմուս+ ծրագրերին մեծ ազդեցություն ունի ցկյանս ուսուցման առանցքային կարողությունների զարգացման վրա⁸:

² Partnership between the European Commission and the Council of Europe in the field of youth. [Getting there...](#) (2013)

³ Darko Marković and Gülesin Nemutlu-Ünal. [Unlocking Doors to Recognition](#) (SALTO Training & Cooperation Resource Centre, 2011). [Overview of recognition developments](#) (SALTO Training & Cooperation Resource Centre, 2016)

⁴ Council [Recommendation on the validation on non-formal and informal learning](#) (2012)

⁵ Key competences for lifelong learning: https://ec.europa.eu/education/resources-and-gործոքնեթ/document-library/key-competences-for-lifelong-learning_en

⁶ RAY. [Youth in Action makes a difference](#).(2013)

⁷ SALTO Inclusion Resource Centre and RAY [Impact of mobility on young people with fewer opportunities](#).

⁸ RAY (2015-2016): <https://www.researchyouth.eu/factsheet-key-competences>

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՑԿՅԱՆՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ*

Հարցվածների մեծ մասը «ի՞նչ համաձայն է» կամ «համաձայն է», որ «Էրազմուս+ Երիտասարդները գործելիս» ծրագրին մասնակցելով նրանք բարելավել են իրենց կարողությունները...

Ակ1 ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎՈՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ

... քննարկումներում վստահ ասել այն, ինչ մտածում եմ: **88 %**

Ակ2 ՕՏԱՐ ԼԵԶՎՈՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ

... հաղորդակցվել այլ լեզվով խոսող մարդկանց հետ: **93 %**

Ակ3 ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

... տրամաբանորեն մտածել և եզրակացություններ անել: **79 %**

Ակ5 ՍՈՎՈՐԵԼ՝ ԻՆՉՊԵՍ ՍՈՎՈՐԵԼ

... ինքնուրույն պլանավորել և իրականացնել սեփական ուսուցումը: **73 %**

Ակ6 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

... լեզու գտնել մարդկանց հետ, ովքեր տարբեր տեսակետներ ունեն **95 %**

... բանակցել համատեղ լուծումների շուրջ, երբ կան տարբեր տեսակներ, **90 %**

... համայնքի կամ հասարակության շահերից բխող որևէ բանի հասնել: **88 %**

Ակ7 ՆԱԽԱՁԵՌՆԱԿԱՆ և ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԶԻՂ

... բացահայտել իմ անձնական կամ մասնագիտական զարգացման հնարավորությունները, **86 %**

... գաղափար մշակել և կյանքի կոչել այն: **85 %**

Ակ8 ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄ

... ստեղծագործաբար կամ զեղարվեստորեն ինքնարտահայտվել **80 %**

N = 16.373 մասնակից. հարցումն անցկացվել է 2015 թվականի հոկտեմբերից 2016 թվականի ապրիլ ընկած ժամանակահատվածում:

Source: RAY research factsheet

Ելնելով նրանից, որ երիտասարդական ոլորտում ուսուցումը վերաբերում է ոչ միայն ցլյանս ուսուցմանը, այլև քաղաքացիական հասարակությանը, այն և՛ ազդում է անհատների անձնական ու սոցիալական զարգացման վրա, և՛ բարելավում է նրանց աշխատունակությունը: 2013 թվականին 40 երկրներում իրականացված Եվրոպական երիտասարդական ֆորումի ուսումնասիրությունը⁹ հստակ ցույց է տվել, որ կա համընկնում գործատուների կողմից պահանջվող հմտությունների և երիտասարդական աշխատանքի ծրագրերին մասնակցելու միջոցով զարգացված հմտությունների միջև: Մասնավորապես, զեկուցում ասվում է, որ «առաջին 6 հմտություններից և կարողություններից, որոնք առավել հաճախ նշվում են որպես պահանջված գործատուների կողմից, հինգն այն հմտությունների թվում են, որոնք հիմնականում զարգացվում են երիտասարդական կազմակերպություններում ներգրավվածության միջոցով, օրինակ՝ հաղորդակցման հմտություններ, կազմակերպչական/պլանավորման հմտություններ, որոշումներ կայացնելու հմտություններ, թիմային աշխատանքի հմտություններ, վստահություն/ինքնակառավարում և այլն»: Մեկ այլ ուսումնասիրություն, որը կենտրոնացված էր բացառապես Եվրոպական կրթական Ծառայության (ԵԿԾ) ծրագրերում կարողությունների զարգացման վրա¹⁰, նույնպես էական համընկնում է գտել գործատուների կողմից արժևորվող կարողությունների և ԵԿԾ կամավորների կողմից զարգացվող կարողությունների միջև:

Ինչ վերաբերում է ֆորմալ կրթության վրա ազդեցությանը, ապա երիտասարդական աշխատանքը դրական ազդեցություն ունի ուսանողների նվաճումների վրա՝ խթանելով ոչ կոգնիտիվ այնպիսի հմտություններ, ինչպիսիք են համառությունը, մոտիվացիան, միջանձնային հմտությունները և ինքնարդյունավետությունը¹¹ (Շերնոֆ և Լոու Վանդել, 2007թ., 2008թ.): Հետազոտությունը նաև ցույց է տալիս, որ կարևորը երիտասարդական աշխատանքի որակն է. երիտասարդական աշխատանքի փորձի որակը կարող է ավելի մեծ դրական ազդեցություն ունենալ ակադեմիական կատարողականի վրա, քան երիտասարդական ծրագրերում մասնակցությունների քանակը (Շերնոֆ, 2010թ.): Ավելին, երիտասարդական աշխատանքը կարևոր դեր է խաղում այն երիտասարդների համար, ովքեր դուրս են մնացել կրթական և այլ վերապատրաստման համակարգերից¹²: Այս ուղիները կարող են անհատներին տանել հետո՝ դեպի ֆորմալ կրթություն կամ պարզապես նոր կարողությունների (և/կամ նոր որակավորումներ) ձեռք բերում ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման միջոցով:

Թվում է, թե այսօր կան բազմաթիվ ապացույցներ, որ երիտասարդական աշխատանքը զգալի ազդեցություն ունի երիտասարդների կարողությունների զարգացման վրա¹³, ինչը հաստատում է նաև ազգային հետազոտությունների աճող ծավալը:^{14 15} Այնուամենայնիվ, հաճախ բացակայում են այս կարողություններն այլ ոլորտներ (հիմնականում կրթություն և աշխատանք) «փոխանցելու» եղանակներն ու գործիքները: Հավանաբար այն բանից հետո, երբ երիտասարդական աշխատողները և երիտասարդները հասնում են ինքնաճանաչման որոշակի մակարդակի, անհրաժեշտություն է առաջանում գտնել ուղիներ՝ ապահովելու երիտասարդական ոլորտում զարգացված կարողությունների և՛ «հայեցակարգային փոխանցելիությունը» (համոզվելով, որ նույն բառերին վերագրվում է նույն իմաստը), և՛ «գործնական փոխանցելիությունը»՝ սոցիալական այլ համատեքստերում դրանց կիրառման միջոցով: Հուսով ենք, որ այս Ձեռնարկը նոր ուղիներ և երթուղիներ կտրամադրի Youthpass-ի օգտատերերին՝ նման ճանաչման հասնելու համար:

⁹ Manuel Souto-Otero, Daniela Ulicna, Loraine Schaepekens, Viktoria Bognar. Study on the impact of Non-Formal Education in youth organisations on young people's employability (European Youth Forum, 2013)

¹⁰ Özgehan Senyuva. EVS Competences for Employment (2014), EVS Competences for Employment Full Survey Report (SALTO Inclusion and SALTO South-East Europe Resource centres)

¹¹ Shernoff and Lowe Vandell. Youth Engagement in After-School Programs: A Perspective from Experience Sampling (2007, 2008), David J. Shernoff (2010)

¹² Allison Dunne, Daniela Ulicna, Ilona Murphy, Maria Golubeva. Working with young people: the value of youth work in the European Union (European Commission, 2014) p. 145

¹³ *ibid* , p. 139-140

¹⁴ Hidden competences – Study results: Developing Competences Through Work and International Mobility (2013), accessible here: https://www.cmepius.si/wp-content/uploads/2015/09/Sari-Turunen-Zwinger_Hidden-Competences-Study-Results.pdf.

¹⁵ Sever Džigurski and Darko Marković. Study of the impact of NFE in youth work (NAPOR, 2014)

2. ԵՇՈՒՄ ԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ «ԳՈՐԾԻՔԱՅՆԱՑՄԱՆ» ՄԱՍԻՆ

Երիտասարդական աշխատանքի և ոչ ֆորմալ ուսուցման ավելի լավ ճանաչման կոչը վերաբերում է ոչ միայն աշխատունակությանը: Ընդհանուր առմամբ, որ երիտասարդական աշխատանքը և ոչ ֆորմալ ուսուցումը ինքնին արժեք են ներկայացնում՝ միաժամանակ չափազանց կարևոր դեր խաղալով երիտասարդների ներառման, բարեկեցության, ընդհանուր զարգացման և, ի վերջո, հզորացման հարցում: Սրանք կրթական գործելակերպի կարևոր ասպարեզներ են, որոնք արժանացել են իրենց պատշաճ սոցիալական ճանաչմանը թե՛ իրենց կարգավիճակի, և թե՛ ֆինանսական ներդրումների մասով:

Այնուամենայնիվ, երբ երիտասարդների շրջանում գործազրկությունը սկսեց կտրուկ աճել ամբողջ Եվրոպայում, աշխատունակությունը որպես թեմա շատ կարևոր տեղ զբաղեցրեց քաղաքական օրակարգում: Լուծումներ փնտրվել են տարբեր ոլորտներում, այդ թվում՝ երիտասարդական աշխատանքում: Կարևոր է ընդգծել, որ երիտասարդական աշխատանքն ինքնին չի կարող և չպետք է լինի երիտասարդների գործազրկության միակ լուծումը, քանի որ աշխատատեղերի սակավությունը համակարգային լուծման կարիք ունի, և այլ քաղաքական դաշտեր պետք է ավելի մեծ ներդրում ունենան այս հարցում: Այնուամենայնիվ, ճիշտ է, որ երիտասարդների մասնակցությունը (տեղական և միջազգային) երիտասարդական աշխատանքի միջոցառումներին զարգացնում է կարևոր կարողություններ, որոնք կարող են օգտակար լինել նրանց համար աշխատաշուկայում, ձեռներեցության կամ, գուցե, ֆորմալ կրթության ոլորտներում:

Եթե դուք երիտասարդական աշխատող եք, ապա հենց դուք պետք է մշակեք այս հարցերի առնչությամբ դիրքորոշում և հաշվի առնեք, թե ինչ է նշանակում այդ դիրքորոշումը ձեր դերի համար: Թեև ձեզ հարկավոր չէ դառնալ աշխատանքային խորհրդատու կամ կարիերայի հարցերով քույր, այս ավելի մեծ պատկերը հիշելը և աշխատանքի հետ կապված խնդիրների վերաբերյալ գիտելիքներ ու իրազեկվածություն ձեռք բերելը կարող է օգտակար լինել: Եվ ոչ, այս Ձեռնարկը նպատակ չունի «գործիքայնացնելու» երիտասարդական աշխատանքը: այն նախատեսված է օգնելու երիտասարդական աշխատողներին արդյունավետորեն արձագանքելու այն երիտասարդների կարիքներին, որոնց հետ նրանք աշխատում են:

3. YOUTHPASS-Ը ՄԻՆՉ ԱՅԺՄ

Youthpass-ը ներդրվել է 2007 թվականին ԵՄ «Երիտասարդները գործելիս (YiA)» ծրագրի շրջանակներում՝ որպես ծրագրի կողմից աջակցվող միջոցառումների ընթացքում ձեռք բերված ուսումնական արդյունքները ճանաչելու գործիք: Մասնակիցներն օգտագործում են Youthpass հավաստագրերը՝ նկարագրելու այն, ինչ սովորել են իրենց ծրագրի ընթացքում: Այս կերպ Youthpass-ը ոչ միայն աջակցում է մասնակիցներին

իրենց անձնական ուսուցման գործընթացի մասին մտորելու հարցում, այն նաև նպաստում երիտասարդական աշխատանքի սոցիալական ճանաչմանը և բարելավում երիտասարդների աշխատունակությունը, քանի որ նրանք կարող են գրանցել իրենց կողմից ձեռք բերված կարողությունները: 2007 թվականից մինչև 2019 թվականի հոկտեմբերն ընկած ժամանակահատվածում շնորհվել է ավելի քան մեկ միլիոն Youthpass հավաստագիր:


2012-2013 թվականներին Եվրոպական հանձնաժողովն իրականացրել է իր Youthpass-ի ազդեցության ուսումնասիրությունը¹⁶՝ գնահատելու համար սխեմայի ազդեցությունը ԵՄ YiA ծրագրի մասնակիցների վրա, ծրագրին մասնակցող կազմակերպությունների աշխատանքը, ինչպես նաև երիտասարդական աշխատանքի և ոչ ֆորմալ ուսուցման ճանաչումը: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ երիտասարդները և երիտասարդական աշխատանքի կազմակերպությունները բարձր են գնահատում Youthpass-ի ինքնագնահատման ասպեկտը: Youthpass-ի ներդրումն անձանց ուսումնական նվաճումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման և սեփական կարողությունների ներկայացման գործում հաստատվել է նաև RAY-ի մշտադիտարկման հետազոտության արդյունքներով¹⁷, որում Youthpass-ի հետ կապված մտորման կամ ինքնագնահատման մեջ ներգրավված մասնակիցների 83%-ն ասել է, որ այն օգնել է բարձրացնել իրենց իրազեկվածությունն իրենց զարգացման և ուսուցման վերաբերյալ իրենց ծրագրի ընթացքում: Ծրագրի ավարտից 2-11 ամիս հետո անցկացված հարցման ժամանակ Youthpass ունեցողներ 30%-ը արձանագրել է, որ այն կիրառել է տարբեր համատեքստերում, մինչդեռ 69%-ը այն գնահատել է որպես օգտակար գործիք տվյալ նպատակների համար: Ազդեցության ուսումնասիրությունը նույնպես ցույց է տվել, որ շատ երիտասարդների համար իրենց ինքնագնահատման արդյունքները գրի առնելը մարտահրավեր է, որի համար նրանք աջակցության կարիք ունեն: Երիտասարդական աշխատողները նաև աջակցություն և ուղղորդում խնդրեցին, որպեսզի կարողանան օգնել երիտասարդներին կատարել իրենց ինքնագնահատումը:

Այս հրատարակման նպատակն է երիտասարդական աշխատողներին, մենթորներին և դասընթացավարներին տալ գաղափարներ, ռեսուրսներ և գործիքներ, որոնք կօգնեն մասնակիցներին արտահայտել իրենց ուսումնական արդյունքներն այնպես, որ դրանք պատշաճ կերպով ներկայացվեն այլ մարդկանց: Սա գործընթաց է, որը չի մեկնարկում ծրագրի ավարտից հետո, այլ ենթադրում է, որ մասնակիցները ուսումնառության զարգացման ողջ ընթացքում համակարգված կերպով հետևեն և մտորեն իրենց ուսուցման մասին: Մտորման փուլերի ընթացքում գրառումներ կատարելը կարող է շատ օգտակար լինել՝ ծրագրի ավարտից հետո մասնակիցներին հիշեցնելու համար, թե ինչ են նրանք սովորել: Այնուամենայնիվ, ուսուցման արդյունքները դեռևս պետք է ձևակերպվեն այնպես, որ դրանք հասկանալի լինեն միջազգային երիտասարդական աշխատանքային համայնքից դուրս գտնվող մարդկանց համար:

Այնուամենայնիվ, միայն Youthpass հավաստագիրը լրացնելու նպատակով չէ, որ երիտասարդները պետք է գտնեն ճիշտ բառեր՝ նկարագրելու իրենց ուսումնական արդյունքներն ու կարողությունները: Այսօր, և հատկապես հետագայում, սեփական կարողությունները նկարագրելու ունակությունը կարևոր հմտություն է, որն աշխատանք փնտրելիս կամ բիզնես սկսելիս երբեմն ավելի արժեքավոր է, քան հենց հավաստագիրը: Այսպիսով, եկեք գտնենք ճիշտ լեզուն՝ նկարագրելու մեր կարողությունները:

¹⁶ Youthpass Impact Study: <https://www.youthpass.eu/en/about-youthpass/youthpass-impact-study/>

¹⁷ Exploring Erasmus+: Youth in Action. Effects and outcomes of the ERASMUS+: Youth in Action Programme from the perspective of project participants and project leaders (2017), accessible here: <http://www.researchyouth.eu/results-erasmus-youth-in-action>



II ՈՒՍՈՒՑՈՒՄ. ԶԵՐ
ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՄՏՈՐՈՒՄ ԵՎ ԳՐԱՆՑՈՒՄ

Paul Kloosterman կողմից

1. ՄՏՈՐՈՒՄ (ՌԵՑԼԵԲՍԻԱ) ԵՎ ՌԻՍՈՒՑՈՒՄ

Ուսուցման որոշ ձևեր ավելի հեշտ են մտորման համար, քան մյուսները: Ձեր սեփական հացը թխել սովորելը հավանաբար կպահանջի որոշ ժամանակ, մի փոքր ջուր և մի շարք բաղադրիչներ, բայց դա կարելի է անել կոնկրետ քայլերով: Այս քայլերի միջև ընկած ժամանակահատվածում մարդը մտորում է գործընթացի տարբեր փուլերի վերաբերյալ և պարզում, որ կարևոր է խմորը երկար հունցել, որ խմորը պետք է բարձրանա նախքան այն ջեռոց դնելը, և որ ջեռոցի ջերմաստիճանը հացն ավելի արագ թխելու համար բարձրացնելը լավ գաղափար չէ: Սրանք բավականին պարզ մտորումներ են, որոնք մշտապես տեղի են ունենում այն բաների շուրջ, որոնք մենք սովորում ենք կյանքում: Մարդուն բնորոշ է մտորել՝ հաջողորդ անգամ ավելի լավ գործելու համար. բացի դրանից, այս տեսակի մտորումը շատ ժամանակ չի պահանջում: Իրականում, այն տեղի է ունենում զրեթե ինքնաբերաբար:

Եվրոպական երիտասարդական ծրագրերում երիտասարդների ուսուցման գործընթացն այլ է և ավելի բարդ: Երիտասարդական փոխանակումների, կամավորական ծրագրերի, վերապատրաստման դասընթացների և այլ տեսակի միջոցառումների մասնակիցների ուսուցումը հաճախ առավելապես վերաբերում է անձնական զարգացմանը, սոցիալական հմտություններին, անձնական իրազեկվածությանը, ինքնավստահությանը և այլն: Սրանք բոլորն այն հմտություններն են, որոնք ձեռք չեն բերվում մի քանի պարզ քայլ անելով: Մենք չենք կարող նշել ցուցակում, որ ունենք դրանք և չենք կարող ասել «Այժմ ես լիովին գիտակից եմ», կամ «Ինքնավստահություն արված է»:

Մեր սեփական վարքագծի, մեր մոտեցումների, ուրիշների հետ մեր հարաբերությունների և կյանքում մեր անձնական նպատակների մասին իմանալը գործընթաց է, որը երբեք չի ավարտվում: Այստեղ մենք անում ենք մեկ քայլ առաջ, իսկ երբեմն՝ հետ, և սահմանում նոր հարցեր և նոր նպատակներ: Նաև ավելի դժվար է որոշել այն ճշգրիտ պահը, երբ մենք անցնում ենք այնպիսի ուսուցման գործընթաց, որը վերաբերում է անձնական զարգացմանը, քանի որ այն տեղի է ունենում այն իրավիճակներում, որոնք հաճախ պլանավորված չեն: Ծրագրի ընթացքում չի անցկացվում հաստատակամության վերաբերյալ որևէ դասընթաց, որից հետո մասնակիցներն իմանում են, թե ինչպես պետք է հաստատակամ լինել: Ավելի շուտ, նրանք ծրագրի ընթացքում կարող են հայտնվել տարբեր իրավիճակներում (սուրճի ընդմիջման ժամանակ, կամ զուցե այլ մասնակիցների հետ երեկոյան ժամանցի ընթացքում), որտեղ նրանք ավելի վճռական են գործում: Հնարավոր է, որ նրանք իսկապես պլանավորել են դա, բայց երբեմն դա կարող է պարզապես տեղի ունենալ, և նրանք դա գիտակցեն միայն այդ պահին կամ մեկ օր անց:

Այս ամենն ավելի է բարդացնում մտորումը, բայց, միևնույն ժամանակ, կարևոր է սովորելու համար: Այն ոչ միայն օգնում է մեզ իրազեկ լինել մեր ուսուցման վերաբերյալ, այլև սովորեցնում, թե ինչպես է այդ ուսուցումը տեղի ունեցել: Այլ կերպ ասած, մտորումը մի կողմից օգնում է գրանցել ուսումնական փորձը, իսկ մյուս կողմից՝ նախապատրաստվել այդ գործընթացը շարունակելուն:

Վերջապես, մեր սովորածը բառերով արտահայտելը մեզ հնարավորություն է տալիս փոխանցել այն ուրիշներին: Այս վերջին կետը հենց այն է, ինչի համար մտորումն այդքան կարևոր է. համարվում այս հրատարակման մեջ այն հուշում է մեզ, թե ինչպես փոխանցել մեր ուսումնական նվաճումներն ուրիշներին, և թե ինչպես կարող ենք մոտենալ մտորմանը որպես ուսումնական գործընթացի կարևոր մասի:

ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԶԵՐ
ՈՒՍՈՒՑՈՒՄՆ ՈՒՐԻՇՆԵՐԻՆ

ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԶԵՐ
ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ

ԻՐԱԶԵԿ ԼԻՆԵԼՈՒ ԶԵՐ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ԻՆՉՈՒ՞Մ ՄՏՈՐԵԼ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՕԳՆԵԼՈՒ ԶԵՉ ՊԼԱՆԱՎՈՐԵԼ ԶԵՐ
ՇԵՏԱԳԱ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

ԳՐԱՑԵԼՈՒ ԱՅՆ,
ԻՆՉ ՍՈՎՈՐԵԼ ԵՔ

ՉԱՍԿԱՆԱԼՈՒ, ԹԵ ԻՆՉՊԵՍ
ԵՔ ՍՈՎՈՐՈՒՄ

ՄՏՈՐԵԼԸ ԵՎ ԳՐԻ ԱՌՆԵԼԸ

Փորձն օրվա կամ շաբաթվա վերջում զրի առնելն օգնում է սովորողներին հիշել, թե ինչ են նրանք արել և հետ նայել այդ փորձին որոշակի հեռավորությունից:

Գրելը ինքնին կարող է մտորման հիանալի միջոց լինել: Երբ սովորողները նստում են մենակ և գրում, նրանք վերհիշում են իրենց փորձառությունները և ներկայացնում դրանք բառերով: Թեև սա թույլ է տալիս նրանց ժամանակ հատկացնել վերհիշելուն, այն հաճախ նոր բան է ավելացնում փորձին: Երիտասարդական փոխանակման մասնակիցը, ով մասնակցել է տարբեր գործողությունների վարժություններին, ունեցել է բազմաթիվ քննարկումներ և հասակակիցների հետ թիմային աշխատանք, արդեն իսկ կունենա մնայուն տպավորություններ այդ ամենից: Այնուամենայնիվ, ավելի ուշ նստելը և այն վերհիշելը կարող է նոր պատկերացումներ տալ: Սեփական տպավորությունները, գաղափարները, եզրակացությունները և հարցերը զրի առնելն օգնում է նրան մտորել և սովորել:

Լավ նորությունն այն է, որ մասնակիցները դա անում են իրենց համար, այսինքն՝ գեղեցիկ շարադրանքի խնդիր չկա, ուղղագրական սխալները խնդիր չեն, և որ այս ամենն ընդունելի է, եթե նրանք կարող են կարդալ իրենց սեփական ձեռագիրը: Իհարկե, կան շատ մարդիկ, ովքեր սիրում են կատարյալ նախադասություններ գրել և քրտնաջան աշխատում են ամենահարմար բառերը գտնելու համար, և դա նույնպես հրաշալի է: Սակայն «գորղները» միակը չեն, ովքեր կարող են մտորել և գրել այդ մասին: Ոմանց բավարար է որոշ բառեր խզբզելը, նկարելը, էջի տարբեր մասերում տարբեր գույներով նշումներ կատարելը, բանաստեղծություն գրելը կամ պատկերներ օգտագործելը: Այս ամենը կիրառելի է, քանի դեռ այն օգնում է նրանց մտածել տեղի ունեցածի մասին, նայել իրենց կողքից և իրենց ներաշխարհին, և տեսնել, թե ինչպես է փորձը փոխել իրենց. այլ կերպ ասած՝ մտորել: Ըարկ է ավելացնել, որ սա աշխատում է, եթե այդ կերպով արված նշումները հասկանալի են լինում ամիսներ անց դրանք վերանայելիս: Այդ պահին կարող է պատահել այնպես, որ նրանք ամեն ինչ այլ տեսանկյունից տեսնեն և գան նոր պատկերացումների և ուսումնական արդյունքների:

Նշումներ անելու և սեփական փորձի մասին մտորելու ավելի ավանդական միջոց է սովորական օրագիր օգտագործելը: Դատարկ էջերով փոքր գիրքը և մատիտն այն ամենն է, ինչ անհրաժեշտ է: Բայց կարելի է նաև օգտագործել ավելի մեծ գիրք և Ֆլումաստերներ, ինչպես նաև մատիտ, գուցե նաև սոսինձ՝ նկարներ փակցնելու համար, և այլ նյութեր: Գուցե դա այլևս նորաձև չէ, բայց շատ երիտասարդներ նախընտրում են ունենալ իրենց օրագիրը և այն ամենուր տանել իրենց հետ՝ այն բառերով, պատմություններով, մտքերով, նկարներով, բանաստեղծություններով և այլ բաներով լցնելու համար, երբեմն նստել մի լուռ վայրում և գրել իրենք իրենց համար:

Փոքր-ինչ պակաս ավանդական գործելակերպ, բայց շատ առումներով նույնանման. նստել համակարգչի առջև և օգտագործելով Word-ը ստեղծել էլեկտրոնային օրագիր: Կան նաև մեծ թվով (հիմնականում անվճար)

կայքեր, վեբ գործիքներ և հավելվածներ՝ առցանց օրագիր վարելու համար: Կան տարբեր տեսակի ձևաչափեր և հնարավորություններ: Պարզապես մուտքագրեք «առցանց օրագիր» որոնման տողում: Շատ գործիքներ թույլ են տալիս օգտվողներին ավելացնել նկարներ և նույնիսկ տեսահոլովակներ: Նրանց անձնական օրագիրը, կարծես, միշտ նրանց հետ է: Այս օրագրային գործիքներից շատերը կարող են խիստ գաղտնի պահվել կամ կիսվել որոշ մարդկանց կամ նույնիսկ ամբողջ աշխարհի հետ: Վերջին տարբերակը կարող է իրականացվել նաև, եթե մարդն օգտագործում է բլոգը որպես օրագիր: Թեև գրառումներն այլևս մասնավոր չեն, ինչը կարող է սահմանափակել այն, թե ինչ և ինչպես է գրվում, դա հիանալի ձևաչափ է այն մարդկանց համար, ովքեր սիրում են կիսվել իրենց մտքերով և փորձով: Բլոգերը նաև թույլ են տալիս գրողներին ստանալ կարծիքներ ընթերցողներից, ինչը կարող է օգտակար լինել:

Այս հրատարակման մեջ մենք շատ ենք խոսում այն մասին, թե ինչպես բացահայտել և ներկայացնել կոնկրետ ուսումնական արդյունքները ուրիշներին: Մտորումն այն փուլն է, որը գալիս է ներկայացնելուց առաջ: Սա չի նշանակում, որ օրագիրը պետք է լինի ուսումնական արդյունքների երկար ցուցակ՝ «այժմ ես գիտեմ սա», «այժմ ես կարող եմ անել դա» և այլն: Օրագրի ձևաչափը թույլ է տալիս, որ առաջանան հարցեր և մշակվեն գաղափարներ: Այդ առումով մտորումն ավելի շատ հենց այս գործընթացի նկարագրությունն է: Ուսումնական արդյունքների նկարագրության վրա աշխատելիս՝ օրագրում տեղ գտած բոլոր բառերը, պատմությունները, նախադասությունները, պատկերներն ու նկարները շատ օգտակար կլինեն գրողի համար՝ իր սովորածը գիտակցելու առումով:



Սկսելը

Երիտասարդները կարող են որոշակի օգնության կարիք ունենալ իրենց օրագիրը գրելու և կազմելու հարցում: Ստորև բերված են մի քանի օրինակներ և գործիքներ, որոնք կարող են օգնել:

Հաճախ հանդիպող հարցեր

«Ես» ձևաչափով հարցերը կարող են օգտակար լինել մտորման և գրելու գործընթացը սկսելու համար.

- Ի՞նչն ինձ ամենից շատ դուր եկավ այսօր:
- Ի՞նչն ինձ վրա թողեց ամենամեծ տպավորությունը:
- Ի՞նչ հետաքրքիր կոնտակտներ ձեռք բերեցի:
- Ո՞ր հարցում ինքս ինձանից գոհ եղա այսօր:
- Ի՞նչն էր ինձ այսօր շփոթեցրել:
- Արդյո՞ք ունեցել եմ «Էվրիկայի» պահ:
- Ի՞նչն էր դժվար ինձ համար:
- Ինչպե՞ս եմ վարվել դժվար իրավիճակներում:
- Ի՞նչ բացահայտեցի:
- Ի՞նչ նոր գաղափարներ հայտնվեցին իմ գլխում:
- Կա՞ որևէ բան, որը կցանկանայի այլ կերպ անել հաջորդ անգամ:
- Ի՞նչ նոր հարցեր ունեմ:
- Ի՞նչ նոր ծրագրեր եմ մշակել այսօր:
- Ու՞մ հետ եմ ուզում կրկին խոսել:
- Ո՞րն է այսօրվա փոխաբերությունը:
- Ի՞նչ գնահատական կնշանակեի այս օրվան:
- Եթե այս օրը լիներ կենդանի/մեքենա/երաժշտական գործիք, ապա ինչպիսի՞:

(Ի դեպ, ոչ բոլոր այս հարցերը պետք է օգտագործվեն: Պարզապես ընտրեք մի քանիսը):

Սկսենք

Մտերի դասավորում՝ երեք հարցի միջոցով

Այս մեթոդն օգնում է վերլուծել փորձն այնպես, որ փաստերը հնարավոր լինի առանձնացնել զգացմունքներից: Հաճախ, հետ նայելով իրավիճակին, մարդը հակված է խառնել տեղի ունեցածը իր հուզական արձագանքի հետ, ինչը կարող է ազդել մարդու ընկալման վրա:

Հարկավոր է պատասխանել այս երեք հարցերին՝

- Ի՞նչ պատահեց:
- Ինչպե՞ս զգացի:
- Ի՞նչը կցանկանայի այլ կերպ անել ապագայում:

Այս վարժությունն օգնում կարևոր է հարցերին մեկ առ մեկ անդրադառնալ և ապահովել, որ առաջին հարցին պատասխանելուց հետո սովորողները զրի առնեն միայն կատարվածը: Սա հեշտ է թվում, բայց հաճախ բավական դժվար է սահմանափակվել միայն փաստերով: Օրինակ՝ «Գեղեցիկ արևոտ օր էր, և շատ մարդիկ միացան մեր միջոցառմանը» նախադասությունը լավ պատասխան չէր լինի առաջին հարցին: «Միջոցառման ընթացքում արևը շողում էր, 24 աստիճան էր, և 46 հոգի մասնակցում էր միջոցառմանը», ճիշտ ձև կլիներ նկարագրելու, թե ինչ է տեղի ունեցել իրականում: Անցնելով երկրորդ հարցին, հնարավոր պատասխաններից մեկը կլինի. «Ես իսկապես վայելում էի տաք եղանակը և զարմացա, որ այսքան շատ մարդիկ միացան միջոցառմանը»: Երրորդ հարցն ավելի գնահատողական է և օգնում է մասնակցին մտածել այլընտրանքային մոտեցումների և պատասխանների մասին: Գործընթացը հեշտ չէ, բայց սա մտորելու հետաքրքիր եղանակ է:

YOUTHPASS ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

«Այն ավելին է, քան հավաստագիր». այն է, ինչ շատերը կասեն, երբ իրենց հարցնեն Youthpass-ի մասին: Ինչ-որ առումով հավաստագիրը վերջին փուլն է՝ արդյունքը: Այնտեղ հասնելու համար մասնակիցների ուսուցման գործընթացն անցնում է երիտասարդական փոխանակման, վերապատրաստման դասընթացի կամ կամավորական աշխատանքի ընթացքում: Այսպես կոչված «Youthpass գործընթացը» ծնվել է այդ ուսուցման գործընթացը զիտակցված փորձի վերածելու գաղափարից, որի ընթացքում երիտասարդները զիտակցում են, որ սովորում են, ընտրում են այն, ինչ ցանկանում են սովորել, ուսումնասիրում են սովորելու տարբեր ուղիներ, զգում պատասխանատվություն սեփական ուսուցման գործընթացի նկատմամբ և գնահատում այդ գործընթացը: Youthpass գործընթացը լիովին համապատասխանում է ցկյանս ուսուցման և սովորելի ինչպես սովորելու հասկացություններին: Կարևոր է զարգացնել սեփական ուսուցման նկատմամբ պատասխանատվություն ստանձնելու և որոշում կայացնելու կարողությունը, քանի որ այդ դեպքում այս գործընթացը դառնում է ցկյանս ուսուցում: «Մանրամասն՝ Youthpass-ի մասին» *Ձեռնարկը*¹⁸ առաջարկում է բազմաթիվ օրինակներ և Youthpass գործընթացի լայնածավալ ուսումնասիրություն:

¹⁸Youthpass Unfolded – Practical tips and hands-on ՄԵԹՈԴ for making the most of the Youthpass process (2012 – updated in 2016). Accessible here: https://www.salto-youth.net/downloads/4-17-3553/Publication_YP-unfolded_online.pdf

**Այժմ եկե՛ք ուսումնասիրե՛նք Youthpass
գործընթացի տարրերից մեկը՝ ինֆրագնահատումը:**

ԻՆՉՈՒ՞ Է ԿԱՐԸՆՈՐ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄԸ

«Արդյո՞ք դուք իսկապես լավագույն մարդն եք ձեր սեփական ուսուցումը գնահատելու համար» հարցը լավ միջոց է ինքնագնահատման մասին քննարկում սկսելու համար: Ընտրող հարցը կարող է լինել. «Ո՞վ կարող է ձեզանից լավ որոշել, թե ինչ եք սովորել»: Շատ մարդիկ սովոր են մի համակարգի, որտեղ ուրիշ մարդիկ են որոշում, թե որքանով է նախատեսված ուսումնական արդյունքը ձեռք բերվել, կամ արդյոք այն ընդհանրապես տեղի է ունեցել, թե ոչ: Այս ուրիշ մարդիկ անցկացնում են թեստեր, հարցազրույցներ, պատրաստում քննություններ և գնահատում մարդկանց ուսումնական արդյունքները: Իսկապես, կան բավականին շատ մասնագիտություններ, որոնց պարագայում թթեկնածուներին, նախքան աշխատանքի անցնելը, թետավորելը լավ գաղափար է: Ոչ ոք չի ցանկանում, որ հիվանդանոցում իրեն վիրահատի ինքնահռչակված վիրաբույժ:

Այնուամենայնիվ, թեստերն ու քննությունները՝ որպես ինչ-որ մեկի կարողությունները գնահատելու գործիքներ, ունեն իրենց սահմանափակումները: Դրանք միայն գնահատում են մարդու հմտությունները տվյալ պահին և հաճախ արդյունքն առավելալպես կախված է լինում այն բանից, թե թեկնածուն որքան լավ է իրեն դրսևորել թեստի ժամանակ: Թեստի կամ քննության տեսքով գնահատումները համարվում են «վերջնական» գնահատման մի տեսակ, ինչը նշանակում է, որ եթե հանձնել եք քննությունը, ապա «լավ եք տիրապետում թեմային»: Այնուամենայնիվ, սա իրականում չի համապատասխանում մշտական ուսուցման հայեցակարգին, որն ընդունում է, որ կարողությունները կարող են շատ արագ ոչ արդի դառնալ: Ոչ ոք չի ցանկանում վիրահատվել այն վիրաբույժների կողմից, ովքեր իրենց քննությունները հանձնել են 18 տարի առաջ և այդ ժամանակվանից ի վեր վերապատրաստում չեն անցել:

Ինչ վերաբերում է այն ուսուցմանը, որը տեղի է ունենում եվրոպական երիտասարդական ծրագրերի շրջանակներում իրականացվող միջոցառումների ընթացքում, ապա ինքնագնահատումը շատ ավելի հարմար միջոց է ուսումնական արդյունքները և դրանց արժեքը բացահայտելու համար: Սովորողները բոլորից լավ գիտեն, թե ինչ անձնական զարգացում են ապրել, ինչպես են բարելավել հաղորդակցման հմտությունները, ինչու են ավելի ինքնավստահ զգում, ինչպես են դարձել ավելի լավ կազմակերպիչներ և այլն: Սեփական ուսուցումը գնահատելիս երիտասարդ մասնակիցները շատ ավելի իրազեկ են դառնում այդ մասին, ինչը նրանց հնարավորություն է տալիս ավելի լավ պլանավորել իրենց հետագա ուսուցումը:

Այնուամենայնիվ, սա չի նշանակում, որ սովորողները կարիք չունեն, որ ուրիշ մարդիկ գնահատեն իրենց ուսուցումը: Ինքնագնահատումն այն չէ, ինչ մարդիկ անում են ինքնուրույն: Այստեղ «ես»-ը վերաբերում է այն փաստին, որ գնահատման համար ի վերջո պատասխանատու են հենց իրենք՝ սովորողները: Սա չի նշանակում անել առանց ուրիշների օգնության: Թեև երիտասարդ մասնակիցները, հավանաբար, բոլորից լավ են ճանաչում իրենք իրենց, նրանք (ինչպես և մենք բոլորս) դեռ թերի կամ այլ կերպ են ընկալում իրենց վարքագիծն ու հմտությունները: Ուրիշ մարդիկ մեզ տեսնում են այլ տեսանկյունից և հետևաբար, կարող են տեսնել այն, ինչ մենք չենք տեսնում և (կամ) այլ արժեք վերագրել մեր վարքագծին ու հմտություններին: Նմանապես, հասակակիցները, գործընկերները, դասընթացավարները, մենթորները և երիտասարդական աշխատողները փորձառու են ու հետևում են, թե ինչպես են երիտասարդ մասնակիցները փոխհարաբերվում և աշխատում ծրագրի ընթացքում ու հետևաբար, անշուշտ կկարողանան կիսվել իրենց տպավորություններով: Նրանց տպավորությունները կարող են հարստացնել ինքնագնահատման գործընթացը:

Երիտասարդ սովորողները կարող են կիսվել իրենց ինքնագնահատմամբ ուրիշների հետ և խնդրել տրամադրել իրենց մեկնաբանությունները, առաջարկությունները և տեսանկյունները, որոնք իրենք կարող էին բաց թողնել: Բայց, անկեղծ ասած, ինքնագնահատումը հեշտ գործ չէ: Մարդկանց համար դժվար է որոշել, թե ինչ արժեք վերագրել սեփական կարողություններին: Ավելին, նրանք կարող են սովոր չլինել դրան և հնարավոր է անհարմար զգան իրենց մասին նշումներ անելիս, հատկապես Youthpass-ի համատեքստում, քանի որ Youthpass-ը հավաստագիր է: Հակառակը, մարդիկ սովոր են, որ ուրիշները գնահատեն նրանց և ուրախանում են, երբ դրական գնահատական են ստանում: Սեփական անձի մասին որևէ դրական բան գրելը՝ այն ուրիշներին ներկայացնելու համար, կարող է անհարմար լինել, բայց դա կարելի է հաղթահարել: Ձեր շրջապատի մարդիկ կարող են մեծ դեր խաղալ դրանում:

ԵՎ ԱՅՍՊԵՍ, ԻՆՉՊԵՍ Ե ԴԱ ԱՐՎՈՒՄ

Ինքնագնահատումը ոչ այլ ինչ է, քան ուսուցման գործընթացում արված պատկեր երբ սովորողները մի պահ տրամադրում են տեսնելուն, թե որտեղ են գտնվում: Այդ պահին կարելի է տալ առաջին դեմքի ձևաչափով հարցեր, ինչպիսիք են՝ «Ո՞ր եմ գնում», «Որտե՞ղ եմ հիմա՝ համեմատած իմ նախնական պատկերացումների հետ այն մասին, թե ինչ եմ ցանկանում սովորել», «Ի՞նչ առաջընթաց եմ գրանցել», «Ի՞նչ կարող եմ ավելի լավ անել», «Ինչի՞ եմ ընդունակ», «Ինչպիսի՞ անսպասելի ուսուցում է տեղի ունեցել», «Արդյո՞ք իմ սկզբնական գաղափարները դեռ ճիշտ են», ինչպես նաև «Արդյո՞ք ճիշտ ուղու վրա եմ», «Ի՞նչ նոր հարցեր ունեմ», «Որո՞նք են իմ հաջորդ քայլերը», «Ինչը պետք է շտկեմ»:

Ինքնագնահատման ժամանակ մարդիկ հաշվի են առնում նախկին մտորումները: Թեև սա շատ նման է մտորմանը, ինքնագնահատման ժամանակ մարդիկ հետ են նայում որոշակի ժամանակաշրջանի կամ միջոցառման, ու նախկին մտորումների օգնությամբ գնահատում իրենց սովորածի արդյունքներն ու արժեքը և դրանք բառերով ներկայացնում:

Ինչպես արդեն նշվել է, իրական սովորածը սահմանելը հեշտ գործ չէ: Դա մի բան չէ, որ մարդը «պարզապես անում է»: Ճիշտ է, որոշ կետեր ավելի հեշտ է բացահայտել. օրինակ, երբ խումբը ֆիլմ է նկարահանել երիտասարդական փոխանակման ժամանակ և օգտագործել որոշակի ծրագրակազմ այն խմբագրելու համար, նրանք կարող են նշել, որ այժմ կարող են օգտագործել այդ ծրագրակազմը: Նույնը, հավանաբար, վերաբերում է կամավորներին, ովքեր նկարագրում են, թե ինչպես են կատարելագործել իրենց լեզվական հմտություններն օտար երկրում ինձամսյա աշխատանքի ընթացքում: Այնուամենայնիվ, երիտասարդական փոխանակման կամ վերապատրաստման դասընթացի, և, իհարկե, երկար կամավորական աշխատանքի ընթացքում երիտասարդները շատ մեծ փորձ են ձեռք բերում: Կոնկրետ ի՞նչն է համարվում ուսուցում այդ գործընթացում: Ինչպե՞ս նրանք կարող են հատկորոշել և նկարագրել դա: Սա պահանջում է հետադարձ հայացք նետել այդ փորձառություններին՝ օրագրի և/կամ հասակակիցների, երիտասարդական աշխատողների, դասընթացավարների և մենթորների օգնությամբ և այլ հարցեր տալու միջոցով:

Հարցեր ուսուցման գործընթացի վերաբերյալ

Ինքնագնահատումը ոչ միայն այն մասին է, թե մարդ ԻՆՉ է սովորել, այլ նաև ԻՆՉՊԵՍ: Սա հնարավորություն է մտածելու, թե որ ուսուցման մեթոդներն են լավագույնը տվյալ անհատի համար, ինչ մարտահրավերներ պետք է հաղթահարվեն, ինչպիսին է այլ մարդկանց դերը և թե որ պահին եք իսկապես զգում, որ սովորում եք: Այս տեսակի հարցերն օգնում են բարձրացնել սեփական ուսուցման մասին իրազեկվածությունը և կարող են օգնել հետագայում հարմարեցնել ուսուցման ձևը:

Ուսուցման սեփական ոճը բառերով արտահայտելու ունակությունը ոչ միայն կարևոր է անձնական տեսանկյունից և հետագա ուսուցման համար, այն նաև կարևոր հմտություն է, որը բարձր է գնահատվում, օրինակ՝ գործատուների կողմից: Ի վերջո, դա Եվրոպական հանձնաժողովի կողմից սահմանված առանցքային կարողություններից մեկն է՝ սովորել՝ ինչպես սովորել: Ինքներդ ձեզ որպես սովորող ճանաչելն այդ կարողության կարևոր բաղադրիչն է:

Հարցեր նոր դերերի և խնդիրների վերաբերյալ

Երբ երիտասարդները մասնակցում են եվրոպական երիտասարդական ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառմանը, նրանք հաճախ անում են այնպիսի բաներ, որոնք նախկինում չեն արել: Դրանք, հավանաբար, ներառում են մեծ ծավալով ուսուցում, որը պետք է գրի առնվի սեփական ինքնագնահատման մեջ: Օրինակ՝ կամավորական ծրագրի ընթացքում մի երիտասարդ կամավոր միանում է այլ կամավորների՝ աշխատելու մի խումբ դեռահասների հետ ամեն չորեքշաբթի կեսօրից հետո: Սա դիտարկվում է նոր և հաջողված փորձառություն: Ի՞նչ սովորեց դրանից երիտասարդ կամավորը: Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է պարզել, թե ինչ խնդիրներ են ներառված, օրինակ՝ միջոցառման համար գաղափարներ կազմելը, միջոցառման նախապատրաստումը, միջոցառման համար բյուջեի սահմանումը, տարածքի նախապատրաստումը, միջոցառումը խմբին բացատրելը, խմբի ուշադրությունը գրավելը, չմոտիվացված երիտասարդներին միանալ խրախուսելը, խմբում առկա տարաձայնությունները լուծելը, առանձին երիտասարդների հետ խոսելը, մյուս կամավորների հետ որպես թիմ աշխատելը, գործընկերների հետ տարաձայնությունները լուծելը, կազմակերպության համար զեկույց գրելը և այլն: Նշելով այս բոլոր տարբեր տարրերը՝ կամավորը կարող է տեսողականորեն հիշել, թե ինչպես է կատարել այս խնդիրները: Ի՞նչ նոր բան կար դրանց մեջ: Ի՞նչը դուր եկավ կամավորին: Ի՞նչն է նա սկսել ավելի լավ անել ամիսների ընթացքում: Ի՞նչը ստիպեց նրան լավ անել այն, ինչ անում էր:

Այս հարցերից բխող մտորումը թույլ է տալիս երիտասարդներին արտահայտել այն, ինչ նրանք սովորել են տվյալ միջոցառման ընթացքում: Ավելին, այլ կամավորների կամ մենթորի հետ խոսելն օգտագործելով նույն հարցերը, անկասկած, էլ ավելի շատ պատկերացումներ կտա, քան պարզապես ինքնուրույն նշումներ կատարելը:

Հարցեր դրական փորձի վերաբերյալ

Հաճախ այն, ինչ մարդիկ սիրում են անել, և այն, ինչն իրենց ուրախացնում է, բաներ են, որոնցում նրանք հմուտ են, և սա հրաշալի է: Շատ լավ լինել մի բանում, որը մարդ ընդհանրապես չի սիրում անել, հավանաբար ցանկալի չէ: Սա կարող է օգնել ինքնագնահատման ժամանակ: Այն իրավիճակներն ու միջոցառումները հիշելը,

որոնք մասնակիցին լիովին գործ և երջանիկ են դարձրել, կարող է օգնել նրան հատկորոշել իր ձեռք բերած կարողությունները: Նախ, կարևոր է պարզել, թե կոնկրետ ինչն է նրան ուրախացրել: այլ կերպ ասած՝ վերլուծել, թե ինչ տարրերից է բաղկացած եղել այդ գործառույթը: Ինչ-որ մեկը, ով սիրում է նվազել խմբում, անայայնման կցանկանա երաժշտություն նվագել: Բայց ի՞նչ այլ բաղադրիչներ կան: Խմբում նվագելը պահանջում է թիմում աշխատելու կարողություն: Այսպիսով, հնարավոր է, որ ուրիշների հետ սերտ համագործակցությունը մի բան է, որը նրա սիրում է անել և ինչը նրա մոտ լավ է ստացվում: Մեկ ուրիշը, ով սիրում է երիտասարդական փոխանակման ժամանակ դիսկոտեկ կազմակերպել, կարող է ցանկանալ պարել, բայց կարող են լինել շատ այլ տարրեր, որոնք խթանում են այդ ուրախ զգացողությունը և բացահայտում, որ այդ անհատն ունի որոշակի հմտություններ՝ լավ կազմակերպիչ լինել, հոգ տանել մարդկանց մասին, լավ մթնոլորտ ստեղծել, թիմում աշխատել և այլն: Միջոցառման նման վերլուծությունը կարող է նոր պատկերացումներ տալ սեփական հետաքրքրությունների և կարողությունների մասին: Միզուցե այն, ինչ տվյալ մարդը սիրում է անել և լավ է անում, ոչ այնքան դիսկոտեկն է, որքան թիմում աշխատելը:

Հարցեր ապագայի վերաբերյալ

Ինքնագնահատումը ներառում է հետադարձ հայացքի նետում որոշակի իրավիճակի կամ ժամանակաշրջանի արդյունքներին: Դա նաև այն պահն է, երբ սովորողը կարող է դիտարկել ապագան, կազմել նոր ծրագրեր և մշակել ՆՊԱՏԱԿհետագայի համար: Հարկ է կրկին նշել, որ անհրաժեշտ է դիտարկել ուսուցման մաս կազմող և՛ «ինչպես», և՛ «ինչ» հարցերը: Ինչպիսի՞ ուսուցմամբ է տվյալ մարդը ցանկանում զբաղվել այսուհետ: Ուսուցման ի՞նչ նոր եղանակներ դեռ պետք է հայտնաբերվեն: Մեթոդներ, որոնք դեռ կարող են օգտակար լինել: Ինչպիսի՞ մարդկանց հետ է տվյալ անձը ցանկանում կապեր հաստատել այդ ապագա ուսուցման գործընթացում:

«Ինչ» հարցի վրա կենտրոնանալը ներառում է նոր հարցերի մի ամբողջ շարք: Ուսուցման գործընթացում կարելի է գտնել որոշ հարցերի պատասխաններ, սակայն շատ նոր հարցեր են շարունակում առաջանալ: Որոշ թեմաներ ավելի խորն ուսումնասիրելը, ամենայն հավանականությամբ, կառաջացնի նոր և ավելի հետաքրքիր հարցեր: Այնուամենայնիվ, այս հարցերը կարող են նաև առաջանալ սեփական անձի մասին պատկերացումներից՝ հանգեցնելով այն բանին, որ մարդը հարցնի, օրինակ, «ինչպե՞ս կարող եմ օգտագործել այդ պատկերացումները, ինչպե՞ս կարող եմ փոխել որոշակի վարքագիծը, որտե՞ղ կարող եմ ցուցադրել իմ նոր բացահայտած ուժեղ կողմերը»: Նման ինքնագնահատում անցնելը մասնակիցներին հնարավորություն է տալիս դիտարկել ապագան, կազմել պլաններ և արտահայտվել:

Ուսուցման ո՞ր եղանակներն են ցանկանում շարունակել:

Ուսուցման ո՞ր նոր եղանակներն են ցանկանում փորձել:

Ի՞նչ նոր հարցեր առաջացան:

Ինչպե՞ս կարող եմ հետևել իմ նոր գաղափարներին:

Ո՞ր տեսակի ուսուցում է ինձ հարմար:

Որո՞նք են իմ մարտահրավերները:

Ի՞նչ դեր են խաղում այլ մարդիկ իմ ուսուցման մեջ:

Որո՞նք էին իմ իրական ուսուցման պահերը:

ԱՊԱԳԱ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎ

Ինֆրագնահատման հարցեր

ԴՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ի՞նչն ինձ ստիպեց իսկապես լավ զգալ:

Ի՞նչն ինձ դուր եկավ:

Ի՞նչ է դա ասում իմ կարողությունների մասին:

ՆՈՐ ԴԵՐԵՐ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ

Ի՞նչ նոր դերեր և խնդիրներ եմ ստանձնել:

Ո՞ր տարբերվող տարրերն էին այդ խնդրում/դերում:

Ի՞նչ նոր բաներ եմ սովորել այնտեղ:

Ի՞նչն էր ինձ մոտ լավ ստացվում:

ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Եվրոպական երիտասարդական ծրագրերի շրջանակներում իրականացվող միջոցառումների բազմազանությունը նշանակում է նաև ինքնագնահատման բազմազանություն, թեև սկզբունքները մնում են նույնը, սովորողը նա է, ով որոշում է ուսուցման արդյունքները:

Երբ մենթորն ավարտում է մենթորական տեխնիկայի վերաբերյալ եռօրյա վերապատրաստման սեմինարը, նրա ինքնագնահատումը, հավանաբար, ավելի կարճ է տևում, քան երիտասարդ կամավորինը, ով ավարտում է վեցամսյա ուսուցում: Դրա պարզապես վեց ամսում ավելի շատ բան եք սովորում, քան երեք օրում: Ավելին, վեցամսյա ուսուցման գործընթացը մեկ այլ երկրում և «նոր կյանքում» կլինի ավելի բարդ, քան կոնկրետ թեմայի շուրջ եռօրյա դասընթացը:

Մենթորին կարող է պահանջվել ընդամենը մի քանի նշում, որոնք արվել են դասընթացի և մտորման ժամանակ, և նրան հարկավոր կլինի պարզապես վերանայել ծրագիրը՝ վերհիշելու վերապատրաստման դասընթացի տարբեր ասպեկտները՝ ուսումնական արդյունքները որոշելու համար: Թեև անսպասելի ուսուցումը կարող է տեղի ունենալ որոշ հանդիպումների կամ միջոցառումների արդյունքում, ուշադրության կենտրոնում է մնում վերապատրաստման դասընթացի թեման, մասնավորապես՝ մենթորական տեխնիկան:

Վեցամսյա ուսուցման դեպքում այնքան էլ պարզ չի լինի, թե ինչի վրա է կենտրոնացումը, քանի որ կամավորն ունեցել է շատ փորձառություններ, որոնք բոլորը պարունակել են ուսումնական ներուժ: Այս փորձառությունները չեն կարող պարզապես կապված լինել աշխատանքի ընթացքում կատարվող առաջադրանքների հետ: Դրանք տեղի են ունենում նաև շատ անձնական մակարդակում՝ ազդելով կամավորի վստահության և ինքնագիտակցության վրա: Ուսուցման այս բոլոր արդյունքները բացահայտելու համար շատ կարևոր է հետևել դրանց՝ բոլոր ձևերով և պարբերաբար գրառումներ կատարելու միջոցով: Նման երկար ժամանակաշրջանի վրա հիմնված ինքնագնահատումը շատ ավելի ժամանակ և ջանք կպահանջի՝ տարբեր բոլոր արդյունքների որոշումն ապահովելու համար:

Թեև մենթորին կպահանջվի ընդամենը մի քանի ժամ՝ իր ինքնագնահատումն ավարտելու համար, կամավորին, հավանաբար, ավելի շատ ժամանակ կպահանջվի՝ որոշելու ուսումնական տարբեր արդյունքները՝ գրուցելով ծրագիրն իրականացնող կազմակերպության տարբեր մարդկանց հետ, ուսումնասիրելով իր բոլոր նշումներն ու ստուգելով արդյունքները հասակակիցների և մենթորի հետ և այլն: Ընտևելը շատ կարևոր է:

2. ՎՖԱՍԻԼԻՏԱՏՈՐԻ (ՎԱՐՈՂԻ) ԴԵՐԸ

Մենք դիմում ենք երիտասարդական աշխատողներին, մենթորներին, քույրներին և դասընթացավարներին որպես (ուսուցման) վարողներ: «Մանրամասն՝ Youthpass-ի մասին»-ն ունի «ֆասիլիտատորի դերը» վերնագրով գլուխ, որը նկարագրում է ֆասիլիտատորի մի քանի դերեր Youthpass գործընթացում: Այս Ձեռնարկում մենք կենտրոնանում ենք այդ դերերից չորսի վրա, քանի որ դրանք ավելի շատ են վերաբերում մտորմանը և ինքնագնահատմանը՝

- Օրակարգում ուսուցման ներառում
- Տեսնել սովորողների ներուժը
- Աջակցող հարցեր տալ
- Կարծիք հայտնել

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆԵՐԱՌՈՒՄ

Երիտասարդական աշխատանքի ծրագրերի և ուսուցման միջև կապը միշտ չէ, որ ակնհայտ է: Շատ երիտասարդների համար ուսուցումը տեղի է ունենում միայն դպրոցում, իսկ ոմանց համար այն կարող է նույնիսկ բացասական ենթատեքստ ունենալ: Հետևաբար, իմաստ կա ուսուցմանը նայել այլ տեսանկյունից և երիտասարդ մասնակիցների հետ միասին վերանայել այդ բառի իմաստը:

Ֆասիլիտատորի առաջին կարևոր քայլերից մեկն է հասկանալ և հստակեցնել գործունեության նպատակները: Ո՞րն է այս ծրագրի պատճառը: Ի՞նչ է առաջարկում: Ինչպե՞ս ենք մենք, որպես վարողներ, հասկանում մեր դերը: Ո՞րն է ուսուցման նկատմամբ մեր մոտեցումը: Հստակ դարձնելով իրենց նպատակներն ու մոտեցումները՝ ֆասիլիտատորներն օգնում են երիտասարդներին ճանաչել ուսումնական հնարավորությունները: Դա այն պահն է, երբ ուսուցումը ներառվում է օրակարգում:

Երբ խոսքը վերաբերում է մտորմանը, շատ կարևոր է ժամանակացույցում դրա համար բավարար ժամանակ և տարածք նախատեսելը: Եթե երիտասարդական փոխանակման ընթացքում մտորումների համար հատուկ ժամանակ հատկացված չէ, և մասնակիցները ստիպված են անել դա իրենց ազատ ժամանակի ընթացքում, դա կարող է ընդհանրապես տեղի չունենալ: Բացի կոնկրետ ժամանակ հատկացնելուց, կարևոր է նաև առաջարկել գործիքներ, ՄԵԹՈՂԻ և հարցեր, որոնք կօգնեն մասնակիցներին մտորել: Ժամանակ, տարածք և ռեսուրսներ տրամադրելով՝ ֆասիլիտատորներն ընդգծում են մտորման կարևորությունը՝ որպես ուսումնական գործընթացի մաս: Ավելին, մտորման համար ժամանակ տրամադրելուց բացի, իմաստ ունի խնդրել երիտասարդներին

կիսվել իրենց մտորման փորձով, այսպես ասած՝ մտորել մտորելու մասին: Դա կարող է մի փոքր բարդ հնչել, բայց հաշվի առնելով, որ շատ երիտասարդների համար պարբերական մտորումը բոլորովին նոր բան է, այն օգնում է հնարավորություն ստեղծել այդ մասին կարծիքներ փոխանակելու, մարտահրավերներ հաղթահարելու և ուրիշներից խորհուրդներ ու գաղափարներ ստանալու համար: Այս ձևով սովորելը միշտ օրակարգում կլինի:

ՏԵՍԵԼ ՍՎՈՐՈՂԻ ՆԵՐՈՒԺԸ

Կարևոր է գիտակցել, որ շատ երիտասարդների համար մտորումը և ինքնագնահատումը հատկապես դժվար են, քանի որ դրանք պահանջում են ինքնավերլուծություն: Սեփական անձի մասին մտորելը և ուժեղ ու թույլ կողմերը տեսնելը պահանջում է ինքն իրեն հեռվից նայելու: ունակություն, և հատկապես դժվար է սեփական անձի մասին «Ինձ մոտ դա լավ է ստացվում (կամ այդքան էլ լավ չի ստացվում)» ասելը:

Որպես ֆասիլիտատոր՝ մեկնաբանելն այն, ինչ դուք տեսնում եք վարքագծի և մոտեցումների առումով, կարող է օգնել երիտասարդներին ճանաչել այն, ինչի մասին իրենք տեղյակ չեն կամ ինչում վստահ չեն: Դա պահանջում է լավ դիտողական հմտություններ, իսկ հայտնած կարծիքը պետք է լինի նկարագրական, այլ ոչ թե դատողական: Օրինակ՝ «Կարծում եմ՝ դուք բավականին առաջնորդական դեր ստանձնեցիք այնտեղ», «Ինձ թվաց, որ ձեզ իսկապես դուր եկավ այդ միջոցառումը կազմակերպելը», «Ես զգում եմ, որ դուք ավելի շատ սիրում եք անել, քան խոսել» և նմանատիպ այլ նախադասությունները կարողությունների և հատկապես մոտեցումների մասին զրույց սկսելու տարբերակներ են, և դա կարող է օգնել երիտասարդներին մտորել իրենք իրենց մասին և ձեռք բերել ավելի շատ ինքնագիտակցություն:

Սովորողների ներուժի ճանաչումը նաև ներառում է մարդկանց ուսուցման տարբեր ձևերի ճանաչում, և գիտակցում, որ հաջող ուսուցման մեկից ավելի եղանակներ կան, որոնցից յուրաքանչյուրը տարբեր հնարավորություններ է տալիս: Սա ճիշտ է նաև մտորման դեպքում: Որոշ մարդկանց մոտ առանձին նստելն ու գրելը բացարձակապես չի ստացվում: Նրանք կարող են շատ ավելի օգուտ քաղել ուրիշների հետ զրուցելուց, գուցե զբոսնելիս կամ նույնիսկ միասին երաժշտություն լսելիս: Որպես ուսուցման ֆասիլիտատոր՝ դուք պետք է թույլ տաք տարբեր ձևերով գործելու հնարավորությունը և չնյարդայնանաք, երբ անհատական գրելու համար հատկացված ժամանակի ընթացքում որոշ մասնակիցներ սկսեն բոլորովին այլ բան անել:

ԱՋԱԿՑՈՂ ՀԱՐՑԵՐ ՏԱԼ

Մտորման սեսիայի համար կարևոր է մի շարք հարցեր պատրաստել: Համապատասխան հարցեր տալը միշտ չէ, որ հեշտ է, հատկապես, եթե դուք պետք է դա անեք ինքններդ: Այս Ձեռնարկը պարունակում է հարցերի և հարցադրման տեխնիկաների բազմաթիվ օրինակներ: Որպես ուսուցման ֆասիլիտատոր՝ դուք վճռորոշ դեր եք խաղում՝ օգնելով երիտասարդներին մտորել՝ տալով համապատասխան և աջակցող հարցեր: Դուք իրերին այլ տեսանկյունից եք նայում, այնպես որ կարող եք առաջարկել նոր տեսանկյուններ, որոնցից մասնակիցները կարող են նայել իրենց գործողություններին և վարքագծին: Երբ դուք ձեր հարցադրման տեխնիկայի միջոցով ստիպում եք մարդկանց խոսել իրենց մասին, դուք օգնում եք նրանց արտահայտել այն, ինչ նրանք զգացել են, կատարել և սովորել:

ԿԱՐԾԻՔ ՀԱՅՏՆԵԼ

Կարծիք հայտնելը նման է վերը նկարագրված՝ մարդու դիտարկումների արտահայտման գործընթացին: Այնուամենայնիվ, «կարծիք հայտնելը» այս համատեքստում վերաբերում է կազմակերպված և պլանավորված կարծիքների հայտնելուն կոնկրետ դասի ընթացքում, որը ֆասիլիտատորը ու մասնակիցը պայմանավորվել են անել միասին: Այստեղ կարևոր է, որ կարծիք լուսն ինքը որոշի, թե ինչի վերաբերյալ է ցանկանում կարծիք լսել: Ֆասիլիտատորը չպետք է կարծիք հայտնի լսողի գործողությունների բոլոր ասպեկտների վերաբերյալ փոխարենը, կարծիք հայտնողը պետք է կենտրոնանա լսողի կողմից ընտրված ասպեկտների վրա:

Որպես կարծիք հայտնող, դուք պետք է հաշվի առնեք, թե ինչի մասին կարող եք կարծիք հայտնել: Երբ կամավորը կարծիք է խնդրում այն մասին, թե ինչպես են նրանք աշխատել մի խումբ երեխաների հետ, և դուք, որպես նրա մենթոր, իրականում երբևէ չեք տեսել կամավորին գործողության մեջ, ապա հավանաբար դուք այն մարդը չեք, ով պետք է դա անի:

Այստեղ ամենակարևոր սկզբունքն այն է, որ կարծիքը պետք է օգտակար լինի լսողին: Դա առիթ չէ, որ կարծիք հայտնողը վերջապես կարողանա կիսել իր անձնական կարծիքը լսողի մասին: Նկատի ունեցեք, որ եթե ցանկանում եք, որ կարծիքն աջակցության ձև լինի լսողի համար, այն միշտ պետք է հայտնվի դրական մտադրությամբ:

3. ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

Ուսուցման արդյունքները բառերով արտահայտելը օգտակար է, երբ մարդիկ ցանկանում են իրենց կարողությունները ներկայացնել ուրիշներին: Դա կարող է լինել նաև սեփական անձի համար արվող շատ բովանդակային մի բան: Սեփական ունակությունների և կարողությունների մասին գրելու գործընթացն օգնում է զարգացնել իրական իրազեկվածություն այն մասին, թե մարդը ինչ կարող է անել և լավ անել: Իր հերթին դա օգնում է բարձրացնել ինքնագիտակցությունն ու վստահությունը:

Շատ երիտասարդների համար ապագային նայելը և կյանքի ուղղության մասին որոշում կայացնելը բավականին դժվար է: Ի՞նչ աշխատանք են ցանկանում անել: Ի՞նչ կարող են ցանկանալ սովորել: Տեղյակ լինելն այն մասին, թե ինչն է նրանց մոտ լավ ստացվում, և որոնք են նրանց հետաքրքրությունները, կարող է շատ օգտակար լինել այդ մտորման գործընթացի համար:

Երիտասարդ ձեռնարկատերերի համար շատ կարևոր է իմանալ, թե ինչ անձնական ուժեղ կողմեր են անհրաժեշտ բիզնես հիմնելու համար: Բացի դրանից, նրանց չունեցած կարողությունների մասին տեղյակ լինելը կարևոր է, երբ նրանք որոշում են կայացնում, թե ում հետ համագործակցել:

Կարողությունները նկարագրել կարողանալը կարևոր է շատ իրավիճակներում, որոնք ներառում են ուրիշների հետ աշխատանք, քանի որ դա նպաստում է լավ թիմային աշխատանքին: Դա վերաբերում է թիմերին մասնագիտական համատեքստում, բայց նաև կամավորական ծրագրերին և անձնական կյանքում: Ձեր առաջարկածը ներկայացնելը կյանքի կարևոր հմտություն է:



ԻՆՉՊԵՐՍ ԱԶԱԿՑԵԼ YOUTHPASS-Ի ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆԸ

Darko Marković կողմից

Արդյո՞ք դուք երբևէ կառուցել եք տուն: Նույնիսկ եթե դուք դա դեռ չեք արել, մի պահ պատկերացրեք դրա կառուցման գործընթացը: Դա կարող է լինել ձեր երազանքների տունը կամ պարզապես սովորական բունգալո: Պատկերացրեք ամբողջ գործընթացը քայլ առ քայլ՝ սկսած հիմքերը դնելուց, արտաքին պատերը կառուցելուց, պատուհանները և դռները տեղադրելուց, փոքր աշխատանքների կատարումից ու սալիկները տանիքին ամրացնելուց: Որոշ բաներ կընթանան ըստ նախնական պլանի, բայց ընթացքում կլինեն բազմաթիվ անսպասելի մարտահրավերներ, որոնք պետք է հաղթահարվեն: Վերջապես, տունը պատրաստ է, և դուք ցանկանում եք լուսանկարել այն: Ինչու՞ է ձեզ հարկավոր այդ լուսանկարը: Արդյո՞ք ցանկանում եք ունենալ այն միայն ինքներդ

ձեզ, թե անձնական այբումուտ պահելու համար: Թե՞ կցանկանալիք կիսվել ձեր ամենամոտ ընկերների հետ: Կամ գուցե՞ ցանկանում եք տեղադրել այն Instagram-ում և կիսվել աշխարհի հետ: Կախված ձեր մտադրություններից, դուք կփնտրեք հնարավոր լավագույն անկյունն այն նկարելու համար: Սա կարող է լինել ամենահեշտը, եթե լուսանկարը միայն ձեր անձնական օգտագործման համար է. դուք մասնակցել եք գործընթացին և արդեն ներսից ծանոթ եք դրան: Բայց ո՞ր նկարը կներկայացնի այս տան ամբողջ գեղեցկությունն ու յուրահատկությունն այլ մարդկանց:

Եթե մենք համեմատենք Youthpass գործընթացը, որը ենթադրում է անձնական ներգրավվածություն ուսուցման մեջ և շարունակական մտորման հանձնառություն, տան կառուցման գործընթացի հետ, ապա այն պահը, երբ ստեղծում եք Youthpass հավաստագիրը, հավասար կլինի այդ տան լավագույն հնարավոր լուսանկարը ստանալու պահին: Այսպիսով, նախքան ձեր մասնակիցներին այդ հարցում աջակցել սկսելը, դուք պետք է հասկանաք, թե որ անկյունն են նրանք փնտրում: Այլ կերպ ասած, նախքան Youthpass-ի ինքնագնահատման գործընթացը սկսելը, լավ կլինի տալ ձեր մասնակիցներին հետևյալ հարցերը՝

« Ինչո՞ւ է ձեզ անհրաժեշտ Youthpass հավաստագիրը և ինչպե՞ս կցանկանալիք օգտագործել այն » :

Ակնհայտ է, որ այս հարցերին շատ տարբեր պատասխաններ կան: Այս Ձեռնարկում մենք անդրադառնում ենք ամենատարածվածներից մի քանիսին, որոնք ներկայացված են այստեղ՝ այս չորս հիմնաբառերի տեսքով.

ԻՆՔՍ

ԱՇԽԱՏԱՆՔ

ՎԱՎԵՐԱՑՈՒՄ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

1. «ԻՆՃ YOUTHPASS-Ն ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԻՆՔՍ ԻՆՃ ՀԱՄԱՐ»

Եթե պատասխանն է՝ «Ինճ Youthpass-ն անհրաժեշտ է ինքս ինճ համար», ապա ձեր դերն ինքնազնահատման գործընթացում ավելի շատ կենտրոնացված կլինի բովանդակության, քան ձևի վրա: Սովորողները լիովին ազատ են իրենց ուսուցման արդյունքները սեփական բառերով նկարագրելու: Այստեղ դուք կարող եք կենտրոնանալ հետևյալի վրա՝

- բացատրել Youthpass-ի ինքնազնահատման գործընթացը և դրա արժեքը,
- նկարագրել ցկյանս ուսուցման առանցքային/բանալի կարողությունների հայեցակարգը,
- տրամադրել աջակցման գործիքներ ուսուցման արդյունքները գրի առնելու համար,
- հայտնել խրախուսող կարծիք տեքստի վերաբերյալ,
- աջակցել հավաստագրի ստեղծման տեխնիկական գործընթացում:

Այս տեսակի ինքնազնահատումը հաճախ կատարվում է օրագրային ոճով: Youthpass-ին վերաբերող առկա ձեռնարկներում շատ բան է ասվում այն մասին, թե ինչպես կարելի է մոտենալ Youthpass-ի ինքնազնահատմանն անձնական պատճառներով: Այս Ձեռնարկում մենք ցանկանում ենք մի քայլ առաջ գնալ և ուսումնասիրել, թե ինչպես աջակցել այն մասնակիցներին, ովքեր աշխատում են իրենց ինքնազնահատման վրա այլ նպատակներով, ինչպիսիք են զբաղվածությունը, հետագա կրթությունը կամ վավերացումը:

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Գործիքներ.

Մետաղադրամի երկու կողմերը, Հուշաթերթիկ, Կետերը միացնելը, Հարցազրույց ուսուցման արդյունքների վերաբերյալ, Ուսուցման բուրգը, Հասցրեք այն նոր մակարդակի, Հույզերով ուսուցում, Թող մնա՞, թե՞ գնա:

ՆՇՈՒՄ

YOUTHPASS-ի ԱՐԺԵՔՆ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ

Անկախ այն բանից, թե ինչու է դա արվում, Youthpass հավաստագրի վրա աշխատելու արժեքը կարելի է ամփոփել հետևյալ կերպ՝

1. Այն սովորողին տալիս է ավարտվածության զգացում՝ կապված այն ուսումնական գործընթացի հետ, որը նրանք անցել են ծրագրի ընթացքում:
2. Այն ապահովում է ծրագրում ձեռք բերված նվաճումների և կարողությունների ըստ արժանվույնի ճանաչում:
3. Այն հիանալի հնարավորություն է կիրառելու ինքնագնահատման հմտությունները, այդպիսով բարձրացնելով նրանց ընդհանուր ինքնագիտակցությունն ու զարգացնելով շատ արդի և փոխանցելի հմտություն:
4. Ուսուցման վարողի կամ հասակակիցների կողմից պատշաճ աջակցության դեպքում, այն հաճախ դառնում է հզորացման գործիք և մեծ խթան մասնակիցների վստահության համար:
5. Այն կարող է օգտակար լինել ուրիշներին հետագայում՝ որպես սեփական կարողությունները նկարագրելու հիմք:

2. YOUTHPASS ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄ

Անձնական օգտագործումից մինչև այլ նպատակներ

Youthpass-ի ինքնագնահատման վրա աշխատելն այլ նպատակներով (աշխատանք, կրթություն կամ վավերացում) էապես տարբերվում է միայն սեփական կարիքների համար դրա վրա աշխատելուց: Հիմնական նպատակն է ստանալ հավաստագիր, որը կարող է օգնել կյանքի համար կարևոր ընտրություններ կատարելիս կամ կարիերայի ուղին ընտրելիս: Այս դեպքերում աջակցման գործընթացը կարելի է ամփոփել հետևյալ երեք քայլերով.



Ուսումնասիրել

- Ուսումնասիրել մասնակիցների նպատակներն ու կարիքները: Ինչի՞ համար են նրանք օգտագործելու իրենց Youthpass հավաստագիրը:
- Իրախուսել նրանց ուսումնասիրել իրենց «թիրախը» (օրինակ՝ աշխատանք, վավերացման ընթացակարգ կամ կրթական հաստատություն), հատկապես այն կարողությունները, որոնք պահանջում են այս թիրախները:

Համապատասխանեցնել

- Բացահայտել համապատասխանությունը թիրախի համար պահանջվող կարողությունների և ծրագրում զարգացված կարողությունների միջև:
- Կարողությունները նկարագրելիս գտնել միջոց՝ համապատասխանեցնելու թիրախի և երիտասարդական աշխատանքի ոլորտի լեզուն:

Ապացուցել

- Աջակցել մասնակիցներին իրենց ուսուցման արդյունքները նկարագրելու հարցում՝ միաժամանակ հղում կատարելով իրենց թիրախի համար պահանջվող կարողություններին:
- Համոզվել, որ նրանք տրամադրում են ապացույցներ ի հիմնավորում յուրաքանչյուր այն դեպքում (օրինակ՝ օրինակներ այն մասին, թե ինչպես են նրանք դստրել տվյալ կարողությունը ծրագրի ընթացքում):
- Ստուգել, թե արդյոք տեքստում օգտագործվող լեզուն հասկանալի է եվրոպական երիտասարդական ծրագրերին քիչ ծանոթ մարդկանց:

Ըետկյալ բաժիններում մենք տրամադրում ենք ավելի մանրամասն հրահանգներ այն մասին, թե ինչպես աջակցել Youthpass-ի ինքնագնահատման գործընթացին մի շարք հատուկ նպատակների, մասնավորապես՝ աշխատանքի դիմելու, կրթական ծրագրին միանալու կամ վավերացման գործընթացին նախապատրաստվելու մասով:

3. «ԵՄ ԴԻՄՈՒՄ ԵՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ»

Եթե սովորողը մտադիր է օգտագործել Youthpass հավաստագիրն աշխատանքի դիմելու համար, ապա հարկավոր է կատարել հետևյալ երեք քայլերը՝ նրան առավելագույնս արդյունավետորեն աջակցելու համար:

Քայլ 1

ԱՊԱՀՈՎԵԼ ՓՈԽԱՆՑԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

- Համոզվեք, որ սովորողը հասկանում է, թե ինչ է Youthpass-ը և ինչ է պետք ակնկալել դրանից: Նաև պարզաբանեք, թե ինչ չէ Youthpass-ը, մասնավորապես նշելով, որ այն որակավորման ապացույց չէ, և ոչ էլ ձեռք բերված կարողությունների պաշտոնական հաստատում:
- Բացատրեք, թե ինչպես նրանք կարող են փոխանցել մի ոլորտում ձեռք բերված կարողությունները մեկ այլ ոլորտ, օրինակ՝ Եվրոպական երիտասարդական ծրագրերից դեպի մասնագիտական համատեքստ:
- Ընդգծեք Youthpass-ի օգտագործման հետևյալ հնարավոր առավելություններն աշխատանքի դիմելու գործընթացում՝
 - ա. Այն կարող է հնարավոր գործատուին լրացուցիչ տեղեկություններ տրամադրել դիմողի հետաքրքրությունների, ինչպես նաև նախաձեռնողականության ու պրոակտիվության մակարդակի մասին:
 - բ. Այն կարող է հնարավոր գործատուին տեղեկատվություն տրամադրել այլ համատեքստում թեկնածուի կողմից ձեռք բերված կարողությունների մասին:
 - գ. Պայմանավորված այն բանով, որ հավաստագիրը հիմնված է ինքնագնահատման վրա, այն կարող է նաև տպավորություն թողնել դիմողի ինքնագիտակցության մակարդակի և ինքն իրեն անաչառորեն գնահատելու ունակության մասին:

Հաից

ԱՐԴՅՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԱՆՑԵԼ ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ:

Ինչպես ցույց է տրված տվյալ Ձեռնարկի ներածության բաժնում, աճող ապացույցներ կան ոչ ֆորմալ միջավայրում ձեռք բերված կարողությունների և աշխատաշուկայում պահանջվող կարողությունների միջև համապատասխանության վերաբերյալ: Շատ դեպքերում այս կարողությունները վերաբերում են այն հմտություններին, որոնք հայտնի են որպես փոխանցիկ (տրանսֆերսալ) հմտություններ (օրինակ՝ հաղորդակցման հմտություններ, կազմակերպչական հմտություններ, թիմային աշխատանք, ինքնակառավարում, ճկունություն, ուսուցման համար բաց լինել, բազմազանության մասին իրազեկվածություն և այլն), որոնցից շատերը զարգացվում են եվրոպական երիտասարդական ծրագրերում: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում մասնակիցները նաև զարգացնում են շատ արդիական տեխնիկական կարողություններ, որոնք կարող են փոխանցվել այլ մասնագիտական համատեքստեր (օրինակ՝ վերապատրաստման հմտություններ, տարեցների խնամքի հմտություններ, շինարարական հմտություններ, թվային կարողություններ, հետազոտական հմտություններ և այլն):

ՀՍՏԱԿԵՑՆԵԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԹԻՐԱՒԵԼ

Այն բանից հետո, երբ մասնակիցները հասկացել են Youthpass-ը և դրա հնարավոր առավելությունները, ժամանակն է սկսել իրենց սովորածն այլ ոլորտներ փոխանցելու ուղղությամբ աշխատանքը:

ԲաՅԼ 2

- Սկզբից պարզեք՝ արդյոք հնարավոր աշխատանքը երիտասարդական ոլորտում է, թե բոլորովին այլ: Ավելի հեշտ կլինի եվրոպական երիտասարդական ծրագրերում ձեռք բերված հմտությունները փոխանցել այլ երիտասարդական (աշխատանքային) համատեքստ, քան այլ ոլորտներ: Այնուամենայնիվ, կան ծրագրեր, հատկապես միջազգային կամավորության ոլորտում, որտեղ ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումները նույն մասնագիտական ոլորտից են, ինչ մասնակցի հնարավոր կարիերայի ընտրությունը: Այս դեպքում փոխանցելիությունը չի սահմանափակվում «համընդգրկուն կարողություններով» տեխնիկական կարողությունները հավասարապես կարևոր են:

Արդյո՞ք կարողությունները պետք է փոխանցվեն երիտասարդական դաժտում, թե՞ այլ համատեքստերում:

Եվրոպական
ծրագրերի շրջանակներում
իրականացվող
միջոցառումներ

Եվրոպական
ծրագրերի շրջանակներում
իրականացվող
միջոցառումներ

ՏԱՐԲԵՐ
Վասնագիտական
ոլորտներ

Երիտասարդական ոլորտ

- Ինդրեք սովորողին ուսումնասիրել նմանատիպ աշխատանքի հայտարարություններ՝ պարզելու, թե ինչ կարողություններ են դրանց համար պահանջվում: Առաջադրանքը երկու մասից է բաղկացած՝ կազմել թիրախային ոլորտում սովորաբար պահանջվող բոլոր կարողությունների ցանկը և ուշադրություն դարձնել դրանք նկարագրելու համար օգտագործվող բառապաշարին:
- Ուսումնասիրեք կապը ընթացիկ եվրոպական երիտասարդական ծրագրի ուսումնական արդյունքների և հայտարարություններում նշված կարողությունների միջև: Շարունակեք մտածել ծրագրի ընթացքում ձևավորված կարողությունների շուրջ: Արդյո՞ք կա համընկնում: Եթե այո, ապա կազմեք հաճախ հանդիպող կարողությունների ցանկը: Ինդրում ենք նկատի ունենալ, որ այս գործընթացը կարող է ձեզանից պահանջել որոշակի թարգմանչական աշխատանք՝ օգնելու սովորողին գտնել հայտարարություններում ներկայացված կարողությունների համարժեքները: Օրինակ, ո՞րն է «հաճախորդամետություն» կամ «ճկունության» համարժեքը երիտասարդական աշխատանքում:

Հախց

ԱՐԴՅՈՒՔ ԽՈՍՈՒՄ ԵՔ ԳՈՐԾԱՏՈՒԻ ԼԵԶՎՈՎ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՃԱԽ ՆՇՎՈՂ ՄԻ ՔԱՆԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ.

Ըաշվետվողականություն, հարմարվողականություն, մանրուքների նկատմամբ ուշադրություն, պարզ հաղորդակցություն, վստահություն, կոնֆլիկտների կառավարում, ստեղծարարություն, ուրիշների զարգացմանը նպաստելու կարողություն, հուզական վերահսկողություն, ճկունություն, սթրեսին դիմակայում, ազնվություն, թիմերի առաջնորդում, լայնախոհություն, ուսուցման պատրաստակամություն, պնդամեծեղական տածողություն, խնդիրների լուծում, ծրագրերի կառավարում, արդյունքամետություն, ինքնակառավարում, նախաձեռնողականություն, թիմային աշխատանք և այլն:

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄ

Լաճախ պահանջվող կարողությունների ցանկը հաստատելուց հետո սկսվում է ինքնազնահատումը՝ հետևյալ հարցով. «Լյս ցանկի ո՞ր կարողություններն եք զարգացրել այս ծրագրի ընթացքում»: Խնդրեք մասնակցին գրել մեկ կարճ պարբերություն յուրաքանչյուր կարողության վերաբերյալ՝ նկարագրելով, թե ինչպես է ծրագիրն օգնել նրան զարգացնել այն: Դա անելիս հետևեք տվյալ հրահանգներին՝

ՔաՅԼ 3

- ա.** Սովորե՛ք ձեր ուսուցման արդյունքները նկարագրելիս օգտագործել գործատուի «կարողությունների լեզուն»:
- բ.** Խուսափե՛ք օգտագործել երիտասարդական աշխատանքի ժարգոն, որը երիտասարդական ոլորտից դուրս գտնվող գործատուն չի հասկանա:
- գ.** Հիմնավորե՛ք ձեր պնդումները: Ներկայացրեք ծրագրում տեղ գտած այնպիսի իրավիճակների կոնկրետ օրինակներ, որոնց ընթացքում դուք ցուցադրել եք տվյալ կարողությունը:.

Վերջապես, օգնեք մասնակցին խմբավորել իր ինքնազնահատումը՝ հավաստագրի «Առանցքային/բանալի կարողություններ» շրջանակին համաձայն:

ՆՇՈՒՄ

YOUTHPASS ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԿԱՐԵՎՈՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Կիրառելով այս տեսակի ինքնագնահատում և վերացնելով երկու աշխարհների միջև եղած բացը, մասնակիցները նաև զարգացնում են ճկունություն և հարմարվողականություն, որոնք երկուսն էլ շատ կարևոր հմտություններ են կարողություններն այլ համատեքստ փոխանցելիս:

Սերբական ուսումնասիրության մեջ*, երիտասարդ աշխատակիցները հաստատել են երիտասարդական ոլորտում և ոչ ֆորմալ ուսուցման ընթացքում իրենց կողմից ձեռք բերված կարողությունների փոխանցելիությունն այլ կազմակերպչական մշակույթ: Սակայն նրանք նաև ընդգծել են, որ այս փոխանցելիությունը երբևէ ինքնաբերաբար չի կատարվել: Փոխարենը, նրանցից պահանջվել է մեծ անձնական ճկունություն և հարմարվողականություն՝ իրենց կարողություններն այլ համատեքստում կիրառելու համար:

Սեփական կարողությունների մասին բարձր իրազեկվածությունը և դրանց առկայությունը հիմնավորելու ունակությունը կարևոր հմտություններ են աշխատանքի դիմելիս: Դրանք պետք է օգտագործվեն ուղեկցող նամակ պատրաստելիս, ինչպես նաև աշխատանքային հարցազրույցի ժամանակ:

* Sever Džigurski and Darko Marković. *Study of the impact of NFE in youth work* (NAPOR, 2014)

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Գործիքներ

Ըոշաթերթիկ, Ես ձեզ պետք եմ, որովհետև ես արժանի եմ, Ուսուցման բուրգ, ՔԱՐՏԵՐՈՎ ԽԱՂ. անվանեք ձեր կարողությունները, Տույց տվեք ձեր STAR-երը (աստղերը), Երազանքի աշխատանք:

4. «ԵՍ ՊԱՏՐԱՍԿՈՒՄ ԵՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՎԱԵՐԱՑՄԱՆ»

Մասնակիցներից կամ կամավորներից ոմանք կարող են ցանկանալ օգտագործել իրենց Youthpass-ն ուսուցման վավերացման նպատակներով: Եթե դուք ծանոթ չեք ուսուցման վավերացմանը, եզրույթը վերաբերում է պաշտոնապես ճանաչված որակավորում ձեռք բերելուն՝ առանց այդ դրոշմում պաշտոնական վերապատրաստման մասնակցելու կամ կրթություն ստանալու: Դրա համար անձից պահանջվում է ձեռք բերել անհրաժեշտ կարողությունները կյանքի փորձի և ոչ ֆորմալ ու ինֆորմալ ուսուցման միջոցով: Վավերացման բոլոր գործընթացների առանցքային կողմը, անկախ մեթոդաբանությունից, սեփական պնդումների մասով ապացույցներ ներկայացնելն է: Սրա համար հաճախ պահանջվում է ստեղծել պորտֆոլիո և ներկայացնել այն գնահատման: Եթե գնահատումը դրական է, ապա կարող է տրվել ամբողջական կամ մասնակի որակավորում:¹⁹

Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման վավերացումը ԵՄ-ում

Եվրոպական խորհրդի 2012 թվականի հանձնարարականը կոչ է անում անդամ պետություններին մինչև 2018 թվականը սահմանել այնպիսի կարգավորումներ, որոնք հնարավորություն կտան անհատներին վավերացնելու ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման միջոցով իրենց կողմից ձեռք բերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները: Այդ նպատակին հասնելու համար մի շարք եվրոպական երկրներ մշակում են վավերացման համակարգեր: Լավ գաղափար է ստանալ ձեր իրավիճակում վավերացման համար կիրառվող դրույթների վերաբերյալ արդի տեղեկատվություն: Դա հնարավոր է անել ուսումնասիրելով պարբերաբար թարմացվող Եվրոպական վավերացման տվյալների բազան:

Որպես կանոն, ամբողջական վավերացման գործընթացը ներառում է հետևյալ չորս փուլերը.

1. Անձի կողմից ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման միջոցով ձեռք բերված ուսումնական արդյունքների **ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ**,
2. Անձի կողմից ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման միջոցով ձեռք բերված ուսումնական արդյունքների **ԳՐԱՆՑՈՒՄ**,
3. Անձի կողմից ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման միջոցով ձեռք բերված ուսումնական արդյունքների **ԳՆԱՀԱՏՈՒՄ**,
4. Անձի կողմից ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման միջոցով ձեռք բերված ուսումնական արդյունքների գնահատման արդյունքների **ՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄ**՝ որակավորման կամ որակավորման տանող նվաճումների, կամ այլ ձևով, ըստ անհրաժեշտության:

¹⁹ European guidelines for validating non-formal and informal learning <http://www.cedefop.europa.eu/en/publications-and-resources/publications/3073> and European Inventory on Validation: <http://www.cedefop.europa.eu/en/events-and-projects/projects/validation-non-formal-and-informal-learning/european-inventory>

Թեև Youthpass սխեմայի սկզբնական նպատակը չի եղել կարողությունների կամ որակավորումների պաշտոնական ճանաչմանը (վավերացմանը) ծառայելը, այն կարող է առնվազն երկու ձևով նպաստել այս համատեքստին՝

1. **Youthpass հավաստագիրը՝** որպես ապացույց և վավերացման պորտֆոլիոյի հնարավոր մաս
2. **Youthpass-ի ինքնագնահատման գործընթացը՝** որպես օգնություն մտորմամբ գրելու և սեփական պնդումները հիմնավորելու գործում, գործունեության ընթացքում զարգացված կարողությունների ցուցադրմամբ:

ԱՅՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԱՁԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ՈՎՔԵՐ ՄՏԱԴԻՐ ԵՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ YOUTHPASS-Ը ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԿԱՐՈՂ ԵՔ ԱՆԵԼ ՇԵՏԵՎՅԱԼԸ՝

Քայլ 1

Խնդրե՛ք նրանց մանրակրկիտ ուսումնասիրել վավերացման գործընթացը և դրա պահանջները: Մասնավորապես, նրանք պետք է հասկանան, թե ինչ կարողություններ են պահանջվում ցանկալի որակավորման համար և որ ապացույցներ են ընդունելի:

Քայլ 2

Գնահատե՛ք եվրոպական երիտասարդական ծրագրերի շրջանակում իրականացվող միջոցառման համապատասխանությունը ցանկալի որակավորմանը: Ստուգե՛ք թե որքանով են ցանկալի կարողությունները զարգացվել միջոցառման միջոցով:

Քայլ 3

Պահանջվող և զարգացված կարողությունների միջև համապատասխանությունը հաստատվելուց հետո խնդրեք մասնակիցներին կատարել ինքնագնահատում անհրաժեշտ կարողությունների մասով: Կարևոր է ոչ միայն պնդել, որ նրանք զարգացրել են այդ կարողությունը ծրագրի ընթացքում, այլ նաև հիմնավորել այդ պնդումը: Խնդրեք մասնակիցներին օգտագործել իրենց Youthpass-ի ինքնագնահատումն իրենց պնդումները հիմնավորելու համար: Ի՞նչ ապացույցներ նրանք կարող են տրամադրել՝ հաստատելու, որ ձեռք են բերել տվյալ կարողությունը:

Եվրոպական երիտասարդական ծրագրերի ընթացումն զարգացված կառուցվածքներ

Որակավորման համար պահանջվող կառուցվածքներ



Ի՞նչ ապացույցներ ունեւ,
 որ զարգացել եւ այս
 կառուցվածքները ծրագրում:

Խնդրե՛ք մասնակիցներին ներառել իրենց Youthpass հավաստագիրը որպէս ապացույց իրենց վավերացման պրոտֆոլիոյում, կամ պարզապէս պատճենել իրենց Youthpass ինքնագնահատման տարրերը, կամ երկուսն էլ: Նրանք պետք է պլանավորեն իրենց հետագա քայլերը վավերացման գործընթացում:

Քայլ 4

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿԱՌ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Ըուշաթերթիկ, Հարցազրույց ուսուցման արդյունքների վերաբերյալ, Ուսուցման բուրգ, Ցույց տվեք ձեր STAR-երը (աստղերը)

Գործիքներ

5. «ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՄ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ և ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ»

Երբեմն նախկին կամավորը կամ մասնակիցը կարող է ցանկանալ օգտագործել իր Youthpass հավաստագիրը, երբ մասնակցում է ակադեմիական աստիճան ստանալու դասընթացի կամ պաշտոնական վերապատրաստման ծրագրի: Պատճառները կարող են տարբեր լինել՝ կախված իրավիճակից օրինակ՝ լրացուցիչ միավորներ ձեռք բերել կամավորական աշխատանքի համար, հասնել իր նախկին փորձի և ուսուցման ճանաչման՝ ուսումնական ծրագրի որոշ մասեր բաց թողնելու համար, կամ լեզվի իմացության պաշտոնական գնահատման փոխարեն օգտագործել Youthpass հավաստագիրը որպես օտար լեզվի իմացության ապացույց՝ այլ երկրի բուհ ընդունվելիս: Այնուամենայնիվ, երբ խոսքը վերաբերում է կրթությունը շարունակելուն, սովորողները պետք է ճշտեն դպրոցից/համալսարանից/վերապատրաստում իրականացնող կազմակերպությունից, թե արդյոք նախնական փորձառական ուսուցման հավատարմագրումը (ՆՓՈՒՀ (APEL)) հնարավոր է, և թե ինչպիսի ապացույցներ են անհրաժեշտ: Գործընթացի վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվություն ստանալուց հետո դուք կարող եք առաջ շարժվել և աջակցել սովորողին, ինչպես նշված է նախորդ երկու բաժիններում:

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՍԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Գործիքներ

Ըուշաթերթիկ, Ես ձեզ պետք եմ, որովհետև ես արժանի եմ, Ուսուցման բուրգ, ՔԱՐՏԵՐՈՎ ԻԱՂ. անվանեք ձեր կարողությունները, Տոյց տվեք ձեր STAR-երը (աստղերը), Երազանքի աշխատանք:



Ինֆնագնահատման ռեզիլիենտների օրինակներ

I Օրագրի ռե

ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական երիտասարդական ծրագրերի սովորողների համար իրենց Youthpass ինքնագնահատմանը մոտենալու ձևերից մեկը «օրագրային լեզվի» օգտագործումն է, որը նշանակում է նկարագրել այն միջոցառումները, որոնց նրանք մասնակցել են՝ սահմանափակ հղում կատարելով կարողությունների զարգացմանը: Օրագրային լեզուն հաճախ լի է ծրագրին հատուկ ժարգոնով: Թեև այս ոճը բավականին հարմար է անձնական օգտագործման համար, այն շատ սահմանափակ արդյունավետություն ունի, երբ խոսքը վերաբերում է երիտասարդական միջազգային աշխատանքի համատեքստից դուրս Youthpass-ի օգտագործմանը:

Օրինակ

«Մենք աշխատել ենք խմբերով: Ես գաղափարներ առաջարկեցի և մյուսների հետ միասին մենք մշակեցինք դրանք: Ես քրտնաջան աշխատում էի իմ խմբի հետ ու փորձում առավելագույնս հետևել հրահանգներին՝ լավ արդյունք ստանալու համար: Ներկայացումներ էր կազմակերպում օտար լեզվով:»

II Անդրդիման ռե

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՎԱՐԿՈՒՄ

Youthpass-ի հավաստագրերում հաճախ օգտագործվող մեկ այլ մոտեցում է նոր զարգացված կարողությունների թվարկումը՝ առանց այնպիսիների հիմնավորման: Սա լավ հիմք է Youthpass-ի օգտագործումն ընդլայնելու համար, սակայն այն պահանջում է լրացուցիչ աշխատանք, որպեսզի նման հավաստագրին ավելի մատչելի և համոզիչ լինի «արտաքին աշխարհից» մարդու համար:

Օրինակ

«Ես սովորեցի, թե ինչպես գաղափարները վերածել գործողության: Ես սովորեցի, թե ինչպես լինել ստեղծագործ և նորարար: Ես սովորեցի, որ պետք է համարձակորեն ռիսկի դիմել և շատ բան սովորեցի ծրագրերի կառավարման մասին»:

Ինֆնագնահատման ռեժիմի օրինակներ.



Համոզման ռեժիմ

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ և ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՏՐԱՍԱՐԴՈՒՄ

Youthpass հավաստագրերի կիրառելիությունը և ծրագրում ձեռք բերված կարողությունների փոխանցելիությունը բարձրացնելու համար խորհուրդ է տրվում հստակ անվանել ձեռք բերված կարողությունը (օգտագործելով «թիրախի» լեզուն) և ներկայացնել սեփական պնդումների ապացույցներ (այսինքն՝ ներկայացնել կոնկրետ օրինակներ, թե ինչպես այս կարողությունը գործնականում կիրառելը հանգեցրեց դրական արդյունքի): Ստորև բերված է ապացույցների տրամադրման STAR ձևաչափի օրինակ: Այս տեխնիկան կարող է օգտագործվել նաև ինքնակենսագրականում, ուղեկցող նամակներում կամ աշխատանքային հարցազրույցի ժամանակ սեփական կարողությունների մասին պնդումներ անելու համար:

Օրինակ

«Ծրագրի ընթացքում ես բարելավեցի իմ ճկունությունը թիմում աշխատելիս: Ես երկու ամիս աշխատել եմ ութ այլ երիտասարդներից բաղկացած թիմի հետ՝ տեղական քարոզարշավի ծրագիր կազմելու շուրջ: Հանկարծ, ֆինանսավորման կրճատման պատճառով, մեր մի քանի սկզբնական գաղափար այլևս հնարավոր չէր իրագործվել, ուստի մենք ստիպված էինք ամեն ինչ հետաձգել: Թեև ես անձամբ մեծ ներդրում էի ունեցել սկզբնական միջոցառումներից մի քանիսում, ես համաձայնեցի միավորել պլանավորված որոշ միջոցառումները և հրաժարվել մյուսներից՝ նկատի ունենալով քարոզարշավի հիմնական նպատակը: Այս իրավիճակը հանգեցրեց ավելի լավ թիմային միասնության, այնուհետև հաջող քարոզարշավի»:

STAR մոտեցումը հարմար է օգտագործել ոչ միայն հաջող իրավիճակներ նկարագրելիս, այլ նաև կարող է կիրառվել ձախողումների հետ կապված իրավիճակների դեպքում, երբ արդյունքը եղել է այն, ինչ մարդը սովորել կամ գիտակցել է տվյալ իրավիճակում: Սա թույլ է տալիս սովորողներին ցուցաբերել իրենց՝ ուսուցման համար բաց լինելը և ինքնազարգացման ձգտումը:

² Interview Skills Consulting Ltd. [The Successful Interview Guide](#) (2003-2016). STAR and similar approaches used in competency-based job interviews.



Նկարագրեք
իրավիճակ,
որտեղ դրսևորել
կամ սովորել եք
ձեր ներկայացրած
կարողությունը:


Որո՞նք էին այն
խնդիրները, որոնք
պետք է կատարեիք
այդ իրավիճակում,
որո՞նք էին կոնկրետ
մարտահրավերները,
որոնց հետ պետք է
գործ ունենայիք:

Որո՞նք էին այն
գործողությունները,
որոնք ձեռնարկել եք այս
խնդիրները կատարելու
համար և ինչպե՞ս
եք հաղթահարել այդ
մարտահրավերները:

Որո՞նք էին ձեր
գործողությունների
արդյունքները,
ի՞նչ սովորեցիք այդ
իրավիճակից:



Ձեր կարողությունների ապացույցներ տրամադրելու STAR ձևաչափը



IV

ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԿԱՐԱԳՐԵԼՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐ ՈՒ ԽՈՐՀՈՒՐԻՆԵՐ

Anita Silva կողմից

« Տեսականորեն, տեսականը և գործնականը նույնն են,
բայց գործնականում դրանք շատ տարբեր են » :

Սովորաբար վերագրվում է Յոզի Բերային

Իմանալը, թե ինչ գիտես, խաբուսիկ բան է. մենք դա արդեն հաստատել ենք: Իմացածը **գրելը** կարող է նույնիսկ ավելի խաբուսիկ լինել, հատկապես, եթե մարդը, օրինակ՝

- երիտասարդ է,
- սովոր չէ բացատրել իր սեփական կարողությունները,
- գրում է դրանց մասին պարզապես դրանք ցուցադրելու փոխարեն,
- հատուկ հարց չի ստացել այդ մասին:

Դժվար է այդպես չէ՞: Հակիրճ, բայց նաև ամբողջական նկարագրություն ապահովելու համար գրելու լավ հմտություններ են անհրաժեշտ (ոչ ոք չի ցանկանում կարդալ վեպ ձեր կարողությունների մասին): Այն պետք է լինի իրատեսական, բայց նաև համոզիչ: Արդյո՞ք դա նման չէ մասնակցին խնդրելու, որ դրսևորեն Ֆրեյդի վերլուծական կարողությունները և Թոլքինի գրավոր հմտությունները:

Չնայած, որ դա դժվար է, մենք հավատում ենք, որ երիտասարդները կարող են դա անել: Սակայն նրանք կարող են սկզբում մի փոքր օգնության կարիք ունենալ: Բարեբախտաբար, սա երիտասարդական աշխատանքի սկզբնական նպատակն է՝ աջակցել երիտասարդներին նրանց զարգացման գործում, և մենք լրջորեն հավատում ենք երիտասարդների կարողություններին:

Ըստնաբար, միլիոն եվրո արժողությամբ հարցը հետևյալն է՝

ԻՆՉՊԵՐՍ կարող եմ որպես երիտասարդական աշխատող, դասընթացավար կամ մենթոր աջակցել սովորողներին իրենց ուսուցման արդյունքների վերաբերյալ ավելի իրազեկ դառնալու և Youthpass-ի միջոցով դրանք ուրիշների համար ավելի տեսանելի դարձնելու հարցում:

Այս գլուխը վերաբերում է այս բոլոր **հարցերին**: Մենք հավաքել ենք մի քանի գործնական գաղափարներ այն մասին, թե ինչպես կարող եք աջակցել մասնակիցներին կամ երիտասարդական խմբերին գրել հզոր ինքնազնահատականներ և վարճանալայրճնթացքում: Այս բաժինը պարունակում է ինտերակտիվ **մեթոդների** քայլ առ քայլ նկարագրություններ, որոնք նախատեսված են օգնելու ձեզ ծանոթացնել մասնակիցներին ինքնազնահատական գրելու՝ ոմանց համար սարսափելի աշխարհին՝ միաժամանակ զարգացնելով նրանց մտորման կարողությունները և թույլ տալով նրանց շարունակել կատարելագործել իրենց գրելու հմտությունները: Այն նաև առաջարկում է **խորհուրդներ և հնարքներ**, որոնք կդարձնեն ձեր օժանդակման աշխատանքն ավելի հարթ և արդյունավետ: Ի վերջո, մենք առաջարկում ենք տարբեր տեսակի ռեսուրսներ այս գործընթացում օգտագործելու համար:


Իհարկե, այս գործիքների արդյունավետությունը մեծապես կախված է այն բանից, թե ինչպես են դուանք իրականացվում: Ձեզանից է կախված մտորելն այն մասին, թե դուք և մասնակիցներն ինչ նՄԱՍԱԿունեք, որ ցանկանում եք իրագործել, և հարմարեցնել այն գործիքները, որոնք կօգնեն ձեզ ու նրանց ստանալ ցանկալի արդյունքները: Դրա համար կարևոր է հաշվի առնել ձեր մասնակիցների տարիքը և պատմությունը, ինչպես նաև ժամանակն ու տարածքը, որը տրամադրում եք՝ աջակցելու նրանց իրենց ինքնազնահատականը գրելու հարցում:

Յուրաքանչյուր վարժություն նախատեսված է օգնելու սովորողներին բացահայտելու իրենց կողմից ձեռք բերված կարողությունները բացատրելու նոր ուղիներ: Սա նշանակում է, որ երբեմն դուք պետք է խնդրեք մասնակիցներին կենտրոնանալ մեկ կոնկրետ կարողության կամ ուսուցման փորձի վրա և օգտագործել այն որպես հիմք վարժության համար:

Պատրաստ ե՞ք: Գնացի՛նք:

1. ՄԵԹՈԴՆԵՐ

1. ՄԵՏԱՂԱԴՐԱՄԻ ԵՐԿՈՒԿՈՂՄԵՐԸ
2. ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ
3. ԿԵՏԵՐԻ ՄԻԱՑՈՒՄ
4. ԵՍ ՁԵՉ ՊԵՏՔ ԵՄ, ՈՐՈՎԶԵՏԵՎ ԵՍ ԱՐԺԱՆԻ ԵՄ
5. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
6. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲՈՒՐԳ
7. ՔԱՐՏԵՐՈՎ ԽԱՂ. ԱՆՎԱՆԵՔ ԶԵՐ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
8. ՑՈՒՅՑ ՏՎԵՔ ԶԵՐ STAR-ԵՐԸ (ԱՍՏՂԵՐԸ)
9. ԵՐԱԶԱՆՔԻ ԱՇԽԱՏԱՆՔ
10. ԻՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՒՆԵՐԸ
11. ՀԱՍՑՐԵՔ ԱՅՆ ՆՈՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ
12. ՀՈՒՅԶԵՐՈՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ
13. ԹՈՂ ՄՆԱ՝, ԹԵ՛ ԳՆԱ



1. Մետադադրամի երկու կողմերը

Այն, ինչ զիտեն մասնակիցները, շատ կարևոր է: Բայց արդյո՞ք դուք գիտակցում եք, որ այն, ինչ նրանք չզիտեն, նույնպես շատ արժեքավոր է: Գործատուները, օրինակ, միշտ փնտրում են այն, ինչ թեկնածուին յուրահատուկ է դարձնում: Սա հասկանալու եղանակներից մեկն աշխատանքային հարցազրույցների ժամանակ թեկնածուների ուժեղ և թույլ կողմերն ուսումնասիրելն է: Արդյո՞ք ձեր սովորողները պատրաստ են մտորման ձևով բացատրել իրենց սահմանափակումները: Այս վարժությունը կարող է օգնել:



ԽՄԲԻ ՉԱՓ

Ցանկացած



ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ

20-40 րոպե

ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ (ՏԱՐԱԾՔ, ՆՅՈՒԹԵՐ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ՄԱՐԴԻԿ)



- Թղթե մետադադրամներ (տե՛ս առձեռն նյութը)
- Գրիչներ



ՆՊԱՏԱԿ

- Օգնել մասնակիցներին արտաբերել, թե ինչ են նրանք սովորել և ինչ կարողություններ դեռ պետք է զարգացնեն:
- Ստորել այն մասին, թե որքան կարևոր է ընդունել այն, ինչ նրանք չզիտեն:

ՄԵԹՈԴԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ



Ուսուցման արդյունքները նման են մետադադրամի երկու կողմերի: Այն ամենի համար, ինչ սովորում ենք, կա մի բան, որը դեռ պետք է բացահայտենք: Իրազեկ լինելը այն մասին, թե ինչ չզիտենք, հիանալի միջոց է ուսուցման նոր ուղիներ բացահայտելու և հետաքրքրասիրություն առաջացնելու համար, և սա կարևոր է, եթե մենք ցանկանում ենք շարունակել ուսուցումը: Այս վարժության նպատակն է օգնել մասնակիցներին անել դա:

ՀՐԱՆԱՆԳՆԵՐ

- Յուրաքանչյուրին տվե՛ք մեկական թղթե մետաղադրաման և խնդրեք մի կողմում գրել իրենց սովորածը:
- Այնուհետև բացատրե՛ք որ նրանք ավելի ուշ կքննարկեն իրենց գրածը, և կարող են վերջում մետաղադրամներն իրենց պահել:
- Ավարտելուց հետո, խնդրե՛ք նրանց գրել «սակայն» նախադասությունը մետաղադրամի մյուս կողմում՝ բացատրելով այն, ինչը նրանք դեռ չեն սովորել կամ պետք է բարելավեն: Օրինակ՝ կողմ 1՝ «Ես իմացա ԵՄ հաստատությունների մասին», կողմ 2՝ «Սակայն, ինձ դեռ հետաքրքիր է ավելին իմանալ այն մասին, թե ինչպես են տարբեր հաստատությունները համագործակցում»:
- Յուրաքանչյուր մասնակցի բաժանեք ևս երկու մետաղադրամ: Խնդրեք նրանց անել նույն բանն այս լրացուցիչ մետաղադրամների հետ՝ նշելով իրենց սովորած այլ բաները 1-ին կողմում և առնչվող մարտահրավերները 2-րդ կողմում:
- Վերջում խնդրեք մասնակիցներին կարդալ իրենց գրածը:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

- Իրական մետաղադրամներն ունեն դրամական արժեք: Ի՞նչ եք կարծում՝ ձեր գրածներն արժեք ունե՞ն:
- Ո՞ր կողմն ավելի մեծ արժեք ունի: 1-ին, թե՞ 2-րդ կողմը: Ինչո՞ւ:
- Արդյո՞ք կարևոր է մտածել այն մասին, թե ինչ դեռ չգիտենք: Ինչո՞ւ:
- Արդյո՞ք ձեր մետաղադրամների վրա կան նախադասություններ, որոնք կցանկանայիք օգտագործել ձեր Youthpass-ում:



ՀԻՇԵԼ



Հարմարեցման գաղափարներ

- Եթե որոշ մասնակիցներ դժվարանում են տեսնել կամ գրել, կարող եք իրական մետաղադրամներ օգտագործել: Պարզապես տվեք մետաղադրամ և խնդրեք նրանց զգալ մետաղադրամի մի կողմը: Այնուհետև ասացեք նրանց, որ ուսուցման արդյունքները նման են մետաղադրամների, քանի որ դրանք ունեն որոշակի արժեք: Խնդրեք նրանց ասել ձեզ մի բանի մասին, որ նրանք

սովորել են: Ապա խնդրեք նրանց զգալ մյուս կողմը: Քանի որ դա մյուս կողմն է, խնդրեք նրանց կիսվել մի բանով, որը դեռ չգիտեն նրանց կողմից նախկինում նշած թեմայի մասին: Այդ ընթացքում դուք կարող եք գրի առնել նրանց ասածը: Քննարկման ընթացքում դուք կարող եք կարդալ ձեր գրառումները նրանց համար և հարցնել, թե արդյոք նրանք ցանկանում են որևէ բան ներառել իրենց ինքնագնահատման մեջ:

Խորհուրդներ և հնարքներ

- Եթե ժամանակ ունեք, կարող եք մասնակիցներին խնդրել գրել, թե ինչպես կարող են հետագայում զարգացնել այդ կարողությունը: Օրինակ՝ կողմ 1 - «Ես սովորել եմ, թե ինչպես գրի առնել իմ սեփական մտորումները», կողմ 2 - «Այնուամենայնիվ, ես դեռ պետք է զարգացնեմ այդ հմտությունը: Ես կարող եմ մասնակցել ստեղծագործական կերպով գրելու դասընթացի՝ ավելի մեծ վստահություն ձեռք բերելու և իմ գրելու հմտությունները բարելավելու համար»:
- Դուք կարող եք նաև առաջարկել տեղափոխել այս կարճ նախադասություններն անմիջապես իրենց ինքնագնահատման մեջ՝ ընտրելով այն կարողությունների վանդակը, որը լավագույնս համապատասխանում է:

Դիսկեր, դժվարություններ և այլն

Մասնակիցները կարող են խոցելի զգալ՝ այն բաների մասին գրելիս, որոնք դեռ չեն սովորել կամ որոնց մասով վստահ չեն: Այդ պատճառով կարևոր է՝

- Համոզվել, որ դուք նրանց տեղյակ եք պահել, որ բնական է ունենալ հարցեր և ընդունել այն, ինչ նրանք չգիտեն: Գործընթացի ընթացքում դուք կարող եք ընտրել լրացնել ձեր սեփական մետաղադրամն ու նրանց հետ կիսվել ձեր սեփական ուսուցմամբ և ուսումնական կարիքներով:
- Մետաղադրամները վերջում մի հավաքեք: Վերաբերվեք դրանց որպես անձնական նյութի, ինչպես օրագիրը, որը նրանք պետք է պահեն իրենց:

ՍՏԵՂԾԵԼ Է՝

Anita Silva



Ես սովորեցի



Ես սովորեցի



Սակայն



Սակայն



2. Հուճաթերթիկ

Ըիշու՞մ եք, երբ նստում էիք քննության՝ գրպանում պահելով փոքր նշումներ՝ այդ քննության համար անհրաժեշտ տեղեկատվությամբ: Իհարկե, ոչ: Դա կոչվում է խաբեություն, և դու երբեք դա չէիք անի: ;) Այնուամենայնիվ, սա հուշաթերթիկ է, որն օգնում է մասնակիցներին գտնել ճիշտ բառեր, որպեսզի գրեն այն, ինչ արդեն գիտեն գեղեցիկ ամբողջական նախադասություններով: Ըիմա խաբելու ժամանակն է:

Իսկ եթե լուրջ, ապա երբեմն հուշաթերթիկները սովորելու լավ միջոց են, և այստեղ գաղափարն այն է, որ մասնակիցներին տրվեն մի քանի պարզ բառեր, որոնք կարող են օգնել նրանց սկսել արտաբերել այն, ինչ նրանք արդեն սովորել են: Կամ եթե նրանք արդեն գիտեն, թե ինչ կարողություններ են զարգացրել, դա կարող է օգնել նրանց նշել դրանք ավելի պարզ և հակիրճ լեզվով:



ԽՄԲԻ ՉԱՓ

Ցանկացած



ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ

30 րոպե

ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ (ՏԱՐԱԾՔ, ՆՅՈՒԹԵՐ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ՄԱՐԴԻԿ)

- Թուղթ
- Գրիչներ
- Ֆլիպչարթ, գրատախտակ կամ դրա նման որևէ բան, կամ հուշաթերթիկի պատճեններ



ՆՊԱՏԱԿ

- Օգնել մասնակիցներին գրավոր արտահայտել իրենց ուսուցման արդյունքները:

ՄԵԹՈԴԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՅԼ ԱՈՒ ՔԱՅԼ



- Յուրաքանչյուր անձի համար նախատեսված ֆիլաչարթի կամ հուշաթերթիկի վրա (տե՛ս ստորև բերված աղյուսակը) գրեք բառեր տարբեր կատեգորիաներով, որպեսզի օգնեք մասնակիցներին կառուցել իրենց նախադասությունները:
- Ցույց տվե՛ք ֆիլաչարթը (կամ բաժանեք հուշաթերթիկները) և բացատրեք սա մասնակիցներին. «Դուք գիտեք, որ որոշ բաներ եք սովորել, բայց «սովորելը» բառ է, որը երբեմն սահմանափակում է ձեր ընտրանքները: Այս ֆիլաչարթն օգնում է ձեզ ուսումնասիրել ձեր ուսումնական փորձի այլ ասպեկտները»:
- Այնուհետև, ինչդրե՛ք մասնակիցներին գրել ամբողջական նախադասություններ իրենց ուսուցման արդյունքների մասին՝ օգտագործելով աղյուսակի բայերն ու արտահայտությունները:
- Աղյուսակի յուրաքանչյուր սյունակ անկախ ցուցակ է: Սա նշանակում է, որ մասնակիցները կարող են օգտագործել 1-ին սյունակի 1-ին արտահայտությունը և համատեղել այն 2-րդ սյունակի 3-րդ և 3-րդ սյունակի 5-րդ արտահայտությունների հետ:

Քայլ 1

Քայլ 2

Քայլ 3

Քայլ 4

Օրինակ. «Եռօրյա ճամբարի ընթացքում ես ուսումնասիրեցի խմբում որոշումների կայացման գործընթացը միջազգային երիտասարդական խմբի հետ: Մենք պետք է ամեն ինչ որոշեինք միասին և սովորեցինք, թե ինչպես դա անել առանց վիճելու: Դա ինձ հնարավորություն կտա ապագայում ավելի լավ թիմի անդամ դառնալ»:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

- Արդյո՞ք կարողացաք մի քանի նախադասություն գրել ձեր ուսուցման արդյունքների վերաբերյալ:
- Արդյո՞ք աղյուսակն օգնեց ձեզ այդ գործընթացում: Ինչպե՞ս դա ձեզ կոնկրետ օգնեց:
- Արդյո՞ք զգում եք, որ այս նախադասությունը հստակ նկարագրում է ձեր ուսուցման արդյունքները:
- Արդյո՞ք այս աղյուսակում կան բառեր կամ արտահայտություններ, որոնք կարող եք օգտագործել ուսուցման այլ արդյունքներ ուսումնասիրելու համար:



ՀԻՇԵԼ



Որոշ մասնակիցների համար աղյուսակի բառերը կարող են նոր լինել: Եթե դա այդպես է, համոզվեք, որ ժամանակ եք հատկացնում բացատրելու: Դրանց նշանակությունը նախքան վարժությունը սկսելը:

Ակնհայտ է, որ դուք կարող եք աղյուսակը հարմարեցնել ձեր լեզվին և ընտրել այլ բառեր, որոնք ավելի իմաստային են ձեր համատեքստում:

ՀԱՐՄԱՐԵՑՐԵԼ Է՛

Anita Silva





Հուճաթեղթիկ

Ես ուսումնասիրեցի...
Ես քննարկեցի...
Ես ընդունեցի...
Ես հարցրեցի...
Ես չկարողացա...
Ես վայելեցի...
Ես մտորեցի...
Ես հաստատեցի...
Ես հայտնաբերեցի...
Ես կարողացի...
Ես զգացի...
Ես երագեցի...
Ես լսեցի...
Ես փորձեցի...

Որովհետև...
Անելով...
Դրա միջոցով...
Առանց դրա...
Մինչ...
Երբ...
Այն մասին...
Միջոցով...
Ընտո...
Չնայած...
Այդ...

Դա վերաբերում է...
Դա ինձ թույլ կտա...
Դա կերևա...
Դա օգտակար կլինի...
Դա ինձ հնարավորություն կտա...
Դա ինձ ցույց տվեց...
Դա ինձ մոտիվացրեց...
Դա ինձ կանգնեցրեց...
Դա ինձ համար պարզ դարձրեց...
Դա փոխեց...
Դա ավելացրեց...
Դա բարելավեց...
Դա բացահայտեց...
Դա ստեղծեց...

3. Կետերի միացում

Ուսուցման փորձից օրեր կամ շաբաթներ անց ինքնագնահատում գրելիս, այդ փորձի հիշողությունը, ամենայն հավանականությամբ, կմոռացվի: Խմբերի հիշողության օգտագործումը կարող է օգտակար լինել այդ փորձի կարևոր տարրերը վերհիշելու համար: Այս վարժությունը նախատեսված է աջակցելու մասնակիցներին օգնել միմյանց հիշելու իրենց ուսուցման ուղու մանրամասները, որոնք կարող են օգտակար լինել իրենց ինքնագնահատականները գրելիս:



ԽՄԲԻ ՉԱՓ

Երեքից տասներկու անձ



ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ

Մոտ. 40 րոպե
(կախված խմբի չափից)

ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ (ՏԱՐԱԾՔ, ՆՅՈՒԹԵՐ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ՄԱՐԴԻԿ)



- Մեծ պաստառ կամ թղթի գլան
- Գրիչներ
- Գունանշիչներ



ՆՊԱՏԱԿ

- Թույլ տալ մասնակիցներին օգտագործել միմյանց խոսքերն ու հիշողությունները՝ կոնկրետ ուսումնական փորձառությունը (օրինակ՝ երիտասարդական փոխանակումը) իմաստավորելու/հասկանալու համար:

ՄԵԹՈԴԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՅԼ ԱՈՒ ՔԱՅԼ



- Խմբի համար նախապատրաստեք մեծ դատարկ պաստառ և յուրաքանչյուր մասնակցի սվեթ մեկական գրիչ: Գրիչները բոլորը պետք է լինեն տարբեր գույների:
- Խնդրեք մասնակիցներին գրել հուշող բառեր պաստառի վրա որևէ տեղ, փուլերով, ինչպես նկարագրված է ստորև: Հատկացրեք երկուսից չորս րոպե յուրաքանչյուր փուլի համար:
- 1-ին փուլի ընթացքում խնդրեք նրանց գրել բառեր, որոնք վերաբերում են այն թեմաներին, որոնց մասին նրանք սովորել են սովյալ ուսումնական փորձի ընթացքում (օրինակ՝ թիմային աշխատանք, հանդուրժողականություն, ստեղծագործականություն...):
- 2-րդ փուլի ընթացքում խնդրեք նրանց գրել բառեր այն բաների մասին, որոնք նրանք փորձարկել են, օրինակ՝ վարժությունների կամ իրենց կողմից փորձած բաների մասին (օրինակ՝ միասին ուտեստ պատրաստել, ձիավարություն, խաղեր խաղալ...):
- 3-րդ փուլի ընթացքում խնդրեք նրանց գրել բառեր այն բաների մասին, որոնք նրանք իրականում սովորել են (աշխատել բազմամշակութային թիմում, լինել համբերատար, ավելի լավ անգլերեն խոսել...): Նշում. կարող եք նվազեցնել կամ ավելացնել փուլերի քանակը՝ ներառելով, օրինակ՝ « ի՞նչն է ձեչ մեջ փոխվել», « ի՞նչն եք բաց թողել» և այլն: Դյուրացրեք գործընթացը՝ օգնելով մասնակիցներին հիշել գործընթացի տարբեր պահերը (նախապատրաստական դասեր մեկնելուց առաջ, միջոցառումների ընթացքում, ընդմիջումների ժամանակ և այլն):
- Վերջին փուլից հետո մասնակիցներին խնդրեք կապակցել (իրենց կամ ուրիշների) տարբեր բառերը պաստառի վրա՝ ստեղծելով լաբիրինթոս կամ գիծ գծելով իրենց գունանշիչներով: Յուրաքանչյուր մասնակից պետք է ընտրի պաստառի վրա գրված ցանկացած բառ, որը, իր կարծիքով, համապատասխան է իր ուսումնական ուղուն, նույնիսկ եթե այդ բառերը գրված են ուրիշի կողմից: Նրանք կարող են դրանք կապակցել այնպես, ինչպես ցանկանում են, քանի դեռ դա իմաստ ունի նրանց համար:
- Այնուհետև յուրաքանչյուր մասնակցի խնդրեք օգտագործել իր կապակցած բառերը գրավոր տեքստում, որը պետք է գրվի առանձին թղթի վրա: Այս քայլին հատկացրեք 15-ից 20 րոպե:
- Որպես այլընտրանք, կարող եք խնդրել երիտասարդներին բարձրաձայն կարդալ իրենց տեքստերը կամ օգտագործել պաստառը որպես ոգեշնչում իրենց Youthpass-ը ստեղծելու համար:

Քայլ 1

Քայլ 2

Քայլ 3

Քայլ 4

Քայլ 5

Քայլ 6

Քայլ 7

Քայլ 8



ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

- Ի՞նչ էիք զգում ձեր ուսումնական փորձը վերհիշելիս:
- Արդյո՞ք այլ մարդկանց խոսքերն օգնեց:
- Այժմ նայելով ձեր տեքստին, ինչպե՞ս եք վերաբերում ձեր ուսումնական փորձին:
- Ի՞նչ կարող եք օգտագործել այս տեքստից ձեր Youthpass-ի համար:

ՀԻՇՆԵԼ



Եթե մասնակիցները դժվարանում են գրել, ապա իրենց ուսուցման փորձին վերաբերող բառեր գրել խնդրելու փոխարեն, կարող եք տրամադրել նրանց հուշող բառերով քարտերի կապուկ և խնդրել ընտրել դրանցից մեկը կամ առաջարկել նոր քարտեր: Ի վերջո, յուրաքանչյուր մասնակցին իր սեփական տեքստը գրել խնդրելու փոխարեն, կարող եք նաև խնդրել նրանց խոսել իրենց համար նշանակություն ունեցող քարտերի մասին, մինչ դուք նշումներ կատարեք նրանց փոխարեն Երբ նրանք ավելի վստահ լինեն իրենց եզրակացությունների մասով, օգնեք նրանց գրել իրենց տեքստը:

ՍՏԵՂԾԵԼ Է՛

Anita Silva

teamwork

CREATIVITY

Tolerance

cooking together

HORSE RIDING

playing games

WORKING
IN MULTICULTURAL
TEAMS

Speaking
better English

being patient

4. Ես ձեզ պետք եմ, որովհետև ես դրան արժանի եմ

Նույնիսկ երբ մարդիկ գիտեն, թե ինչ են սովորել, երբեմն դժվար է պատկերացնել, թե այդ գիտելիքը կամ հմտությունը ինչ արժեք կարող է ունենալ ուրիշների համար: Այս վարժությունը մասնակիցներին թույլ է տալիս իրերը տեսնել գործատուի կամ ապագա գործընկերոջ տեսանկյունից ու պատկերացնել, թե նրանք ինչպես կգնահատեն մասնակիցների ձեռք բերած կարողությունները:



ԽՄԲԻ ՉԱՓ

Ցանկացած



ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ

30 րոպե

ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ (ՏԱՐԱԾՔ, ՆՅՈՒԹԵՐ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ՄԱՐԴԻԿ)



- Ուսումնական օրագրեր
- Գրիչներ և թուղթ



ՆՊԱՏԱԿ

- Ճանաչել մասնակիցների սովորածի արժեքը, որպեսզի նրանք կարողանան գրել այնպիսի ինքնագնահատում, որ ուրիշները կցանկանան կարդալ և գնահատել:

ՄԵԹՈԴԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ



Ինչորեք մասնակիցներին ընտրել իրենց ծրագրում զարգացված կարողություն և ավարտել հետևյալ նախադասություններից մեկը կամ մի քանիսը՝

- Կազմակերպությունը/ընկերությունը կարող է օգտագործել իմ կարողությունը... քանի որ այն կբարելավի իր...
- Ես արժեքավոր թիմի անդամ կլինեմ, քանի որ այժմ կարող եմ...
- Ինձ կվճարեն հետևյալն անելու համար... որովհետև իմ գործատուն կստանա...
- Ես կկարողանամ սովորել... որովհետև ես արդեն գիտեմ/կարող եմ...
- Ես ավելի լավ քաղաքացի կլինեմ, որովհետև... և դա օգտակար է...

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՇԱՐՑԵՐ

- Ի՞նչ արժեք ունի ձեր նոր ձեռք բերած կարողությունն ուրիշների համար:
- Ինչպե՞ս կարող եք արտահայտել դա ձեր Youthpass-ը գրելիս:
- Ինչպե՞ս կարող եք ցույց տալ այս կարողության ապացույց:
- Կարո՞ղ եք բերել այնպիսի իրավիճակի օրինակ, երբ այն օգտագործել եք:



ՀԻՇԵԼ



Կարելի է կազմել այլ նախադասություններ, եթե դրանք ավելի լավ են համապատասխանում ձեր մասնակիցների համատեքստին: Եթե գրելը դժվար է, ապա վարժությունը կարելի է կատարել նաև բանավոր:

ՍՏԵՂԾԵԼ Է՛

Anita Silva

5. Հարցագրույց ուսուցման արդյունքների վերաբերյալ

Լավ գրույցը երբեմն այն ամենն է, ինչ ձեզ հարկավոր է ձեր գաղափարները պարզաբանելու համար: Այս մեթոդը մասնակիցներին թույլ է տալիս բառացիորեն արտահայտել իրենց ուսուցման կարևոր ասպեկտները:



ԽՄԲԻ ՉԱՓ

Երեք կամ ավելի



ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ

90 րոպե

ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ (ՏԱՐԱԾՔ, ՆՅՈՒԹԵՐ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ՄԱՐԴԻԿ)



- Թուղթ
- Գրիչներ
- Հարցագրույցի ուղեցույց



ՆՊԱՏԱԿ

- Աջակցել սովորողներին իրենց ուսուցման արդյունքները ձևակերպելու հարցում:
- Կիսավել ուսուցման արդյունքներով և փոխանակել դրանք:

ՄԵԹՈԴԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՅԼ ԱՈՒ ՔԱՅԼ



- Հստակեցրեք, որ ուղեցույցի ոչ բոլոր հարցերը պետք է օգտագործվեն: Հարցերը տրված են, որպեսզի ոգեշնչեն հարցազրուցավարին և անհրաժեշտության դեպքում առաջարկեն հնարավոր հարցեր: Հարցազրուցավարը ցանկության դեպքում կարող է ավելացնել այլ հարցեր:
- Հարցազրույցին մասնակցում են երեք մասնակիցներ, որոնցից յուրաքանչյուրը տարբեր դեր ունի՝ հարցազրուցավար, հարցազրույց տվող և զեկուցող: Վարժության ընթացքում յուրաքանչյուր մասնակից հնարավորություն ունի փոխելու դերերը: Զեկուցողը գրի է առնում հարցազրույցի արդյունքներն այնպես, որ հարցազրույց տվողը կարողանա օգտագործել այդ նշումները որպես իր ուսումնական արդյունքների հիմք:
- Մեկ հարցազրույցը տևում է մոտավորապես 20 րոպե:

Քայլ 1

Քայլ 2

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

- Ինչպե՞ս էր տարբեր դերերում լինելը (հարցազրուցավար, հարցազրույց տվող և զեկուցող):
- Այժմ ինչպե՞ս եք վերաբերվում ձեր ուսումնական արդյունքների ձևակերպմանը:

ՍՏԵՂԾԵԼ Է՛

Paul Kloosterman



Ուսուցման արդյունքների վերաբերյալ հարցազրույցի հարցեր

Կարո՞ղ եք նկարագրել այդ պահը (պահերը):

Ինչո՞վ էր տարբերվում այդ պահը (պահերը):

Ո՞րն էր ձեր դերն այդ պահին:

Ի՞նչ արեցիք:

Ի՞նչ է դա ասում ձեր մասին:

ՈՐՊԱՇԵՐՆ
ԵՔ ԻՍԿԱՊԵՍ
ՎԱՅԵԼԵԼ
ՇՐԱԳՐԻ
ԸՆԹԱՑՔՈՒՄ:

Ի՞նչն է ձեզ դուր եկել:

Ի՞նչն էր ձեզ մոտ լավ ստացվում:

Ինչպե՞ս եք աջակցել թիմին:

Ինչպիսի՞ դերեր եք ստանձնել:

Արդյո՞ք համարում եք ձեզ թիմային խաղացող: Ինչո՞ւ:

Եթե ձեր թիմը լիներ նավի անձնակազմ, անձնակազմի ո՞ր անդամը կլինեիք: Խոհարար, նավապետ, նավաստի, նավավար...

Ի՞նչ է դա ասում ձեր մասին:

ԵՐԲ ԱՇԽԱՏՈՒՄ
ԷԻՔ ԹԻՄՈՒՄ...

ԳՐԱԾՆԱԿՆԵՐ
ԵՐ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՎԵՐԱՆԵՐՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԲ ԷԻՐ ԻՍԿԱՊԵՍ
ՀՊԱՐՏ ԶԵՂԱՆՈՎ:

Ի՞նչ էր պատահել:

Ի՞նչ դեր էիք ստանձնել:

Ի՞նչ էիք անում:

Ինչու՞ էր դա հաճելի:

Ի՞նչ է դա ասում ձեր մասին:



Հարցազրույց 19 Ինքնազննում

ԱՅՍ ԾՐԱԳՐԻՑ ԻՆՉԵՐ ՆԱԽԿԻՆՈՒՄ ՉԵՔ ԱՐԵԼ:

Ինչպե՞ս անցավ:

Ի՞նչ էիք զգում:

Արդյո՞ք զարմացրեցիք ինքներդ ձեզ:

Արդյո՞ք կկրկնեիք դա:

Ի՞նչն այլ կերպ կանեիք այդ դեպքում:

Ի՞նչ է դա ասում ձեր մասին:

ԻՆՉ ԵՔ ԱՆԵԼՈՒ ՉԻՄԱ, ԵՐԻ ԾՐԱԳՐՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է:

Արդյո՞ք կան նոր բաներ, որոնք ցանկանում եք փորձել:

Ո՞ր հարցերի շուրջ եք ցանկանում աշխատել:

Ի՞նչը ծրագրից կտեղափոխեք այլ տեսակի աշխատանք:

Ի՞նչ բացահայտեցիք ձեր մասին:

Ի՞նչ է դա ասում ձեր մասին:

ԻՆՉ ԿԱՍԵՔ ԾՐԱԳՐՈՒՄ ՁԵՐ ԴԵՐԻ ՄԱՍԻՆ....

... ձեր տատիկին:

... ձեր տարրական դպրոցի ուսուցչին:

... մսավաճառին:

... ձեր երեք տարեկան եղբորորդուն:

... եթե հարցազրույց տայիք ազգային հեռուստատեսությամբ:

ԻՆՉ ԴԺՎԱՐ ՊԱՇԵՐ ԿԱՅԻՆ:

Կարո՞ղ եք նկարագրել այդ պահերը:

Ի՞նչն էր դրանք դժվար դարձրել ձեզ համար:

Ինչպե՞ս հաղթահարեցիք մարտահրավերները:

Հետ նայելով, արդյո՞ք նույն կերպ կվարվեիք:

Ի՞նչ է դա ասում ձեր մասին:

6. Ուսուցման բուրգ

Այս գործիքն օգնում է մասնակիցներին կազմակերպել իրենց ուսուցումն ըստ մակարդակների և կազմել նախադասություններ՝ օգտագործելով գործողությունների ցանկը:



ԽՄԲԻ ՉԱՓ

Մեկ մասնակցի հետ անհատական աշխատանքի, կամ զույգերի բաժանված խմբի համար



ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ

90-120 րոպե

ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ (ՏԱՐԱԾՔ, ՆՅՈՒԹԵՐ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ՄԱՐԴԻԿ)



- Ֆիլաչարթի թուղթ
- Մարկերներ
- Գործողությունների բառերով առձեռն նյութ



ՆՊԱՏԱԿ


- Բացահայտել ուսուցման արդյունքները՝ հետևելով Բլումի ուսուցման արդյունքների վերանայված տաքսոնոմիային (դասակարգմանը):
- Սովորել ձևակերպել ուսուցման արդյունքները՝ օգտագործելով գործողությունների առաջարկվող ցանկը:

ՄԵԹՈԴԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ



Այս վարժությունը հիմնված է Բլումի ուսուցման արդյունքների տաքսոնոմիայի վրա և օգնում է մասնակիցներին պարզել, թե ինչ մակարդակի վրա են իրենց ուսումնական արդյունքները ծրագրից հետո, ու գտնել համապատասխան բառեր՝ դրանք նկարագրելու համար:

Մոդելի համաձայն՝ գոյություն ունի ուսուցման վեց մակարդակ (տե՛ս ստորև բերված գծապատկերը): Յուրաքանչյուր մակարդակի համար առաջարկվում են «գործողություններ/ բայեր», որոնք կարող են օգտագործվել ուսուցման արդյունքը նկարագրելու համար (տե՛ս գործողությունների առձեռն նյութը):



Բլումի ուսուցման արդյունքների վերանայված տաքսոնոմիա

Ծրագրում ուսուցման մի քանի առանցքային ոլորտները որոշելուց հետո (օրինակ՝ օգտագործելով այլ վարժություններ, ինչպիսիք են «ՔԱՐՏԵՐՈՎ ԽԱՂ. անվանեք ձեր կարողությունները» կամ Ուսուցման արդյունքների վերաբերյալ հարցազրույցը), ֆիլաչարթի թղթի վրա նկարեք Բլումի ուսուցման բուրգը և բացատրեք դրա մակարդակները:²¹

²¹ Additional information about Bloom's Revised Taxonomy is available here: <https://cft.vanderbilt.edu/guides-sub-pages/blooms-taxonomy/> or <http://www.celt.iastate.edu/teaching/effective-teaching-practices/revised-blooms-taxonomy/>

Հիշել

Բացատրեք, որ այս փուլը վերաբերում է փորձը վերհիշելու և/կամ տեղեկատվությունը վերարտադրելու ունակությանը (օրինակ՝ ես կարողացել եմ և հիշում եմ թիմի զարգացման փուլերի մասին հիմնական տեղեկատվությունը):

Հասկանալ

Այս փուլը նկարագրում է սեփական ուսուցման ոլորտի ավելի խորը ընկալում ցուցաբերելու ունակությունը (օրինակ՝ վերապատրաստման դասընթացի ընթացքում ես կարող եմ ճանաչել թիմի զարգացման փուլերը մեր թիմային աշխատանքում):

Մակարդակ 1

Մակարդակ 2

Կիրառել

Մակարդակ 3

Այս փուլը վերաբերում է իրական կյանքում գիտելիքների կիրառմանը (օրինակ՝ ես կարող եմ կիրառել և օգտագործել թիմի զարգացման փուլերի մասին իմ գիտելիքներն իմ թիմում և օգնել մեզ անցնել այս փուլերը պլանավորված ու գիտակցված կերպով):

Վերլուծել

Մակարդակ 4

Այս փուլը ենթադրում է ուսուցման ոլորտի ավելի խորը ընկալում, սովորաբար փորձի մասին ընդլայնված մտորումների շնորհիվ (օրինակ՝ ես կարող եմ կարող եմ հասկանալ, թե ինչու է իմ թիմը դժվարությունների հանդիպում նոր նախագիծ սկսելիս: Ես տեսնում եմ այն վարքային դրսևորումները, որոնք օգնում են առաջ գնալ կամ խանգարում են մեզ):

Գնահատել

Մակարդակ 5

Այս փուլը վերաբերում է քննադատական մտորմանը, և որոշակի մոտեցման դրական ու բացասական կողմերի՝ սեփական փորձի հիման վրա դիտարկմանը (օրինակ՝ ես կարող եմ մտորել և հասկանալ, թե ինչու միջազգային խմբերում թիմի զարգացման փուլերը չունեն նույն հաջողականությունը և ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆը, ինչ իմ տեղական թիմում):

Ստեղծել

Մակարդակ 6

Սա որևէ նոր բան՝ սեփական տեսություն կամ մոտեցում ստեղծելու մասին է (օրինակ՝ իմ փորձի հիման վրա ես ստեղծել եմ նոր ուղիներ՝ օգնելու միջազգային թիմերին ավելի լավ աշխատել):

Այժմ խնդրեք մասնակիցներին վերադառնալ իրենց ուսումնական արդյունքներին և խմբավորել դրանք ըստ վերը նշված փուլերի: Եթե դուք քարտեր եք օգտագործում, կարող եք խնդրել նրանց տեղադրել քարտերը այնտեղ, որտեղ նրանք կարծում են, որ իրենց ուսուցումն իրականում տեղի է ունեցել: Որպես այլընտրանք, խնդրեք նրանց կապակցող գծեր գծել կամ գրել իրենց հիմնական ուսումնական արդյունքները բուրգ նկարի վրա:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Ուսումնական արդյունքները բուրգի վրա տեղադրելուց հետո խրախուսեք մասնակիցներին բացատրել իրենց ընտրությունը: Դուք կարող եք տալ մակարդակին համապատասխանող հարցեր, օրինակ՝

- Ո՞րն է ամենակարևոր տեղեկատվությունը և գիտելիքը, որը դուք կարող եք վերարտադրել ուսուցման այս ոլորտում:
- Ինչպե՞ս եք ցույց տալիս, որ այս ամենը լավ եք հասկանում: Կարո՞ղ եք օրինակ բերել:
- Կարո՞ղ եք ավելի մանրմաստ խոսել ձեր սովորածը կիրառելու ունակության մասին: Կարո՞ղ եք այդ ունակությունը կիրառել այլ իրավիճակներում:
- Կարո՞ղ եք բերել այդ ոլորտում ձեր կողմից կատարված լավ վերլուծության օրինակ:
- Արդյո՞ք այս ուսումնական ոլորտի հետ կապված քննադատաբար մտածելու փորձ ունեք:
- Ի՞նչ կարողացաք ստեղծել այս ուսումնական ոլորտի հետ կապված: Ինչպե՞ս կարողացաք անել դա:

Այս քայլից հետո բաժանեք գործողությունների ցանկը և ուսումնական արդյունքների մասին պնդումներ գրելու բանաձևով առձեռն նյութը (լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս բաժին III.4 «Պատրաստվում եմ վավերացման») և թույլ տվեք ձեր մասնակիցներին կատարել վարժությունը բոլոր այն ուսումնական ոլորտների մասով, որոնց մասին խոսել եք: Անհրաժեշտության դեպքում տրամադրեք լրացուցիչ օգնություն:

Հստակ
գործողություն

+

առնչվող
ուսուցման
օբյեկտ

+

իրավիճակ,
որում տեղի
է ունեցել
ուսուցումը

=

Ուսուցման
արդյունքների
մասին պնդում

ՀԱՐՄԱՐԵՑՐԵԼ Է՝

Darko Marković



ՄԱԿԱՐԴԱԿ 1. ՀԻՇԵԼ

Ընտրել	Նկարել	Տեղադրել	Բաց թողնել	Կարդալ	Կրկնել
Հաշվել	Նույնականացնել	Համապատասխանեցնել	Ընդգծել	Վերհիշել	Վերարտադրել
Սահմանել	Պիտակավորել	Ըրշել	Նշել	Արտաբերել	Ընտրել
Նկարագրել	Թվարկել	Անվանել	Մեջբերել	Ճանաչել	Պնդել

ՄԱԿԱՐԴԱԿ 2. ՀԱՍԿԱՆԱԼ

Ասոցացնել	Քննարկել	Արտարկել	Մեկնաբանել	Ներկայացնել	Ասել
Դասակարգել	Տարբերել	Ընդհանրացնել	Փոխկապակցել	Վերահաստատել	Թարգմանել
Հաշվարկել	Գնահատել	Օրինակներ բերել	Դատել	Վերաշարադրել	
Փոխակերպել	Բացատրել	Պատկերազարդել	Համապատասխանեցնել	Ընտրել	
Պաշտպանել	Արտահայտել	Հատկորոշել	Վերափոխել	Ցուցադրել	
Դրսևորել	Ընդլայնել	Եզրակացնել	Կանխատեսել	Ամփոփել	

ՄԱԿԱՐԴԱԿ 3. ԿԻՐԱՌԵԼ

Ավելացնել	Դասակարգել	Բեմականացնել	Համեմատել	Կազմակերպել	Ցույց տալ
Կիրառել	Կատարել	Ջննել	Դատել	Ներկել	Ուրվագծել
Հաշվել	Հաշվարկել	Բացատրել	Շահարկել	Պատրաստել	Լուծել
Փոխել	Բացահայտել	Ընդհանրացնել	Փոփոխել	Արտադրել	Հանել
Ընտրել	Բաժանել	Գծագրել	Գործադրել	Ընտրել	Օգտագործել

ՄԱԿԱՐԴԱԿ 4. ՎԵՐԼՈՒԾԵԼ

Վերլուծել	Միավորել	Դիագրամ գծել	Պատկերագրողել	Ընտրել
Դասավորել	Համեմատել	Տարբերակել	Եզրակացնել	Առանձնացնել
Բաշխել	Ձևավորել	Տարբերակել	Ընգծել	Ստորաբաժանել
Անվանակարգել	Հայտնաբերել	Տարանջատել	Մատնանշել	Հարցում ացկացնել
Դասակարգել	Զարգացնել	Նույնականացնել	Կապակցել	Օգտագործել

ՄԱԿԱՐԴԱԿ 5. ԳՆԱՀԱՏԵԼ

Արժեք որոշել	Եզրահանգել	Քննադատել	Գնահատական տալ	Չափել	Աջակցել
Գնահատել	Հակադրել	Պաշտպանել	Դատել	Դատել	Փորձարկել
Համեմատել	Քննադատել	Որոշել	Արադարացնել	Վարկանիշավորել	

ՄԱԿԱՐԴԱԿ 6. ՍՏԵՂԾԵԼ

Ընտրել	Ձևավորել	Ձևակերպել	Դարձնել	Առաջարկել	Դեր խաղալ
Միավորել	Զարգացնել	Գեներացնել	Կազմակերպել	Վերադասավորել	Պատմել
Կազմել	Մշակել	Խմբավորել	Սկիզբ տալ	Վերակառուցել	Փոխակերպել
Հավաքել	Անել	Վարկածառաջարկել	Պլանավորել	Վերակազմակերպել	
Կառուցել	Տանել	Ինտեգրել	Նշանակել	Վերանայել	
Ստեղծել	Բացատրել	Հորինել	Արտադրել	Վերաշարադրել	

7. Քարտերով խաղ. անվանե՛ք ձեր կարողությունները

Եթե ուսուցման փորձի մասին գրելը խնդիր է դառնում, օգնեք ձեր մասնակիցներին անվանել իրենց կարողությունները և ինքնագնահատումը դարձնել ավելի ոլորին գործընթաց:



ԽՄԲԻ ՉԱՓ

Մեկ մասնակցի հետ անհատական աշխատանքի, կամ զույգերի բաժանված խմբի համար



ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ

60-90 րոպե

ՈՒՍՈՒՐՄՆԵՐ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ (ՏԱՐԱԾՔ, ՆՅՈՒԹԵՐ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ՄԱՐԴԻԿ)



- Կարողություններով քարտերի մեկ կապուկ յուրաքանչյուր մասնակցի համար (տե՛ս առձեռն նյութը), ցանկալի է՝ ստվարաթղթի վրա պատճենված



ՆՊԱՏԱԿ

- Օգնել ճանաչել և անվանել ծրագրի ընթացքում զարգացված կարողությունները:
- Ապահովել հիմք Youthpass հավաստագրում ուսումնական արդյունքների հետագա գրանցման համար:

ՄԵԹՈԴԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ



Տարբերակ 1

Կապուկի բոլոր քարտերը տարածք սեղանի վրա, որպեսզի տեսանելի լինեն կարողությունների անվանումները: Խնդրեք մասնակցին մտածել ոչ ֆորմալ ուսուցման միջոցառման (կամ երիտասարդական աշխատանքի ծրագրի) մասին, որին նրանք մասնակցել են և վերցնել այն քարտերը, որոնք ցույց են տալիս միջոցառման ընթացքում զարգացված կարողությունները: Եթե որոշ կարողություններ բացակայում են, ապա նրանք կարող են օգտագործել «ջոկեր» (դատարկ) քարտեր և գրել այդ կարողությունները դրանց վրա:

Տվեք մասնակցին քարտերի ամբողջ կապուկը և խնդրեք նրանց խմբավորել քարտերը երեք կույտի մեջ՝ «ծրագրի ընթացքում զարգացված», «ծրագրի ընթացքում չզարգացված» և «վստահ չեմ»: Սա անելուց հետո, սկզբից ստուգեք «վստահ չեմ» բաժինը՝ տեսնելու, թե արդյոք կա կարողություն, որը պետք է դրվի «ծրագրի ընթացքում զարգացված» կլաստերում: Այնուհետև, նայեք այդ կլաստերին և տեսեք, թե արդյոք բացակայում է որևէ կարևոր կարողություն (որը կապուկում չէր): Եթե այո, ապա օգտագործեք դատարկ քարտերը՝ դրանք ավելացնելու համար:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Քարտերը տեսակավորվելուց հետո, խնդրեք մասնակցին մտորել յուրաքանչյուր կարողության վերաբերյալ իրենց մեկնաբանության մասին և հիշել այն պահերը կամ իրավիճակները, երբ նրանք զարգացրել են այս կարողությունը կամ երբ այն առաջին անգամ դրսևորվել է: Նշումներ կատարեք և վարժության վերջում տվեք դրանք մասնակցին:

Այս վարժությունը կարող է շարունակվել այս Ձեռնարկի մաս կազմող «Ցույց տվեք ձեր STAR-երը (աստղերը)» կամ «Ուսուցման բուրգ» բաժիններում:

ՀԻՇԵԼ



«Կարողություններով քարտեր» առձեռն նյութը պետք է պատճենվի ավելի մեծ ձևաչափով (օրինակ՝ A3), հնարավորության դեպքում՝ սովորաբար Վրա: Սա թույլ կտա ստեղծել իսկական քարտերի կապուկ:

ՍՏԵՂԾԵԼ Է՛

Darko Marković

ԼՐԱՅՈՒՑԻՉ ԱՐԳՅՈՒՐՆԵՐ, ՀՂՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՈՒ ՆՅՈՒԹԵՐ



Եթե նախընտրում եք պատրաստի քարտերի կապուկներ, որոնք կարող են օգտագործվել նույն նպատակով, դրանք կարելի է առցանց գնել տարբեր մատակարարներից, օրինակ՝ <http://www.kwaliteitenspel.nl/en/>



ՀԱՇՎԵՏՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	ՈՒՐԻՇՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒՄ	ԿԱՊԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ	ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ
ՃՇԳՐԻՏ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄ	ԿԱՐԵԿՑԱՆՔ	ԹՎԱՅԻՆ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ	ՌԻՍԿԻ ԴԻՄՈՒՄ
ԿՆԵՏՐՈՆԱՑՈՒՄ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ	ՃԿՈՒՆՈՒԹՅՈՒՆ	ԼԱՅՆԱԽՈՇՈՒԹՅՈՒՆ	ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ

<p>ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</p>	<p>ԿԱՐԾԻՔ ՀԱՅՏՆԵԼ/ ԼՍԵԼ</p>	<p>ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԲԱՑԼԻՆԵԼ</p>	<p>ԻՆՔՆԱՎԱՍՏԱՆՈՒԹՅՈՒՆ</p>
<p>ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՊԱՏՃԱՌԱԲԱՆՈՒՄ</p>	<p>SZS ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p>	<p>ԲԱՆԱՎՈՐ ՀԱՂՈՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ</p>	<p>ԶԳԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ</p>
<p>ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄ</p>	<p>ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ</p>	<p>ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԻՐԱԶԵԿԱԾՈՒԹՅՈՒՆ</p>	<p>ՌԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ</p>
<p>ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՐՈՒՔՆԵՐԻՆ</p>	<p>ԲԱՐԵՆՂՃՈՒԹՅՈՒՆ</p>	<p>ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p>	<p>ՍԹՐԵՍԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ</p>

Ինքնավարութիւն

Միջաշաղկուհի
շօշուփութիւն

Հասարակութիւն

Նախաճոճութիւն
ցոյցաբերութիւն

Հաճախորդաբարձրութիւն

Արդարադատութիւն
Հարգութիւններ

Պատկարասիւն

Պատասխանատուութիւն
Ստանդարտ

Որակի
Արդարութիւն

Լսելու
Որակութիւն

Կաշառակերպութիւն
Գրագիտութիւն

Դասակարգութիւն/
Վերադարձութիւն
Հարգութիւններ

ԿոնՏրակտի
Կարգադրութիւն

ԲՅՈՒՋԻ
Կարգադրութիւն

Ներկայացման
Հարգութիւններ

Թիմային
Աշխատանք

<p>ՍՏԵՂՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</p>	<p>ՍԵՓԱԿԱՆ ՀՈՒՅՉԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ</p>	<p>ԱՌԱՋՆԱԶԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄ</p>	<p>ԺԱՄԱՆԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ</p>
<p>ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՐՈՒԹՅՈՒՆ</p>	<p>ՍԵՓԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ</p>	<p>ՆԱԽԱՁԵՒՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</p>	<p>ԱՆՈՐԱՇՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՈՐԾԵԼ</p>
<p>ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԵՏԱՇԽԱՏԵԼՈՒ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ</p>	<p>ՈՒՐԻՇՆԵՐԻՆ ՄՈՏԻՎԱՑՈՒՄ</p>	<p>ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ</p>	<p>ՃՆՇՄԱՆ ՏԱԿ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ</p>
<p>ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄ</p>	<p>ԲԱՆԱԿՑՈՒՄ</p>	<p>ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ</p>	<p>ԳՐԱՎՈՐ ՀԱՐՈՐԴԱԿՑՈՒՄ</p>

8. Ցույց տվե՛ք ձեր STAR-երը (աստղերը)

Ինչպե՞ս կարող եք ապացուցել, որ ինչ-որ բան գիտեք: «Աստղանշեք» այն՝ ցույց տալու համար, թե ինչ առաջադրանքներ, գործողություններ եք կատարել և ինչ արդյունքների հասել սվյալ ուսումնական իրավիճակում:



ԽՄԲԻ ՉԱՓ

Անհատական կամ խմբային աշխատանք
(ցանկացած քանակի մարդկանցով)



ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ

90-120 րոպե

ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ (ՏԱՐԱԾՔ, ՆՅՈՒԹԵՐ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ՄԱՐԴԻԿ)



- STAR մոդելով թերթիկ



ՆՊԱՏԱԿ

- Աջակցել ուսուցման արդյունքների գրանցմանը գործատուների համար հասկանալի ձևաչափով
- Կիրառել հեռանկարային հմտություններ (իրերը տեսնել գործատուի տեսանկյունից)
- Բարելավել հարցազրույցի ժամանակ ինքնաներկայացման հմտությունները

ՄԵԹՈԴԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՅԼ ԱՈՒ ՔԱՅԼ



Բացատրե՛ք մասնակիցներին, որ այս վարժության ընթացքում նրանք սովորում են ներկայացնել նախագծի շրջանակում ձեռք բերված կարողությունները (օրինակ՝ այն կարողությունները, որոնք նույնականացվել են այլ վարժությունների շրջանակում, ինչպիսիք են «Անվանեք ձեր կարողությունները», «Լարցագրույց ուսուցման արդյունքների վերաբերյալ», «Շուշաթերթիկ» և այլն) այնպիսի ձևաչափով, որը սովորաբար կիրառվում է աշխատանքի դիմելիս: Այս վարժության հիմնական նպատակն է ներկայացնել կարողություններն ապացույցներով (կոնկրետ օրինակներ), որոնք կարող են օգտագործվել ոչ միայն Youthpass հավաստագրերում, այլ նաև ինքնակենսագրականներում (հմտությունների և կարողությունների բաժնում), ուղեկցող կամ մոտիվացիոն նամակներում և աշխատանքային հարցազրույցների ժամանակ:

Քայլ 1

Բացատրեք մասնակիցներին, որ իրական կյանքում աշխատանք փնտրելիս չափազանց կարևոր է սկսել թափուր աշխատատեղի հայտարարությունից և ուշադիր ուսումնասիրել պահանջվող հմտությունները/կարողությունները (սովորաբար դրանք ներառում են հաղորդակցման հմտություններ, թիմային աշխատանք, ճնշման տակ աշխատանք, խնդիրների լուծում և այլն): Այսպիսով, այս վարժությունը ոչ միայն կօգնի նրանց լրացնել իրենց Youthpass-ի ինքնագնահատումը, այլ նաև կբարելավի իրենց՝ աշխատանք փնտրելիս սեփական անձը լավ լույսի ներքո վ ներկայացնելու կարողությունը:

Քայլ 2

Այնուհետև, բացատրեք, որ աշխատանքի ընդունման գործընթացում գործատուները շատ հաճախ օգտագործում են, այսպես կոչված, կարողությունների վրա հիմնված մոտեցումը (այն նաև հայտնի է որպես «վարքային հարցազրույց»)՝ ձեր կարողությունների և աշխատանքով պահանջվողների միջև լավագույն համապատասխանությունը գտնելու համար: Գործատուները հարցնում են, թե արդյոք թեկնածուները կարող են ապացույցներ ներկայացնել իրենց պնդումների վերաբերյալ: այլ կերպ ասած, նրանք կխնդրեն ներկայացնել կոնկրետ իրավիճակների օրինակներ, որտեղ նրանք ցույց են տվել կամ զարգացրել հատուկ կարողություններ (օրինակ՝ «Ինչո՞րով եմ նկարագրեք մի իրավիճակ, երբ հաջողությամբ աշխատել եք թիմում: Կամ պատմեք մի իրավիճակի մասին, երբ ձեզ անհրաժեշտ էր կառավարել ձեր առաջնահերթությունները և դուրս դա հաջողությամբ արել եք»): Կարևոր է նկատի ունենալ, որ գործատուների մեծ մասը շատ քիչ բան գիտի երիտասարդական աշխատանքի մասին: Խորհուրդ տվեք երիտասարդական աշխատանքի բառապաշարի օգտագործումը նվազագույնի հասցնել և միշտ մտածել՝ արդյոք իրենց գրածները հասկանալի են այն մարդու համար, ով երբևէ չի մասնակցել երիտասարդների փոխանակման կամ կամավորություն չի արել եվրոպական երիտասարդական ծրագրի շրջանակներում, կամ ով երբևէ չի լսել երիտասարդական աշխատանքի մասին:

Քայլ 3

Վերջապես, ձեր մասնակիցներին ներկայացրեք առձեռն նյութի STAR մոդելը և խնդրեք նրանց գրել կարճ պարբերություն յուրաքանչյուր այն կարողության վերաբերյալ, որը նրանք կարծում են, որ զարգացրել են ծրագրի ընթացքում:

Քայլ 4



ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

- Ինչպե՞ս էր STAR մոդելի հետ աշխատելը:
- Որքանո՞վ է ձեզ հաջողվել նկատի ունենալ գործատուի տեսակետը:
- Որքանո՞վ են հասկանալի ձեր նկարագրությունները երիտասարդական աշխատանքային փորձ չունեցող անձի համար:
- Ինչպե՞ս կարելի է բարելավել այդ նկարագրությունները:
- Ինչպե՞ս են այս կարողությունները լավագույնս համապատասխանում Youthpass-ի ինքնագնահատման առանցքային/բանալի կարողությունների շրջանակին:
- Որքա՞նով կարող եք օգտագործել STAR մոտեցումն աշխատանքային հարցազրույցի ժամանակ:

ՀԱՐՄԱՐԵՑՐԵԼ Է՝

Darko Marković



ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՔՈՒՐՆԵՐ, ՇՂՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՑՈՒ ՆՅՈՒԹԵՐ

STAR մոդելի վերաբերյալ կան շատ առցանց նյութեր և ռեսուրսներ:



STAR մոդել

Իրավիճակ՝

Նկարագրեք այնպիսի իրավիճակ, երբ ձեռք եք բերել/դրսևորել այս կարողությունը:

Խնդիրներ՝

Ի՞նչ խնդիրներ ունեիք կատարելու այդ իրավիճակում:

Գործողություններ՝

Ի՞նչ գործողություններ եք ձեռնարկել:

Արդյունքներ՝

Ի՞նչ արդյունքների եք հասել:

9. Երազանքի աշխատանք

Ինքներդ ձեզ ապագայում նայելը կարող է օգնել ավելի լավ հասկանալ, թե ինչ եք ցանկանում անել կամ ասել այսօր: Այս գործիքն օգնում է մասնակիցներին ստեղծել իրենց տեսլականը և հասկանալ, թե որ մասով է իրենց ծրագիրն առնչվում այդ երազանքի հետ:



ԽՄԲԻ ՉԱՓ

Մեկ մասնակցի հետ անհատական աշխատանքի, կամ զույգերի բաժանված խմբի համար



ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ

60-90 րոպե

ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ (ՏԱՐԱԾՔ, ՆՅՈՒԹԵՐ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ՄԱՐԴԻԿ)



Այս վարժության համար ձեզ հարկավոր է հարմարավետ վայր և գրելու համար որևէ բան: Համոզվեք, որ վարժության ընթացքում կատարում եք նշումներ ձեր մասնակցի վերաբերյալ (եթե նշված է), որոնք վերջում կիսելու եք նրա հետ:



ՆՊԱՏԱԿ

- Ստեղծել իրազեկվածություն երիտասարդական աշխատանքում ձեռք բերված կարողությունների՝ մասին, որոնք կարող են կիրառվել աշխատանքի կամ ձեռնարկատիրության մեջ:
- Բարելավել երիտասարդական ծրագրերում ձեռք բերված կարողությունների արժեքի ճանաչումը:

ՄԵԹՈԴԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ



Քայլ 1

Ինչո՞րք ձեր մասնակցին հարմարավետ նստել և փակել աչքերը... հանգստանալ... ինչո՞րք նրանց հետևել իրենց շնչառության ռիթմին: Առաջարկեք նրանց մի պահ կենտրոնանալ իրենց վրա և մտածել այն բաների մասին, որոնք իրենց համար կարևոր են:

Այնուհետև, շարունակեք հետևյալ հրահանգներին՝

Քայլ 2

- Այժմ ձեր մտքում դուք կարող եք ճանապարհորդել դեպի ասպագա... Խնդրում եմ պատկերացնել ձեզ ձեր «Երազանքի աշխատանքում», որտեղ հաջողակ եք...
- Ասացեք... Ի՞նչ եք տեսնում:
- Որտե՞ղ է դա տեղի ունենում:
- Ո՞ւմ հետ եք աշխատում:
- Ինչպիսի՞ն է ձեր սովորական աշխատանքային օրը:
- Ինչպե՞ս եք պատկերացնում ձեր աշխատանքի արդյունքները:
- Ի՞նչ հմտություններ են անհրաժեշտ դա լավ անելու համար: (ԳՐԻ ԱՌԵՔ ԴՐԱՆՔ)
- Որո՞նք են այն մոտեցումները, որոնք օգնում են ձեզ այդքան հաջողակ լինել: (ԳՐԻ ԱՌԵՔ ԴՐԱՆՔ)
- Այժմ, ձեր երազանքի աշխատանքից նայեք ինքներդ ձեզ անցյալում, ձեր երիտասարդական ծրագրերում... և ոչ ֆորմալ կրթության մեջ... Ի՞նչ եք սովորել այդ միջոցառումների ընթացքում, որ այժմ օգնում է ձեզ ձեր երազանքի աշխատանքի հարցում: (ԳՐԻ ԱՌԵՔ ԴՐԱՆՔ)

Այժմ խնդրեք ձեր մասնակցին դանդաղ վերադառնալ ընթացիկ վարժությանը: Ասացեք նրան, որ բացի այդքան:

Քայլ 3

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Խնդրեք ձեր մասնակցին արագ կարծիք հայտնել այն մասին, թե ինչպես է անցել վարժությունը: Այնուհետև կիսվեք ձեր նշումներով: Խնդրեք նրան արտահայտել իր բառերով, թե ինչ առանցքային կարողություններ է նա ձեռք բերել երիտասարդական ծրագրի ընթացքում, և թե ինչ դեռ պետք է սովորի՝ իր տեսլականին ավելի մոտենալու համար:

ՍՏԵՂԾԵԼ Է՛

Darko Marković

10. ԻՆ ՈւՆՈՒԾՄԱՆ ԷՐԵՖ ԱՔՈՒՆԵՐԸ

Այս մեթոդն օգնում է պատկերացնել տվյալ կարողության երեք հիմնական տարրերը՝ մոտեցում + հմտություն + գիտելիք:



ԽՄԲԻ ՉԱՓ

Մեկ մասնակցի հետ անհատական աշխատանքի կամ զույգերի բաժանված խմբի համար



ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ

60-90 րոպե

ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ (ՏԱՐԱԾՔ, ՆՅՈՒԹԵՐ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ՄԱՐԴԻԿ)



- Երեք աթոռ
- Երեք պիտակ՝ «Գիտելիքներ», «Հմտություններ», «Մոտեցումներ»
- Գրատախտակ կամ ֆլիպչարտ՝ նշումներ կատարելու համար



ՆՊԱՏԱԿ

- Բարձրացնել ծրագրում զարգացված կարողությունների մասին իրազեկվածությունը, մասնավորապես՝ այդ կարողությունների հիմքում ընկած գիտելիքներ, հմտություններ ու մոտեցումներ:
- Մասնակցի Youthpass հավաստագրի համար ինքնազնահատման հիմք ապահովել:

ՄԵԹՈԴԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ



Քայլ 1

Փակցրեք մեկական պիտակ երեք աթոռներից յուրաքանչյուրին: Նախքան վարժությունը սկսելը, հարցրեք մասնակցին, արդյոք նա հստակ հասկանում է այդ երեք եզրույթները: Օրինակ, թիմային աշխատանքի հետ կապված, «Գիտելիք» կնշանակի, որ նա հասկանում է, որ բաց հաղորդակցումը թիմային աշխատանքի կարևոր ասպեկտ է: «Հմտությունները» վերաբերում է բաց և հստակ արտահայտվելու նրա կարողությանը: «Մոտեցումը» վերաբերում է նրա պատրաստակամությանը կիսվելու իր կարծիքով կամ լսելու թիմի այլ անդամների տեսակետերը:

Այնուհետև ասացե՛ք մասնակիցներին, որ այս վարժությունն ընթացքում նրանք խաղալու են իրենց ծրագրում ձեռք բերված Գիտելիքի, Հմտությունների և Մոտեցումների դերերը: Դա թույլ կտա նրանց ոչ միայն խոսել իրենց կարողությունների մասին, այլև զգալ դրանք:

ՔաՅԼ 2

Այնուհետև հետևեք առձեռն նյութի հրահանգներին:

ՔաՅԼ 3

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Խնդրեք ձեր մասնակիցներին արագ կարծիք հայտնել այն մասին, թե ինչպես է անցել վարժությունը: Այնուհետև կիսվեք ձեր գրառումներով: Խնդրեք նրանց իրենց բառերով արտահայտել, թե ինչ առանցքային կարողություններ են նրանք ձեռք բերել ծրագրի ընթացքում:



ՀԻՇՆԵԼ



Դերախաղի ժամանակ համոզվեք, որ մասնակիցները հետևում են իրենց դերերին և խոսում առաջին դեմքով («Ես...»), այլ ոչ թե օգտագործում «Դա...» բառը: Դերերով հարցազրույցների ժամանակ ստեղծեք անկաշկանդ մթնոլորտ և բեմադրեք վարժությունը ոչ պաշտոնական գրույցի տեսքով: Դա չպետք է թվա հարցաքննություն կամ քննություն:

Ուսուցման արդյունքները զրի առնելու հարցում հետագա օգնության համար օգտագործեք այս Ձեռնարկի այլ վարժություններ, ինչպիսիք են «Հուշաթերթիկը» կամ «Ուսուցման բուրգը»:

ՀԱՐՄԱՐԵՑՐԵԼ Է՛

Darko Marković



Կարևոր է, որ
Գրիչը պատրաստ պահե՛ք, որպեսզի
կարողանա՛ք գրառումներ կատարել
ձեր մասնակցի վերաբերյալ:

Ի՞նչ ուսուցման երեք աթոռները

Քայլ 1

Սկզբում ներկայացրեք երեք աթոռները՝ որպես ուսուցման երեք բաղադրիչներին՝ «Գիտելիքի», «Հմտության» և «Վերաբերմունքի» խորհրդանիշ: Բացատրեք, որ այս վարժությունում մասնակիցը ստանձնելու է այս երեք աթոռների հետ կապված դերեր:

Քայլ 2

Առաջարկեք մասնակցին հանդես գալ նախագծի ընթացքում ձևավորված **Գիտելիքի դերում** (խնդրեք նրան նստել Գիտելիքի աթոռին): Այնուհետև անցկացրեք նրա հետ հարցազրույց՝ տալով ստորև ներկայացված հարցերը (համոզվեք, որ մասնակիցը հետևում է դերին և խոսում առաջին դեմքով («Ես...»)), այլ ոչ թե օգտագործում «Դա...» բառը): Դա անելու ընթացքում, նշումներ կատարեք ձեր մասնակցի վերաբերյալ:

- Ողջույն, Գիտելիք, ուրախ եմ ծանոթանալ: Ինչպիսի՞ գիտելիք ես դու:
- Ի՞նչ այլ գիտելիքներ կան:
- Ինչպե՞ս ես զարգացել այս ծրագրի ընթացքում:
- Ինչպե՞ս ես քեզ տեսանելի դարձնում ուրիշների համար:
- Ինչպե՞ս կարելի է քեզ օգտագործել _____ (մասնակցի անունը)-ի կյանքում:

Շնորհակալություն հայտնեք Գիտելիքին: Այնուհետև խնդրեք մասնակցին **ստանձնել ծրագրում զարգացված Հմտությունների դերը**: Շարունակեք վերը նշվածի նման. հարցազրույց անցկացրեք Հմտությունների հետ և նշումներ կատարեք:

Քայլ 3

- Ողջույն Հմտություններ, ուրախ եմ ծանոթանալ: Ինչպիսի՞ հմտություններ եք դուք:
- Ի՞նչ այլ հմտություններ կան:
- Ինչպե՞ս եք զարգացել այս ծրագրի ընթացքում:
- Ինչպե՞ս եք ձեզ տեսանելի դարձնում ուրիշների համար:
- Ինչպե՞ս կարելի է ձեզ օգտագործել _____ (մասնակցի անունը)-ի կյանքում:

Շնորհակալություն հայտնեք Հմտություններին և խնդրեք ձեր մասնակցին **ստանձնել ծրագրում զարգացված Մոտեցումների դերը**: Կրկնեք ընթացակարգը և նշումներ կատարեք:

Քայլ 4

- Ողջույն Մոտեցումներ, ուրախ եմ ծանոթանալ: Ինչպիսի՞ մոտեցումներ եք դուք:
- Ի՞նչ այլ մոտեցումներ կան:
- Ինչպե՞ս եք զարգացել այս ծրագրի ընթացքում:
- Ինչպե՞ս եք ձեզ տեսանելի դարձնում ուրիշների համար:
- Ինչպե՞ս կարելի է ձեզ օգտագործել _____ (մասնակցի անունը)-ի կյանքում:

Այժմ խնդրեք ձեր մասնակցին **դուրս գալ վերջին դերից: Այնուհետև ամփոփեք նրա արդյունքները**. «Մենք պարզեցինք, որ այս ծրագրում դուք ձեռք եք բերել... (թվարկեք գիտելիքները)... (թվարկեք հմտությունները)... (թվարկեք մոտեցումները)... որոնք կարող են օգտակար լինել...: Կա՞ որևէ բան, որ կցանկանայիք ավելացնել»:

Քայլ 5

Այնուհետև **ձեր նշումները տվեք մասնակցին** և խնդրեք, որ նա օգտագործի դրանք որպես հիմք իր ինքնագնահատականը լրացնելու համար:

Քայլ 6

11. Հասցրե՛ք այն նոր մակարդակի

Մեր ուսուցումը գնահատելը նաև վերաբերում է մեր կարողությունների սահմանները բացահայտելուն: Իմանալը, թե որքանով կարող ենք կատարել որոշակի խնդիր կամ կիրառել որոշակի հմտություն, կարևոր է մեր կարողությունների մասին իրատեսական պատկերացում կազմելու համար: Այսպիսով, ձեր մասնակիցների սովորածը գնահատելուց հետո, ժամանակն է հարցնել, թե որքան հեռու են նրանք վարպետ Յոդա լինելուց:



ԽՄԲԻ ՉԱՓ

Ցանկացած



ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ

30 րոպե

ՌԵՍՈՒՐՍԵՐ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ (ՏԱՐԱԾՔ, ՆՅՈՒԹԵՐ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ՄԱՐԴԻԿ)



- Թերթիկ
- Գրիչ



ՆՊԱՏԱԿ

- Օգնել մասնակիցներին պարզել իրենց կարողությունների սահմանները:
- Ստանալ նրանց կարողությունների վերաբերյալ ստեղծագործական ակնարկ:

ՄԵԹՈԴԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ



Քայլ 1

- Խնդրեք մասնակիցներին գրի առնել երեք բան, որ սովորել են իրենց ուսումնական փորձի ընթացքում (օրինակ՝ երիտասարդական փոխանակում, կամավորական ծրագիր կամ վերապատրաստման դասընթաց):

Ներկայացրեք վարժությունը՝ բացատրելով հետևյալը՝

«Ձեր իմացածը գնահատելուց հետո (օրինակ՝ ես գիտեմ, թե ինչպես աշխատել թիմում), դուք կարող եք հարցնել, թե որ իրավիճակներում է դա ձեզ մոտ լավ ստացվում»:

Քալ 2

Հանձնարարե՛ք մասնակիցներին՝

1. ոնշել առձեռն նյութի վերին հատվածում մեկ կարողություն, որը, նրանց կարծիքով, նրանք զարգացրել են,
2. կարողալ առձեռն նյութի հարցերը (տե՛ս ստորև) և պատասխանել այն հարցերին, որոնք նրանք համարում են հետաքրքիր կամ ոգեշնչող:

Քալ 3

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

- Ինչպե՞ս էիք զգում վարժության ընթացքում:
- Արդյո՞ք դա ձեզ ինչ-որ կերպ օգնել է:
- Կարո՞ղ եք նույն վարժությունը կիրառել ձեր կողմից զարգացված այլ կարողությունների մասով:
- Այժմ, երբ կատարել եք վարժությունը, ի՞նչն այլ կերպ կգրեիք ձեր Youthpass-ում:

ՀԻՇԵԼ



Այս վարժությունը մասնակիցներին խրախուսում է մտածել սահմաններից դուրս: Դրա նպատակը կարող է շփոթեցնել նրանց: Որոշ երիտասարդական աշխատողների համար ավելի հեշտ է բացատրել սա նախքան վարժությունը սկսելը, որպեսզի մասնակիցները կարողանան պատասխանել այն հարցերին, որոնք կարող են տարօրինակ թվալ իրենց:

ՍՏԵՂԾԵԼ Է՛

Anita Silva



Կարողություն



Կարող էի դա անել ՆԱՍԱ-ի համար:

Կարո՞ղ էի դա անել միայնակ:

Կարո՞ղ էի հերոս լինել այդ գործում:

Կարո՞ղ էի դա անել կույր մարդկանց հետ:

Կարո՞ղ էի դա անել լուսնի վրա:

Կարո՞ղ էի դա անել անպատում:

Կարո՞ղ էի դա անել առանց նախապտրաւուման:

12. Հույզերով ուսուցում

Թեև հույզերն ուսուցման կարևոր մասն են, մենք երբեմն մոռանում ենք նշել դրանք կամ մոռանում այն, ինչ սովորել ենք դրանցից: Այն սովորողը, ով հիասթափվել է ձանձրալի դասի պատճառով կամ իսկապես ոգևորվել զվարճալի վարժության ժամանակ, կարող է հետ նայել ու վերլուծել իր զգացմունքներն այդ պահին: Այս վարժությունը կարող է խրախուսել մասնակիցներին մտածել այն մասին, թե ինչպես են հույզերն ազդում մեր մոտեցումների և հետևաբար, մեր վարքի վրա:



ԽՄԲԻ ՉԱՓ

Ցանկացած



ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ

30 րոպե

ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ (ՏԱՐԱԾՔ, ՆՅՈՒԹԵՐ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ՄԱՐԴԻԿ)



- Կտրված պատկերներ (տե՛ս առձեռն նյութը)
- Գրիչ և թուղթ



ՆՊԱՏԱԿ

- Վերանայել ուսուցման փորձի ընթացքում ապրած հույզերը և սովորել դրանցից:

ՄԵԹՈԴԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ



Քայլ 1

- Կտրե՛ք առձեռն նյութի պատկերները և դրեք դրանք ծրարի մեջ: .

Քայլ 2

- Բացատրե՛ք մասնակիցներին, որ այս վարժության նպատակն է թույլ տալ նրանց հիշել, թե ինչ հույզեր են եղել իրենց ուսուցման գործընթացում և օգնել նրանց գրել, թե ինչ են սովորել այդ հույզերից:

Հրահանգներ մասնակիցների համար՝

Գալ 3

- Վերցրե՛ք ծրարում գտնվող պատկերները և ընտրեք մի քանիսը, որոնք ներկայացնում են ձեր ուսուցման գործընթացում ապրած զգացմունքները կամ հույզերը: Ձեր կողմից ընտրվող պատկերների քանակի մասով սահմանափակում չկա, և կարևոր չէ՝ դրանք դրական, թե բացասական հույզեր են ներկայացնում:
- Գրե՛ք մի քանի նախադասություն՝ բացատրելով, թե ինչ եք զգացել և ինչ եք սովորել այդ հույզերից:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

- Ի՞նչ սովորեցիք այդ հույզից:
- Ի՞նչ եք անելու դրա հետ կապված ապագայում:
- Որքանո՞վ է այս մտորումն օգտակար ուրիշների, օրինակ՝ ապագա գործատուի համար:
- Ինչպե՞ս կարող եք արտահայտել դա ձեր Youthpass-ում:

ՀԻՇԵԼ



Երբեմն մասնակիցներին պակասում են բառեր իրենց զգացմունքներն արտահայտելու համար: Նկարների օգտագործումը կարող է օգտակար լինել այս մտորումը սկսելու համար, բայց ի վերջո նրանք պետք է գրավոր արտահայտեն իրենց հույզերը: Եթե սա խոչընդոտ է, կարող եք խմբի լեզվով ստեղծել հույզի հետ կապված բառերի ցանկ և կիսել այն ձեր մասնակիցների հետ:

ՍՏԵՂԾԵԼ Է՛

Anita Silva



Հույզեր



ԵՐՁԱՆԻԿ



ՀՈԳՆԱԾ



ՋԱՐՄԱՑԱԾ



ԿԱՍԿԱԾՈՂ



ԱՆՎՍՏԱՀ



ԿԱՍԿԱԾ



ՎԱՒ



ԷՆՏՈՒՋԻԱԶՄ



Շփոթւած



Դժգոհ



Սարկսւշտ



ԶնՅրՈՒՅՔ



Քնած



ՀԱՐՑԱՔԻՆՆՈՂ



ԺՊՏԱՅՈՂ



ՍԱՐՍԱՓ



ՄՈՒՅԼ



ՈԳԵՎՈՐՎԱԾ



ԽՈՐԱՄԱՆԿ



ԼԱՅՈՂ

13. Թող մնա՞, թե՞ զնա

Շատ հեշտ է սխալ մեկնաբանել ինքնագնահատման նպատակը, բայց այնքան էլ հեշտ չէ սովորողին տեղեկացնել, որ այն, ինչ նա լավագույնս փորձել է գրել իր ինքնագնահատման մեջ, լիովին ճիշտ չէ: Կանխարգելումն այստեղ կիրառելի բառ է: Այս հարցախաղը նախատեսված է որպես զվարճալի վարժություն, որի ընթացքում մենք բոլորս կարող ենք ծիծաղել ինքնագնահատման հնարավոր սխալների վրա՝ նախքան դրանց տեղի ունենալը:



ԽՄԲԻ ՉԱՓ

Ցանկացած



ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ

30-50 րոպե

ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ (ՏԱՐԱԾՔ, ՆՅՈՒԹԵՐ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ՄԱՐԴԻԿ)



- Թուղթ և գրիչներ
- Զանգ, սուլիչ կամ մուրճ (ցանկացած բան, որը կարող է օգտագործվել հարցախաղի ժամանակ, երբ ձեր թիմը պատրաստ է պատասխանել):
- Հարցերով առձեռն նյութ
- Գրատախտակ կամ ֆլիպչարթ՝ յուրաքանչյուր թիմի միավորները գրի առնելու համար



ՆՊԱՏԱԿ

- Օգնել երիտասարդներին հասկանալ, թե ինչ չի կարելի գրել ինքնագնահատման մեջ:
- Զվարճանալ՝ միաժամանակ կանխելով անհամարժեք բովանդակություն գրելը և պարզաբանելով ինքնագնահատման գործընթացը:

ՄԵԹՈԴԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ



Աս հարցախաղ է, որը կարող եք խաղալ անհատների հետ, եթե ունեք փոքր խումբ, կամ կարող եք թիմեր ստեղծել, եթե խումբը շատ մեծ է: Լավ կլինի, որ չունենաք հինգից ավելի առանձին մասնակիցներ կամ թիմեր, որպեսզի բոլորը կարողանան ակտիվորեն մասնակցել:

Փուլերի քանակը հավասար է այն նախադասությունների քանակին, որոնց ցանկանում եք, որ մասնակիցները մտորեն, ուստի մեկ նախադասությունը հավասար է մեկ փուլի: Յուրաքանչյուր փուլի համար ընթացակարգը հետևյալն է.

- Խաղը վարողը բարձրաձայն կարդում է նախադասությունը, որին հաջորդում է «Թող մնա՞, թե՞ գնա» հարցը:
- Թիմերը (կամ անհատները) սեղմում են կոճակը (կամ հնչեցնում զանգը կամ սուլում, կամ որևէ այլ բան անում՝ ցույց տալու համար, որ ցանկանում են պատասխանել): Եթե թիմը պատասխանում է «թող մնա», դա նշանակում է, որ նրանք կարծում են, որ նախադասությունն տեղ ունի ունի ինքնագնահատման մեջ: Եթե թիմը պատասխանում է «թող գնա», ապա նրանք կարծում են, որ նախադասությունը պետք չէ ինքնագնահատման համար:
- Խաղը վարողը որոշում է, թե որ թիմն է առաջինը պատասխանել և թույլ տալիս առաջինը հայտնել իրենց կարծիքը:
- Առաջին թիմի պատասխանելուց հետո կարող է պատասխանել ցանկացած այլ թիմ: Ամեն անգամ, երբ թիմը պատասխանում է, նրանք պետք է բացատրեն, թե ինչու են կարծում, որ հենց իրենք են տվել ճիշտ պատասխանը:
- Խաղը վարողը ասում է ճիշտ պատասխանը և բացատրում, թե ինչու այդ նախադասությունը պետք է կամ չպետք է կազմի ինքնագնահատման մաս:
- Խաղը վարողը գրատախտակին կամ ֆլիպչարթի վրա գրում է յուրաքանչյուր թիմի միավորները յուրաքանչյուր փուլի համար

Քայլ 1

Քայլ 2

Քայլ 3

Քայլ 4

Քայլ 5

Քայլ 6

Միավորների համակարգ

Մեկ ճիշտ պատասխան = 10 միավոր

Առաջին պատասխանող = +5 միավոր

Պատասխանի ամենաստեղծագործական հիմնավորում (նույնիսկ եթե պատասխանը սխալ է) = +5 միավոր

Նշում

Այս վարժությունում առաջարկված նախադասությունները ստեղծվել են մտորումների և բանավեճերի խրախուսման համար: Դուք ու ձեր սովորողները միշտ չէ, որ պետք է համաձայն լինեք ձեր պատասխանների հետ: Պարզապես թույլ տվեք, որ բանավեճն ընթանա և նկատի ունեցեք, որ նպատակն ինքնազնահատական գրելն է:



ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

- Ի՞նչ սովորեցրեց ձեզ այս հարցախաղն ինքնազնահատման մասին:
- Ի՞նչի՞ վրա եք հատուկ ուշադրություն դարձնելու ձեր ինքնազնահատումը գրելիս:


ՀԻՇԵԼ



Դուք կարող եք այս հարցախաղը դարձնել այնքան պարզ կամ զվարճալի, որքան ցանկանաք: Ըմապատասխանաբար հազնվեք, ստեղծեք մրցանակներ, ավելացրեք առանձնահատկություններ և հատուկ մարտահրավերներ կամ պարզապես անտեսեք հարցախաղը, նստեք մասնակիցների հետ ու հարցրեք նրանց կարծիքը յուրաքանչյուր նախադասության վերաբերյալ:

ՍՏԵՂՍԵԼ Է՛

Anita Silva





Նախադասություններ

Չնայած ես արդեն խոսում եմ երեք լեզվով, այս ծրագրի ընթացքում ես բարձրացրեցի իմ անգլերենի մակարդակը:

Այժմ ես ավելի վստահ եմ արտահայտում հույզերս:

Ինձ շատ դուր եկավ միջոցառման վայրի սնունդը:

Այս միջոցառման ընթացքում ես սիրահարվեցի և ես դա երբեք չեմ մոռանա:

Թող մնա՞, թե՞ գնա

Թող մնա

Ինքնագնահատումը բացահայտում է նոր բաներ, որոնք դուք սովորել եք, բայց նաև այն կարողությունները, որոնք կատարելագործել եք: Ըաշվի առնելով սա, կարևոր կլինի համայրել այս տեքստը բացատրությամբ, թե ինչպես եք կատարելագործել, օրինակ, ձեր անգլերենը:

Թող մնա

Ինքնագնահատումը վերաբերում է ոչ միայն գիտելիքներին, այլև ընդհանուր կարողությունների զարգացմանը: Դա նշանակում է գիտելիքներ, հմտություններ և մոտեցումներ: Ձեր հույզերն արտահայտելիս վստահ լինելը կարևոր քայլ է, օրինակ, ձեր հաղորդակցման հմտությունները բարելավելու համար:

Թող գնա

Ինքնագնահատումը նույնը չէ, ինչ գնահատման ձևը: Գաղափարը գնահատելն է ոչ թե միջոցառման վայրի, այլ ձեր անձնական ուսումնական ճամփորդության որակը:

Թող գնա

Թեև սա շատ հուզիչ է, սա հարկավոր է գրի առնել ձեր օրագրում, այլ ոչ թե ինքնագնահատման մեջ, որը հետագայում կարող եք ցույց տալ գործատուներին կամ ուսուցիչներին:

Նախադասություններ

Ես շատ նոր բաներ սովորեցի խաղերի միջոցով և հասկացա, որ այս կերպ ավելի լավ եմ սովորում:

Քանի որ ես ինքնաթիռի տոմս(եր) գնելու պատասխանատուն էի, ես շատ բան սովորեցի ճամփորդություն պլանավորելու մասին:

Խումբն իսկապես լավն էր, և բոլորը միասին զվարճացան:

Որպես երիտասարդական աշխատող՝ ես ուրախ էի նկատել, որ Փիթերն այդքան ներգրավված էր բոլոր միջոցառումներում: (Գովում է երիտասարդական աշխատողի կողմից Փիթերի ինքնագնահատման մեջ)

Թող մնա՞, թե՞ գնա

Թող մնա

Հիանալի է: Գիտակցելը, թե ինչպես եք ավելի լավ սովորում, ձեզ ավելի լավ սովորող է դարձնում: Եվ դառնալով ավելի լավ սովորող, դուք միշտ ավելին կսովորեք: Դա կարողությունների զարգացման դրական պարույր է:

Թող մնա

Ձեր ինքնագնահատականը չպետք է վերաբերի միայն ձեր փորձին միջոցառման ընթացքում: Այն, ինչ դուք սովորել եք նախապատրաստման և հետագա գործընթացում, հավասարապես կարևոր է, այնպես որ հիշեք նշել այդ մասին:

Թող գնա

Սա հիանալի նորություն է, բայց դա չի վերաբերում որևէ ուսումնական ասպեկտի:

Թող գնա

Եթե դուք չեք հանդիսանում ինքնագնահատման օրինական սեփականատերը, ինչդրում ենք գերծ մնալ դրանում գրելուց: Դա ձերը չէ: Դա անելը նման է ուրիշի համար անձնական օրագիր գրելուն: Դա պարզապես իմաստ չունի, այդպես չէ՞:

Նախադասություններ

Ես մասնակցեցի մի վարժության, որի ժամանակ պետք է դատարկեի մի բաժակ ջուր՝ առանց դրան դիպչելու: Ես փորձեցի անել դա ժապավենով, բայց չստացվեց: Այնուհետև ես այնուպես օգտագործեցի, բայց այն կտրեց բաժակը: Նոր բաժակի համար ես մի քանի պարան օգտագործեցի և կատարեցի առաջադրանքը: Սրա միջոցով ես շատ բան սովորեցի ծրագրերի կառավարման մասին:

Ֆասիլիտատորներն ասացին, որ կարևոր է ակտիվ լինել հասարակության մեջ, և ես համաձայն եմ նրանց հետ:

Այս ծրագրից հետո ես մոտիվացված էի ավելի շատ ֆրանսերեն սովորել, ուստի տուն վերադառնալուց հետո շաբաթական դասեր եմ վերցնում երկու ընկերներիս հետ միասին:

Մենք շատ բան սովորեցինք, բայց ես դրանք այժմ այդքան էլ լավ չեմ հիշում:

Թող մնա՞, թե՞ գնա

Թող գնա

Երբեմն, ոչ ֆորմալ ուսուցման և փորձառական ուսուցման միջավայրերում մենք շատ բան ենք սովորում խաղերից և միջոցառումներից: Այս միջոցառումների մանրամասն նկարագրությունը կարող է ակտուալ չլինել ընթերցողի համար: Ավելին, եթե վարժությունը սովորողին դրոշմ է մտածել այլ ավելի բարդ հասկացությունների մասին (օրինակ՝ ծրագրերի կառավարում), կարևոր է ցույց տալ միջոցառման ու թեմայի միջև կապը, ինչպես նաև, թե ինչպես է սովորողը մտորել այդ թեմայի շուրջ: Հակառակ դեպքում դժվար է հասկանալ, թե ինչպես է մեկ բաժակ ջրով վարժությունն օգնել սովորողին զարգացնել ծրագրի կառավարման հմտությունները:

Թող գնա

Կարևոր ոչ թե այն է, թե ում հետ եք համաձայն, այլ այն, թե ինչին եք հավատում: Այս դեպքում կարող եք ձևակերպել այնպես. «Ես սովորեցի, որ կարևոր է ակտիվ լինել հասարակության մեջ, քանի որ...»

Թող մնա

Ձեր ուսումնական ճամփորդությունը չի ավարտվում, երբ վերադառնում եք տուն: Եթե շարունակել եք ուսումնասիրել մի թեմա, որը ծրագրի մաս է եղել, սա ցույց է տալիս, որ կարող եք իրականացնել ձեր ուսումնական նպատակները: Սա ուժեղ հմտություն է: (Ի դեպ, եթե չգիտեք, թե որտեղ տեղադրել սա, դիտարկեք «Սովորել ինչպես սովորել» վերնագրով վանդակը):

Թող գնա

Ինքնագնահատումը ոչ թե «Մեր», այլ «Ձեր» մասին է: Բացի դրանից, իմաստ չունի գրել այն բաների մասին, որոնք չեք հիշում, այդպես չէ՞:

Նախադասություններ

Իմ ընկեր Փիթերը, ով նույնպես մասնակցում էր այս միջոցառմանը, շատ նոր պարային քայլեր սովորեց:

Ես բարելավել եմ իմ ակտիվ լսելու հմտությունները՝ մասնակցելով այս թեմայի շուրջ երկու սեմինարի և վարժվելով գործընկերներին հետ: Ես ավելի ինքնավստահ դարձա՝ օգտագործելով ակտիվ ուսուցման տեխնիկաները: Մյուս մասնակիցները նշեցին, որ նկատել են իմ բարելավումները:

Մինչ այս ծրագիրը ես շատ բան չգիտեի մարքեթինգի մասին, բայց ես մասնակցեցի այդ թեմայով դասընթացի, և դա իսկապես օգնեց ինձ ավելի լավ հասկանալ այն: Այնուամենայնիվ, ես դեռ պետք է վարժվեմ այդ ոլորտում: Ընտրվեմ, որ շուտով կունենամ այդ հնարավորությունը:

Թող մնա՞, թե՞ գնա

Թող գնա

Այն, ինչ Փիթերը սովորել է, պետք է լինի իր ինքնագնահատման մեջ, ոչ թե ձեր: Այդ պատճառով այս նախադասությունը պետք է գնա: Այնուամենայնիվ, եթե հաջորդ նախադասությունն է՝ «Եվ դա ինձ դրդեց նույնպես սկսել պարել: Ես այժմ պարում եմ շաբաթը երեք անգամ և ամեն շաբաթ ելույթ ունենում»: Այս դեպքում այդ նախադասությունն օգտագործելը տեղին կլինի... այդպես չէ՞:

Թող մնա

Այս մեկը հաղթող է: Դուք բացատրում եք, թե ինչ եք սովորել, ինչպես եք սովորել և ցույց տալիս ձեր զարգացման ապացույցներ: Շատ լավ է:

Թող մնա

Կիովին ընդունելի է ասել այն, ինչ նախկինում չգիտեիք կամ նույնիսկ այն, ինչ դեռ չեք հասցրել անել: Դա ցույց է տալիս, որ դուք կարող եք գնահատել ձեր ուսուցման կարիքները, և դա արժեքավոր հմտություն է:

Նախադասություններ

Իմ սենյակակիցը շատ բարձր խոնկացնում էր: Ուստի, քնելու համար ես ստիպված էի պատկերացնել, որ ծովագնացության եմ, իսկ դա Ատլանտյան օվկիանոսի ձայնն է:

Թիմը հիանալի աշխատանք կատարեց և միշտ պատրաստ էր օգնել անհրաժեշտության դեպքում:

Վարդերը կարմիր են: Մանուշակները կապույտ: Սովորեցի անզիական պոեզիա: Ինձ համար դա էր նորույթ:

Այս թեմայի մասով իմ ուսուցման գործընթացը լվացքի մեքենայի նման էր: Երբեմն այն շատ արագ էր թվում, և ես զլխապտույտ էի զգում այդքան շատ տեղեկություններից, բայց այժմ զգում եմ, որ ազատվել եմ որոշ հին գաղափարներից և ունեմ մի քանի նոր, վառ և գունագեղ գաղափարներ:

Թող մնա՞, թե՞ գնա

Թող գնա

Եթե չեք օգտագործելու այս ինքնագնահատումը սթենդ-ափ կատակերգուի աշխատանք ստանալու համար, պետք է կենտրոնանաք ձեր ուսումնական ճամփորդության վրա, այլ ոչ թե քնելու հետ կապված դժվարությունների:

Թող գնա

Կեցցե՛ն նրանք: Կեցցե՛ք դուք: Կեցցե՛ն բոլորը: Բայց ձեր ինքնագնահատումը ոչ թե թիմի, այլ ձեր մասին է:

Թող մնա

Մի փոքր ստեղծագործական մոտեցումը կարող է օգտակար լինել ինքնագնահատման մեջ: Կարևոր է միայն, որ այն կիրառելի լինի աշխատանքի դիմելիս կամ կրթական միջավայրում և հստակ ներկայացնի ձեր սովորածը:

Թող մնա

Դուք կարող եք օգտագործել պատկերներ և փոխաբերություններ՝ ձեր ուսումնական ճամփորդությունն ավելի լավ բացատրելու համար: Պարզապես ուշադիր եղեք, որ չմոլորվեք սյուժեում: Կարելի է օգտագործել ձեր երևակայությունը, բայց հիշեք, թե կոնկրետ ինչ եք սովորել և ինչպես:

2. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԵՎ ՀՆԱՐՔՆԵՐ

ԱՇԽԱՏԵՔ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎՐԱ

Անձին ինքնագնահատում գրելու հարցում արդյունավետորեն աջակցելու համար կարևոր է հասկանալ, թե ինչպիսի հմտություններ ունի նա: Որոշ երիտասարդներ հիանալի գրողներ են և պարզապես պետք է հասկանան, թե ինչի մասին պետք է գրեն: Մյուսները կարող են հստակ իմանալ, թե ինչ են սովորել, բայց չունենան համապատասխան բռնապաշար կամ բավականաչափ լավ քերականական գիտելիքներ դանկարագրելու համար: Մասնակիցների գրավոր հմտությունների մակարդակը հասկանալը կօգնի ձեզ ընտրել համապատասխան մեթոդները և որոշել, թե ինչպիսի աջակցություն կարող եք տրամադրել: Լավ մեկնարկային կետ է մասնակիցներին պարզապես հարցնելը, թե, նրանց կարծիքով, ինչ կարող են արդեն անել, որոնք են նրանց հիմնական մարտահրավերները գրելու գործընթացում և որ տեսակի աջակցությունը կարող է օգտակար լինել նրանց համար:

ԻՆՉՈՒ՞ ԵՆՔ ՍԱ ԱՆՈՒՄ

Բացի իմանալուց, թե ինչ աջակցության կարիք ունեն ձեր մասնակիցները, կարևոր է նաև իմանալ, թե ինչի համար է օգտագործվելու նրանց Youthpass-ը: Արդյո՞ք այն միայն ինքնագնահատման համար է: Արդյո՞ք այն կօգտագործվի աշխատանքի տեղավորման նպատակով: Եթե պարզեք, թե մասնակիցները ինչ նպատակով են օգտագործելու այս փաստաթուղթը, կարող եք միասին որոշել, ինչ գրել և ինչ ոճով: Այս մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս բաժին III (Ինչպես աջակցել Youthpass ինքնագնահատմանը):

ԱՌԱՋ ՀԱՐԺՎԵՔ ՔԱՅԼ ԱՌՔԱՅԼ: ԴԱՏԱՐԿ ԷՋԸ ՀԱՏ ՎԱԽԵՑՆՈՂ Է

Այլուս Դամբլդորը՝ Լոգվարթս դպրոցի տնօրենը, ուներ Հիշողությունների հորձանուտ՝ մի թաս, որում նա կարող էր հավաքել իր մտքերը փայտիկի պարզ շարժումով: Մենք բոլորս կցանկանալիք, որ ինքնագնահատական գրելը այդքան պարզ լիներ: Իրականում, ամենևին էլ այդպես չէ. դա ավելի շատ նման է տուն կառուցելուն: Նախքան շինարարական նախագիծը սկսելը, լավ գաղափար է նախապատրաստել տեղանքը և ընտրել ձեր գործիքները: Նույնը վերաբերում է ինքնագնահատական գրելուն: Դուք պետք է հասկանաք, թե որն

Է ինքնազնահատման նպատակը և ինչ տարրեր պետք է լինեն դրանում: Եթե նախ ժամանակ հատկացվի պատրաստվելու համար, երիտասարդները կարող են քայլ առ քայլ կազմել իրենց ինքնազնահատումը և ավելի հեշտ արտահայտել ոչ միայն պարզ, այլ նաև բարդ մտքերը: Գրելու գործընթացի նախապատրաստման մասին իմանալու համար կարդացեք II բաժինը (Ուսուցում, մտորում և կարողությունների զբաղում):

Ո՞Վ Է ՎԱԽԵՆՈՒՄ ՈՒԹ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Youthpass-ի ինքնազնահատման ձևի ութ առանցքային կարողությունները սահմանվել են, որպեսզի օգնեն մասնակիցներին իրենց ուսուցման արդյունքները դասակարգել ըստ ընդհանուր ճանաչված կատեգորիաների: Ոմանց այս վանդակներն օգտագործելն իսկապես օգնում է, մինչդեռ մյուսների համար սա դժվարեցնում է գործընթացը: Մեր մոտեցումը պարզ է. օգտագործեք ձևաթուղթը, եթե դա ծառայում է ձեր սովորողների լավագույն շահերին: Եթե սա չափազանց բարդ է թվում, և դուք ժամանակ չունեք բացատրելու, թե ինչ է նշանակում յուրաքանչյուր կարողություն, մասնակիցները կարող են օգտագործել միայն կարողության որոշ ոլորտներ: Որոշ մասնակիցներ կարող են ընտրել օգտագործել միայն «հատուկ կարողությունները», «առաջադրանքի հետ կապված կարողությունները» կամ «մասնագիտական կարողությունները» (կախված իրենց ծրագրի տեսակից), և ընդհանրապես չօգտագործել առանցքային կարողությունները: Այս դեպքերում չօգտագործված կարողությունները չեն հայտնվի վերջնական փաստաթղթում: Տեսնելու համար օրինակներ այն մասին, թե ինչ գրել (չգրել) ինքնազնահատման ժամանակ, ուսումնասիրեք «Թող մնա՞, թե՞ զնա» գործիքի առձեռն նյութը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՐԵՔ ՁԵՐ ԼԵՉՎԻՆ

Ինքնազնահատում գրելու համար անհրաժեշտ է ընտրել ճիշտ բառեր և տեքստի հստակ կառուցվածք, որպեսզի կարողանաք ցուցադրել ձեր կարողություններն աշխատանքի դիմումում կամ աշխատանքային հարցազրույցում: Որպես երիտասարդին կամ խմբին այս գործընթացում աջակցող անձ, կարևոր է, որ դուք ծանոթ լինեք այդ գործընթացներին կամ դրանց մասնակցած, կամ առնվազն իմանաք, թե ինչպես են դրանք աշխատում: Կան բազմաթիվ կայքեր, որտեղ ներկայացված են խորհուրդներ և նույնիսկ օրինակներ այն մասին, թե ինչպես շփվել մասնագիտական համատեքստում, գրել ներկայացում կամ մասնակցել աշխատանքային հարցազրույցի: Թեև սա չպետք է պատճենվի և տեղադրվի սովորողի ինքնազնահատման մեջ, այն կարող է ոգեշնչել ձեզ ու նրանց՝ զարգացնելու իրենց սեփական ինքնազնահատումն ավելի համապատասխան ձևով:

«ՍՈՎՈՐԵԼ»-Ը ՇԱՏ ՀԱՄԵՍՏ ԲԱՌ Է

Կամ միգրացիոն շատ հնչել: Անշուշտ, շատ հեշտ է ընկնել թակարդը, երբ օգտագործում եք այս բառը՝ ձեր կարողությունները նկարագրելու համար: Հիշեցրեք ինքնեզուրկ ձեզ և սովորողներին, որ գրելն այն մասին, թե ինչ են նրանք ուսումնասիրել, ինչով են հետաքրքրվել, ինչի մասին են մտորել, ինչ են քննարկել, ինչու են ձախողվել և այլն, նույնքան կարևոր է, որքան (իրենց կարծիքով) իրենց իրական սովորածի մասին գրելը: Խրախուսեք սովորողներին հիշել այս բոլոր մանրամասներն ու բացատրել իրենց ուսուցման գործընթացը: «Հուշաթերթիկ» վարժությունը կարող է օգտակար լինել ձեր մասնակիցների ուսումնական ճամփորդության մասին խոսելու, նոր ուղիներ բացահայտելու համար:

ՆԵՐԿԱՅԱՅՐԵՔ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ

Ինչպես փաստաբանը դատարանում, այնպես էլ սովորողը պետք է համոզի իր ընթերցողներին հավատալ իր պնդումներին: Օգնեք երիտասարդներին ապացույցներ ներկայացնել իրենց կողմից զարգացված կարողությունների մասին՝ բերելով այնպիսի իրավիճակների հստակ օրինակներ, երբ նրանք կատարել են որոշակի առաջադրանք, դրսևորել որոշակի հմտություններ կամ ցուցադրել որոշակի արժեք: STAR մոտեցումը կարող է օգտակար լինել այս առումով: Իմացեք ավելին դրա մասին «Ինքնագնահատման ոճերի օրինակներ» բաժնում՝ 45-46 էջերում, կամ օգտագործեք «Ցույց տվեք ձեր STAR-երը (աստղերը)» վարժությունը:

ԴԱՐՁՐԵՔ ԳՈՐԾՆԹԱՅԸ ՀԱՃԵԼԻ

Ձևաթղթում բառեր գրելն, հավանաբար, ձեր մասնակիցների համար հաճելի զբաղմունք չի լինի, ուստի վարժությունը վերածեք պիցցայի երեկոյի կամ առաջարկեք այն անել, օրինակ, լողափին: Գրելու գործընթացի ցանկացած քայլ ավարտելուց հետո նշեք դա: Ավարտե՞լ եք պարբերությունը: Հատուկ երաժշտություն միացրե՞ք: Գրե՞լ եք ձեր սխալների մասին: Կենաց ասե՞ք: Կարողացե՞լ եք անցնել ճանապարհի կեսը: Վեր կացե՞ք և պարե՞ք: Փոքր հաղթանակները տոնելը շատ ավելի մոտիվացնող է, քան միայն վերջում տոնելը, քանի որ հնարավոր է, որ այդ դեպքում պարզապես տոնում եք միջոցառման ավարտը:

ՄԻ ԳԵՐԱԿԱՏԱՐԵՔ

Եվ վերջում, հիշեք, որ այստեղ նպատակն այն է, որ ձեր սովորողները գրեն օգտակար ինքնագնահատական, որով կհպարտանան: Իմաստ չկա այս առաջադրանքն այնքան ճշող դարձնել, որ այն դառնա դեմոստրիկացնող և անհանգստության աղբյուր: Ճանաչեք ձեր ու մասնակիցների սահմանները: Ոչ դուք պետք է լինեք կարիերայի հարցերով խորհրդատու, ոչ էլ այդ երիտասարդը պետք է կարիերա կառուցի՝ մասնագիտական ինքնագնահատականներ գրելով:



3. ԱՅԼ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ՝ ԱՅՍ ԹԵՄԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՉԱՄԱՐ

Արդյո՞ք հավանում եք թվային ռեսուրսները: Արդյո՞ք դուք այն մասնակիցն եք, ով յուրաքանչյուր ծրագրի ավարտը համարում են նոր ճանապարհորդության սկիզբ: Հիանալի է: Մենք չենք ցանկանում, որ դուք դատարկաձեռն մնաք, ուստի ստորև մի քանի ռեսուրսներ են, որոնք կարող են օգտակար լինել ձեզ համար այդ ճանապարհին, անկախ այն բանից, թե ինչ ուղի եք ընտրում:

**Պարզապես շարունակե՛ք իադալ,
շարունակե՛ք կարդալ և
ստեղծե՛ք նոր ռեսուրսներ:**

ՇԱՐՈՒՆԱԿԵՔ ԽԱՂԱԼ

Ստորև ներկայացված են խաղերի կամ խաղի վերածված հարթակների մի քանի օրինակներ, որոնք կարող եք օգտագործել՝ ձեր մասնակիցների հետ ուսումնական նվաճումներն ուսումնասիրելու համար:

Սահմաններից դուրս ուսուցման քարտեր

- <https://www.youthpass.eu/da/youthpass/downloads/learning-out-of-the-box/>

Բաց անվանաքարտեր

- <http://openbadges.org>

ՇԱՐՈՒՆԱԿԵՔ ԿԱՐԴԱԼ

Ցանկանու՞մ եք ավելի խորը դիտարկել Youthpass-ը: Ահա մի քանի հրատարակումներ ուսումնասիրելու համար:

Մանրամասն՝ Youthpass-ի մասին

- <https://www.youthpass.eu/en/publications/youthpass-unfolded/>

Երես առ երես՝ Աջակցություն առկա ուսուցմանը

- <https://www.youthpass.eu/en/publications/handbooks/>

Պարծենալու ժամանակն է՝ Հետազոտական զեկույց

- <https://www.youthpass.eu/en/publications/others/>

Youthpass-ը ԲՈՒՈՐԻ համար: Հատուկ կարիքներ ունեցող երիտասարդների հմտությունների ճանաչում

- <https://www.salto-youth.net/downloads/4-17-1949/YouthpassForAll.pdf>

Երիտասարդական կազմակերպություններում ոչ ֆորմալ կրթության՝ երիտասարդների աշխատունակության վրա ազդեցության վերաբերյալ ուսումնասիրություն

- http://issuu.com/yomag/docs/reportnfe_print

ՀԱՐՈՒՆԱԿԷՔ ՍՏԵՂԾԵԼ


Եթե չեք կարող դադարել ստեղծել նոր գործիքներ, ահա մի քանի առցանց ռեսուրսներ, որոնք կօգնեն ձեզ:

Օգտագործեք պատկերներ

Ներկայացրեք գաղափարները տեսողականորեն: Պատկերացրեք անհատական կամ խմբակային ուսուցման գործընթացը: Ուսումնասիրեք Youthpass-ի օգտագործումը յուրաքանչյուր մասնակցի համար կամ ներկայացրեք նոր ձեռք բերված կարողությունները: Համացանցը լցված է ազդեցիկ պատկերներ ու տեղեկատվական գրաֆիկա ստեղծելու գործիքներով: Ահա մեր ընթացիկ ընտրյալներից մի քանիսը՝

- <http://easel.ly>
- <https://www.canva.com>
- <http://piktochart.com>

www.easel.ly կայքից հարմարեցված ձևանմուշ, որը ներկայացնում է երիտասարդական փոխանակման համար ինքնագնահատման գործիք



Օգտագործեք մտքի քարտեզներ

Մտքի քարտեզները կարող են օգնել մեզ «տեսնել» մեր մտքերն ավելի կառուցվածքային ձևով, ինչը կարող է շատ ավելի դյուրին դարձնել ուսումնական արդյունքների ձևակերպումը: Դուք կարող եք դրանք օգտագործել ձեր մասնակիցների հետ միասին՝ որպես ուսումնական նպատակների և արդյունքների քարտեզագրման գործիք, կամ պարզապես թվարկելու համար Youthpass-ի բոլոր տարբեր կիրառությունները: Դրանք կարող են օգտագործվել առանձին կամ համատեղ: Իհարկե, մտքի քարտեզ կազմելու համար ձեզ հարկավոր չէ առցանց գործիք, բայց եթե նախընտրում եք էկրանը, քան թուղթը, ապա այս կայքերը ձեզ համար են:

- <http://www.mindomo.com>
- <https://www.mindmeister.com>
- <http://mindmapfree.com>

Օգտագործեք պատմություններ

Կան պատմություններ, որոնք պետք է պատմել: Գուցե ձեր մասնակիցներից մեկը միշտ երագել է գիրք գրել, կամ պարզապես ցանկանում է բլոգ վարել: Այս գործիքները կօգնեն նրան բարելավել իր պատմությունները և ցանկացած ուսումնական փորձ փոխակերպել զավեշտալի ճամփորդության:

- <https://storybird.com>
- <http://www.dipity.com>
- <http://www.storyboardthat.com>
- <https://www.storyjumper.com/main/help>

www.storyboardthat.com-ի միջոցով ստեղծված մուլտֆիլմի հարմարեցված օրինակ՝ որպես կամավորական փորձի ինքնազնադատման գործիք.

ԱՆՅՅԱԼ ՏԱՐԻ ԵՄ ՓՆՏՐՈՒԻՄ ԷՒ ՈՒՍՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ, ՈՒՍՏԻ ԽՆԴԻԵՑԻ ՈՒՂՂՈՐԴՈՒԻՄ ԻՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻՑ:

ԵՄ ԳՆԱՅԻ ԲՈՒՂԱՐԻԱ ԵՎ ԱՇԽԱՏԵՑԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԿՅԱՆՔԻ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԱՐԳԱՑՆԵԼՈՒ ԾՐԱԳՐՈՒՄ: ԱՅՐ ԾՐԱԳՐԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԵՄ ՇԱՏ ԲԱՆ ՍՈՎՈՐԵՑԻ ԽՄԲԱՅԻՆ ԱՋԱԿՑՄԱՆ ՄԱՍԻՆ:

ԱՅԺՄ, ԵՍ ՀՈՒՍՈՎ ԵՄ, ՈՐ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ ԿԿԻՐԱՌԵՄ ԻՄ ՆՈՐ ՁԵՌՔ ԲԵՐԱՏ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՄ ԱՊԱԳԱ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ:



Օգտագործեք ֆիլմեր

Օգտագործելով լուսանկարներ կամ մուլտֆիլմեր, դուք կարող եք հիանալի տեսանյութեր պատրաստել հեշտ օգտագործվող գործիքների միջոցով: Գրեք ուսումնական ճամփորդության սցենարը. թող սովորողները ստեղծեն իրենց սեփական մուլտֆիլմերը կամ նկարահանեն ֆիլմ կարողության «կյանքի» մասին: Պարզապես շարունակեք զարգացնել զարգացողները: Լույս, տեսախցիկ, սկետցի՛նք:

- <http://www.powtoon.com>
- <http://animoto.com>
- <http://www.videoscribe.co>

Օգտագործեք զբաղվածության կայքեր

Սկսած How-to-Make-a-CV (Ինչպես կազմել ինքնակենսագրական) վեբինարներից մինչև կարիերայի վերաբերյալ խորհուրդներով բլոգեր. զբաղվածությունը օրվա թեման է: Կան բազմաթիվ կայքեր, որտեղ ներկայացված են հիանալի հոդվածներ, ձեռնարկներ, հավելվածներ և այլ ռեսուրսներ, որոնք կոգեչնչեն ձեզ և ձեր մասնակիցներին մասնագետի նման շարունակելու ինքնագնահատումը:

- <http://www.youthcentral.vic.gov.au/jobs-careers>
- <https://www.themuse.com/advice>
- <http://www.theguardian.com/careers>
- <http://www.skillsforemployment.org/>
- <http://www.workcoachcafe.com>
- <https://www.ivyexec.com>
- <https://www.visualcv.com>

Օգտագործեք Youthpass-ի կայքը

youthpass.eu կայքն անցանց տուն է, որտեղ ձեզ միշտ ուրախությամբ սպասում են: Այն առաջարկում է քայլ առ քայլ հրահանգներ, ՀՏՀ և տեխնիկական տեղեկություններ, ինչպես նաև որոշ օգտակար խորհուրդներ այն մասին, թե ինչպես աջակցել երիտասարդներին իրենց ուսումնական արդյունքները զրելու հարցում: Ուսումնասիրեք այն:

- <https://www.youthpass.eu>

Ինչ միջոց էլ ընտրեք, հիշեք՝ ամենաթանկ ռեսուրսը սովորելը շարունակելու ձեր ցանկությունն է:

Բարի ճանապարհորդություն



Վ ՇԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ANITA SILVA

Անիտա Սիլվան պորտուգալացի միջազգային դասընթացավար և խորհրդատու է: Նա ոչ ֆորմալ կրթության մոտեցումների մասով մեծ փորձ ունի միջազգային երիտասարդական աշխատանքի, բարձրագույն կրթության, համայնքային աշխատանքի ոլորտներում և նույնիսկ կորպորատիվ հատվածում: Նա Team MAIS-ի տնօրենն է, որը խորհրդատվական ընկերություն է, որն օգնում է կազմակերպություններին նորարարական ու համագործակցային մեթոդների միջոցով ուսուցումը մի քայլ առաջ տանել: Նա ունի ստեղծագործականության ու նորարարության մագիստրոսի կրչում և սիրում է օգնել մարդկանց դուրս գալ իրենց սահմաններից: Որպես համայնքային ուսուցանող՝ Անիտան զբաղվում է մի քանի սոցիալական նախագծերով և հանդիսանում է Clowncare ՀԿ-ի հիմնադիրը, որը պրոֆեսիոնալ ծաղրածուներ է տանում տարեցների խնամքի կենտրոններ:

DARKO MARKOVIĆ

Դարկո Մարկովիչը Բելգրադից է, Սերբիա: Նա ֆրիլանս դասընթացավար, քույզ և խորհրդատու է: Նրա ներգրավվածությունը քաղաքացիական հասարակության և երիտասարդական ոլորտներում սկսվեց 1990-ականների կեսերին՝ ի պատասխան Բալկաններում խաղաղ գործընթացին աջակցելու և փիլրուն ժողովրդավարության բոլոր ոլորտներում քաղաքացիական մասնակցությունն ամրապնդելու անհրաժեշտությամբ: Սերբիայում իր աշխատանքի շրջանակներում նա մեծ ներդրում է ունեցել երկրում երիտասարդական աշխատանքի, երիտասարդական քաղաքականության և ոչ ֆորմալ կրթության զարգացման գործում: 2000-ականների սկզբին նա ներգրավվել է միջազգային երիտասարդական աշխատանքի ոլորտում՝ աշխատելով սկզբում Եվրոպայի խորհրդի հետ, այնուհետև ԵՄ երիտասարդական ծրագրում: Այդ ժամանակից ի վեր նա աշխատել է ավելի քան 30 երկրներում թիրախային խմբերի լայն շրջանակի հետ, այդ թվում՝ երիտասարդական աշխատողների, դասընթացավարների, մենթորների, քույզների, ուսուցիչների, քաղաքականություն մշակողների, բիզնես առաջնորդների և այլոց, հաճախ աջակցելով ռազմավարական գործընթացներին: Նրա հետաքրքրության և փորձի հիմնական ոլորտներից են առաջնորդության զարգացումը, համակարգային փոփոխությունները, կազմակերպչական վերափոխումները, միջմշակութային կարողությունները և ոչ ֆորմալ ուսուցման ավելի լավ ճանաչումը: Նա Youthpass խորհրդատվական խմբի անդամ է և գրել է մի քանի ձեռնարկներ ու հրապարակումներ:

PAUL KLOOSTERMAN

Փոլ Թրոստերմանը երկար տարիներ աշխատել է միջազգային կրթական ոլորտում որպես դասընթացավար, խորհրդատու, հետազոտող և գրող: Նա ներգրավված է եղել և դեռևս ներգրավված է դասընթացավարների, ուսուցիչների, քաղաքականություն մշակողների և երիտասարդական աշխատողների վերապատրաստման դասընթացներում: Վերջին տարը տարիների ընթացքում նա հիմնականում կենտրոնացել է «Սովորել՝ ինչպես սովորել» կարողության վրա: Նա «Ձեռնարկ ֆախիլատորների համար. Սովորել՝ ինչպես սովորել գործնականում» և «Սովորել՝ ինչպես սովորել. միջազգային տեսակետեր տեսականից և գործնականից» աշխատանքների համահեղինակ է: Նա Youthpass խորհրդատվական խմբի անդամ է, որը պատասխանատու է երիտասարդական եվրոպական ծրագրերում Youthpass սխեմայի իրականացման համար: Վերջին տարիներին նա ներգրավված է եղել տարբեր հետազոտական նախագծերում, որոնք վերաբերում են «Սովորել՝ ինչպես սովորել» և «Ինքնաուղղորդվող ուսուցում» թեմաներին երիտասարդական աշխատանքի և վերապատրաստման ոլորտներում:



VI

ՍԱԼՏՈ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԵՎ YOUTHPASS-Ի ՄԱՍԻՆ

ՍԱԼՏՈ վերապատրաստման և համագործակցության ռեսուրսային կենտրոնն աջակցում է Եվրոպական հանձնաժողովին և Եվրոպական երիտասարդական ծրագրերի ազգային գործակալություններին Youthpass ռազմավարության ու Եվրոպական վերապատրաստման ռազմավարության (ԵՎՌ) մշակման և իրականացման գործում: ՍԱԼՏՈ վերապատրաստման և համագործակցության ռեսուրսային կենտրոնի նպատակն է բարելավել երիտասարդական ոլորտում վերապատրաստման ռազմավարությունների և միջոցառումների որակը, ինչպես նաև երիտասարդական աշխատանքում ոչ ֆորմալ ուսուցման ճանաչումը ամբողջ Եվրոպայում: Ռեսուրսային կենտրոնը մշակում է Youthpass-ը Եվրոպական հանձնաժողովի անունից և նպաստում ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման ու երիտասարդական աշխատանքի ճանաչմանը՝ համակարգելով վերապատրաստման միջոցառումները և տրամադրելով այս թեմաներին առնչվող ուսումնական նյութեր: Մշակված ռազմավարությունների, գործընթացների, միջոցառումների և գործիքների միջոցով Ռեսուրսային կենտրոնը նպաստում է դասընթացավարների, երիտասարդական աշխատողների և Ազգային գործակալությունների անձնակազմի կարողությունների զարգացմանը:

Youthpass-ը երիտասարդական աշխատանքի ու համերաշխության միջոցառումներից բխող արդյունքները գրանցելու և ճանաչելու գործիք է: Այն հասանելի է Եվրոպական երիտասարդական ծրագրերի կողմից ֆինանսավորվող ծրագրերի համար: Այն Եվրոպական հանձնաժողովի ռազմավարության մի մասն է, որի նպատակն է նպաստել ոչ ֆորմալ ուսուցման ճանաչմանը, քաղաքականության գործնական կիրառմանը և գործնականի՝ քաղաքականության մեջ ներառմանը:

Այս հրապարակմանը նախապատրաստվելու ընթացքում, ՍԱԼՏՈ վերապատրաստման և համագործակցության ռեսուրսային կենտրոնը և «Էրազմուս+ Երիտասարդները գործելիս» հարցերով զբաղվող Բուլղարիայի ազգային գործակալությունն անցկացրել են սեմինար «Օրագրից՝ հավաստագիր» խորագրով, որի ընթացքում քննարկվել են հրատարակման համատեքստն ու զարգացումը և փորձարկվել մի քանի մեթոդներ: Սեմինարի մասնակիցների կարծիքները մեծապես նպաստել են այս Ձեռնարկում ներառված աշակցման մեթոդների և խորհուրդների վերջնական ընտրությանը:

Հրատարակել է՝

JUGEND für Europa/SALTO Training & Cooperation Resource Centre,
Godesberger Allee 142 – 148, 53175 Bonn, Germany

Հրատարակման համար պատասխանատու՝

Hans-Georg Wicke

Համակարգում և խմբագրում

Kristiina Pernits pernits@jfemail.de

Eda Bakir, bakir@jfemail.de

Gisele Evrard Marković, gisele@jfemail.de

Հեղինակներ

Anita Silva, info@clowncare.pt

Darko Marković, darko@innside.co.rs

Paul Kloosterman, paul@pameambro.org

Սրբագրում

Karin Walker, Bonn

Դասավորություն և նկարագրող

Mandy Krühne, www.kreativraum.de

Օրինական ներկայացուցիչ

IJAB՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջազգային երիտասարդական ծառայություն Վերարտադրումը և օգտագործումը ոչ առևտրային նպատակներով թույլատրվում է, եթե նշվում է աղբյուրը՝ www.youthpass.eu.

Այս զեկույցը հրատարակվել է 2019 թվականի հոկտեմբերին:

Սույն փաստաթուղթը պարտադիր կերպով չի արտահայտում Եվրոպական հանձնաժողովի կամ ՍԱԼՏՈ վերապատրաստման և համագործակցության ռեսուրսային կենտրոնների, կամ դրանց հետ համագործակցող կազմակերպությունների պաշտոնական տեսակետերը:

Հայերեն թարգմանություն

Այս հրատարակումը համաֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «ԵՄ-ն հանուն երիտասարդների. երիտասարդության զբաղվածություն և ձեռներեցություն» ծրագիրը և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Թարգմանությունը՝

Բելլա Մխիթարյանի

Սրբագրումը՝

Արվինե Դավոյանի



Գերմանիայի Դաշնային Հանրապետության կողմից



Bundesministerium
für Familie, Senioren, Frauen
und Jugend



Central project
management
agency



EASTERN EUROPE
& CAUCASUS

Erasmus+
Enriching lives, opening minds.